



Funded by  
the European Union

# ՔՀԿ չափիչ ՔՀԿ նպաստավոր միջավայրի մոնիտորինգ

---

## Հայաստան 2024 Հետազոտության զեկուլյց Երևան





Ֆինանսավորվում է  
Եվրոպական միության կողմից



European Center for  
Not-for-Profit Law



ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ  
ԻՆՅԵՐՆԵՅՆԸ  
հասկանալիություն կենտրոն

## ՔՀԿ չափիչ 2024 Հայաստան

### Չեկոյցի ժամանակահատված՝ 2024 թվականի հունվար- նոյեմբեր

Հետազոտական թիմ՝ Տաթևիկ Մարգարյան (հիմնական հետազոտող), Անուշ Հակոբյան (իրավաբան), Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, «ՔՀԿ չափիչ» ծրագրի փորձագիտական խումբ՝ Արփինե Հակոբյան, «ՀԿ կենտրոն» ՔՀՁ ՀԿ, Էլինա Գյուրջյան, Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, Տաթևիկ Ղարիբյան, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) առաքելությունն է կոռուպցիան նվազեցնելու ու ժողովրդավարությունն ամրապնդելու ճանապարհով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում:

Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն (ECNL) հիմնադրամը քաղաքացիական հասարակության վրա ազդող քաղաքականությունների և օրենքների ոլորտում առաջատար ռեսուրսային և հետազոտական կենտրոն է Եվրոպայում: ECNL-ն ստեղծում է գիտելիք, իրավագործում գործընկերներին և օգնում ստանդարտներ սահմանել քաղաքացիական ազատությունների ձևավորման, պաշտպանության և ընդլայնման համար:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում զեկոյցի մշակման աշխատանքներին իրենց ներդրումն ունեցած բոլոր աջակիցներին, ներառյալ «ՔՀԿ չափիչ» ծրագրի փորձագիտական խմբին, Խորհրդատվական խորհրդի անդամներին, հարցազրույցներին մասնակցած փորձագետներին, ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցներին, ECNL-ի թիմին:

*«ՔՀԿ չափիչ՝ ի գործ» ծրագիրն իրականացվում է «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոնի» (ECNL) հիմնադրամի և իր գործընկերների՝ Հայաստանում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի, Կրաստանում «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի», Մոլդովայում «Պրոմո-Լեքս» ընկերակցության, իսկ Ուկրաինայում «ISAR Ednannia» կազմակերպության կողմից:*

Այս փաստաթուղթը մշակվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատու են միայն հեղինակները, և այն պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական Միության դիրքորոշումը:

© Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն և Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2025: Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են:



csometer

2024 Հայաստան

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ</b>	<b>4</b>
<b>I. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ</b>	<b>5</b>
<b>II. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՎԵՐՈՎ</b>	<b>15</b>
<b>III. ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ</b>	<b>16</b>
3.1 ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	16
3.2 ՀԱՎԱՍԱՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԶ	24
3.3 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ	27
3.4 ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	31
3.5 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԶ	40
3.6 ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	56
3.7 ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆԶ	62
3.8 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	68
3.9 ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ	74
3.10 ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՔՀԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	82
3.11 ԹՎԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	87
<b>IV. ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>96</b>
<b>V. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>99</b>
<b>VI. ՀՂՈՒՄՆԵՐ</b>	<b>101</b>
<b>VII. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ</b>	<b>115</b>

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՅ	Ավելացված արժեքի հարկ
ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱԺ	Ազգային ժողով
ԱԳ	Արևելյան գործընկերություն
ԱՄ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՄ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԱՏՊԳ	Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն
ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական Միություն
ՉԼՄ	Չանգվածային լրատվամիջոց
ԹԻՅԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԼԳԲՏԻԶ+	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս, բվիր և այլն
ՀԱՊԿ	Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՊԵԿ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Պետռեգիստր	ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀՏ	Տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներ
ՓԼ/ԱՖ	Փողերի վճարում և ահաբեկչության ֆինանսավորում
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ECNL	Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն
SLAPP	Ռազմավարական հայցեր հանրային մասնակցության դեմ

# I. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

## Երկրի ընդհանուր իրավիճակը և քաղաքացիական հասարակության միջավայրին առնչվող հիմնական միտումները

2024 թվականին Հայաստանը շարունակեց կրել այն քաղաքական ու սոցիալական զարգացումների ազդեցությունը, որոնք տեղ գտան Արցախյան պատերազմի, Ադրբեջանի կողմից Արցախի տարածքի հետագա զավթման և Արցախի հայ բնակչության էթնիկ գտման հետևանքով<sup>1</sup>:

Հայաստանի հարաբերություններն Ադրբեջանի հետ և խաղաղության պայմանագրի շուրջ բանակցությունները մնում են հանրության ուշադրության կենտրոնում: Պատերազմի մշտական վտանգը, սահմանագծման ու սահմանազատման հարցերը, արցախցիների իրավունքները և մարդասիրական խնդիրները գերակշռում են քաղաքական խոսույթում: Մինևույն ժամանակ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ-ներ) շարունակել են իրենց աշխատանքը՝ աջակցելու արցախյան ընտանիքներին տնտեսական, սոցիալական և հոգեբանական դժվարությունների հաղթահարման, առողջապահական օգնություն ցուցաբերելու, ինչպես նաև միջազգային մակարդակով նրանց՝ հայրենիք վերադառնալու իրավունքի խթանման ուղղությամբ: Արցախում ստեղծված մի շարք ՔՀԿ-ներ 2023 թվականի ավարտին և 2024 թվականին վերագրանցվել են Հայաստանում<sup>2</sup>:

2024 թվականի ապրիլին ՀՀ կառավարությունը Տավուշի մարզում մեկնարկեց Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանների սահմանազատման գործընթացը<sup>3</sup>: Սահմանագծման հարցում հստակության բացակայությունը և սահմանամերձ գյուղերի անվտանգության չլուծված խնդիրները, ինչպես նաև 2020 թվականի պատերազմից հետո Հայաստանի կողմից մի շարք միակողմանի զիջումների հետ կապված հիասթափությունը հանգեցրին հանրության շրջանում զայրույթի ու լարվածության առաջացմանը<sup>4</sup>: Տավուշի մարզում սկսված բողոքի ցույցերը վերաճեցին համաժողովրդական շարժման, որը հայտնի դարձավ «Տավուշը հանուն հայրենիքի» անունով: Շարժումը ղեկավարեց արքեպիսկոպոս Բագրատ Գալստանյանը, ում երթը Տավուշից դեպի Երևան կրկնօրինակում էր 2018 թվականի թավշյա հեղափոխության

<sup>1</sup> 'Why Are There No Armenians in Nagorno-Karabakh?', Special Report 2024 («Ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղում հայեր չկան», հատուկ զեկույց), Freedom House, <https://freedomhouse.org/report/special-report/2024/why-are-there-no-armenians-nagorno-karabakh>.

<sup>2</sup> Ըստ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից ԹԻՂԿ հարցմանն ի պատասխան՝ 2024 թ. սեպտեմբերի 13-ին տրամադրված տեղեկատվության՝ Արցախի 16 ՔՀԿ ՀՀ-ում վերագրանցվել է գրանցման բնօրինակ փաստաթղթերի հիման վրա, սակայն ըստ ԹԻՂԿ տվյալների՝ մեծաքանակ արցախյան ՔՀԿ-ներ գրանցվել են որպես նոր կազմակերպություն:

<sup>3</sup> Մամուլի հաղորդագրություն Հայաստանի և Ադրբեջանի միջև պետական սահմանի սահմանազատման հարցերով պետական հանձնաժողովների ուղերորդ հանդիպման արդյունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, 19.04.2024, [https://www.mfa.am/en/press-releases/2024/04/19/8th\\_meeting/12606](https://www.mfa.am/en/press-releases/2024/04/19/8th_meeting/12606), 'Armenia Starts Land Handover To Azerbaijan' («Հայաստանը մեկնարկում է Ադրբեջանին տարածքներ հանձնելու գործընթացը»), Azatutyun.am, 23.04.2024, <https://www.azatutyun.am/a/32917519.html>:

<sup>4</sup> 'EXPLAINER: Azerbaijan border delimitation deal sparks protests in Armenia' («Ադրբեջանի հետ սահմանազատման պայմանավորվածությունը բողոքի ցույցեր է առաջացրել Հայաստանում»), Civilnet.am, 30.04.2024, <https://www.civilnet.am/en/news/773765/explainer-azerbaijan-border-delimitation-deal-sparks-protests-in-armenia/>.

ժամանակ կիրառված մարտավարությունը, որն իշխանության բերեց Հայաստանի ներկայիս վարչապետ Նիկոլ Փաշինյանին<sup>5</sup>: Այնուհետև հազարավոր քաղաքացիներ դուրս եկան Երևանի փողոցներ՝ հանրահավաքներ և երթեր կազմակերպելով և փակելով փողոցային երթևեկությունը: «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը աջակցություն ստացավ քաղաքական ընդդիմության կողմից և բնութագրվեց իշխող կուսակցության, ինչպես նաև շարժմանը չաջակցող սովորական մարդկանց նկատմամբ ագրեսիվ հոռետորաբանությամբ<sup>6</sup>: Բողոքի ցույցերը, որոնք ուղեկցվում էին Փաշինյանի և նրա կառավարության հրաժարականի կոչով<sup>7</sup>, գազաթնակետին հասան հունիսին, սակայն հետագայում մարտեցին: Թեև շատ դեպքերում ոստիկանությունը չէր միջամտում բողոքի ակցիաներին, տեղական և միջազգային ՔՀԿ-ների կողմից արձանագրվել են անիրավաչափ կերպով բերման ենթարկելու և ցուցարարների նկատմամբ անհամաչափ ու դաժան վերաբերմունքի, ինչպես նաև լուսաձայնային նշանակների ենթադրյալ ապօրինի կիրառման դեպքեր<sup>8</sup>: Այս խնդիրները հատկապես մտահոգիչ են վերջին տարիներին արձանագրված՝ իրավապահ մարմինների լիազորությունների չարաշահումների դեպքերի համար պատասխանատվության արդյունավետ միջոցների բացակայության համատեքստում<sup>9</sup>:

2024 թվականի մայիսին աննախադեպ հորդառատ անձրևների հետևանքով Տավուշի և Լոռու մարզերում ուժեղ ջրհեղեղ տեղի ունեցավ՝ զգալի վնասներ պատճառելով ենթակառուցվածքներին և առաջացնելով տնտեսական կորուստներ<sup>10</sup>: Բազմաթիվ ՔՀԿ-ներ իրենց ռեսուրսները համախմբեցին ջրհեղեղից տուժած ընտանիքներին հրատապ օգնություն, այդ թվում սնունդ, մաքուր ջուր, հագուստ և բժշկական պարագաներ տրամադրելու համար:

<sup>5</sup> «ՔՀԿ չափիչ. ՀՀ Կառավարության դեմ զանգվածային բողոքի ակցիաներ, որոնք ուղեկցվում են անօրինական կալանավորումներով և ոստիկանության բռնությամբ», Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 01.06.2024, <https://transparency.am/hy/media/news/article/5118>:

<sup>6</sup> 'Disproportionate Police Violence Against Protesters: Democracy Watch' («Ոստիկանության անհամաչափ բռնություն ցուցարարների նկատմամբ. Democracy Watch»), CivilNet, 24.06.2024, <https://www.civilnet.am/en/news/782959/disproportionate-police-violence-against-protesters-democracy-watch/>.

<sup>7</sup> 'Could Opposition Protests in Armenia Topple the Government?' («Հնարավոր է արդյոք, որ Հայաստանում ընդդիմության բողոքի ցույցերը տապալեն կառավարությունը»), Carnegie Politika, 03.06.2024, <https://carnegieendowment.org/russia-eurasia/politika/2024/06/armenia-protests-pashinyan?lang=en>.

<sup>8</sup> «Դատապարտում ենք ոստիկանության անօրինական գործողությունները» (ՔՀԿ-ների հայտարարությունը), Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 14.06.2024,

<https://transparency.am/hy/media/news/article/5123>, Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում (հունվար-հունիս, 2024), Չեկոյց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան 2024, [https://armhels.com/wp-content/uploads/2024/08/FoA\\_monitoring\\_january\\_june\\_2024\\_arm.pdf](https://armhels.com/wp-content/uploads/2024/08/FoA_monitoring_january_june_2024_arm.pdf), 'Protests in Armenia: RSF denounces deliberate police violence against reporters' («Բողոքի ցույցեր Հայաստանում. RSF-ն դատապարտում է ոստիկանության կանխամտածված բռնությունը լրագրողների նկատմամբ»), Լրագրողներ առանց սահմանների, 21.05.2024, <https://rsf.org/en/protests-armenia-rsf-denounces-deliberate-police-violence-against-reporters>, «Ոստիկանությունը «Չարյա 3» լուսաձայնային նշանակ է կիրառել ցուցարարների դեմ. ըստ արտադրողի՝ այն օգտագործվում է զինված հանցագործների դեմ», Hetq.am, 13.06.2024, <https://hetq.am/hy/article/167363>:

<sup>9</sup> Տե՛ս՝ World Report 2024: Armenia (2024 զեկույց՝ Հայաստան), Human Rights Watch, <https://www.hrw.org/world-report/2024/country-chapters/armenia>, 2023 Country Reports on Human Rights Practices: Armenia (2023 Հայաստանի զեկույցը մարդու իրավունքների հետ կապված պրակտիկայի վերաբերյալ), ԱՄՆ պետքարտուղարություն, <https://www.state.gov/reports/2023-country-reports-on-human-rights-practices/armenia/>, «Ոստիկանության շարունակական բռնությունների վերաբերյալ» (ՔՀԿ-երի հայտարարություն), Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 03.04.2024, <https://transparency.am/hy/media/statements/article/5089>:

<sup>10</sup> 'Northern Armenia Hit By Severe Floods (UPDATED)' («Հայաստանի հյուսիսը տուժել է սաստիկ ջրհեղեղից (ԹԱՐԿԱՅՎԱԾ)»), Azatutyun.am, 26.05.2024, <https://www.azatutyun.am/a/32964179.html>, Armenia Floods 2024 DREF operation n° MDRAM013, Reliefweb, 13.06.2024, <https://reliefweb.int/report/armenia/armenia-floods-2024-dref-operation-ndeg-mdram013>:

Անվտանգության խնդիրների և արտակարգ իրավիճակների հետ մեկտեղ մարտահրավերներ են արձանագրվել նաև երկրի ներքին կառավարման և արտաքին հարաբերությունների ոլորտներում: Ըստ Freedom House միջազգային կազմակերպության «Ազգերն անցումային շրջանում» 2024 թվականի զեկույցի՝ Հայաստանի ժողովրդավարության ընդհանուր միավորը նվազել է երկրի ժողովրդավարական կառավարման վարկանիշի անկման պատճառով: Որպես խնդրահարույց կողմեր են նշվել գործադիր իշխանության կոնսոլիդացիան, իշխանությունների կողմից ընդդիմադիր քաղաքացիներին պաշտոնազրկելու շարունակվող միտումը և իշխող կուսակցության ֆինանսավորման թափանցիկության պակասը<sup>11</sup>: Արտաքին հարաբերությունների ոլորտում կառավարությունը շարունակեց Ռուսաստանի և Արևմուտքի (այսինքն՝ Եվրոպական միության (ԵՄ) և ԱՄՆ-ի) միջև հավասարակշռություն պահելու ջանքերը՝ փորձելով նվազեցնել իր անվտանգային կախվածությունը Ռուսաստանից և քայլեր ձեռնարկել պաշտպանության ոլորտում հարաբերությունները դիվերսիֆիկացնելու ուղղությամբ: 2024 թվականի փետրվարին Հայաստանի վարչապետը հայտարարեց, որ Հայաստանը սառեցրել է իր անդամակցությունը Ռուսաստանի գլխավորած Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ)<sup>12</sup>: Իշխող կուսակցությունը քննարկել է Հայաստանի՝ ԵՄ-ին անդամակցելու հայտ ներկայացնելու հնարավորությունը<sup>13</sup>, իսկ մի խումբ քաղաքական կուսակցություններ ստորագրահավաք են սկսել ԵՄ-ին անդամակցելու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու օրենսդրական նախաձեռնության հարցով<sup>14</sup>:

Չնայած այս քաղաքական և սոցիալական մարտահրավերներին՝ Հայաստանի տնտեսությունը շարունակում է աճ գրանցել<sup>15</sup>: Կառավարությունը մի շարք միջոցներ է ձեռնարկել հարկային եկամուտներն ավելացնելու համար՝ այդ թվում ֆիզիկական անձանց համար եկամուտների հայտարարագրման համընդհանուր համակարգ ներդնելով<sup>16</sup>, բարձրացնելով շրջանառության հարկի դրույքաչափերը և կրճատելով պարզեցված հարկային սխեմաներից օգտվող իրավաբանական անձանց շրջանակը<sup>17</sup>: Հաշվի առնելով հարկային արտոնությունների նվազեցմանն ուղղված կառավարության քաղաքականությունը՝ ԶՀԿ-ների և նրանց նվիրատուների համար ավելի խրախուսող հարկային միջավայր ստեղծելու ուղղությամբ ջատագովությունը էլ ավելի է դժվարացել: Հարկային օրենսդրության փոփոխությունների

<sup>11</sup> Nations in Transit 2024: Armenia (Ազգերը անցումային շրջանում 2024. Հայաստան), Freedom House, <https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2024>.

<sup>12</sup> «ՀԱՊԿ-ը ստեղծում է սպառնալիքներ ՀՀ անվտանգության համար. Փաշինյանը՝ անդամակցությունը սառեցնելու մասին», Առաջինի լրատվական ալիք, 18.09.2024, <https://www.1lurer.am/en/2024/09/18/CSTO-creates-threats-to-the-security-of-Armenia-Pashinyan-about-freezing-the-membership/1189679><https://www.1lurer.am/hy/2024/09/18/1/1189679>:

<sup>13</sup> «ՀՀ իշխող մեծամասնությունը լրջորեն քննարկում է ԵՄ-ին անդամակցության հայտ ներկայացնելու հարցը. Եղոյան», Azatutyun.am, 21.06.2024, <https://www.azatutyun.am/a/33003957.html>:

<sup>14</sup> «Հայաստանում ստորագրահավաք կանցկացվի ԵՄ-ին Հայաստանի անդամակցության գործընթաց սկսելու հարցով հանրաքվե կազմակերպելու համար», ԱՐՄԵՆՊՐԵՍ, 11.09.2024, <https://armenpress.am/hy/article/1199594>:

<sup>15</sup> 'Armenia's economic activity rises by 9.6 % in first seven months of 2024' («Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2024 թվականի առաջին յոթ ամսում աճել է 9,6 տոկոսով»), ARCA News Agency, 02.09.2024, [https://arka.am/en/news/economy/armenia\\_s\\_economic\\_activity\\_rises\\_by\\_9\\_6\\_in\\_first\\_seven\\_months\\_of\\_2024/](https://arka.am/en/news/economy/armenia_s_economic_activity_rises_by_9_6_in_first_seven_months_of_2024/).

<sup>16</sup> «Հայաստանում 2023 թվականից փոկային տարբերակով կներդրվի քաղաքացիների եկամուտների հայտարարագրման համակարգը», ԱՐՄԵՆՊՐԵՍ, 17.11.2022, <https://armenpress.am/hy/article/1097500>:

<sup>17</sup> «Երկրորդ ընթերցմամբ քննարկված օրենսդրական նախաձեռնությունները հանձնաժողովում ստացել են դրական եզրակացություն», 10.06.2024, [http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=20731&year=2024&month=06&day=10&lang=arm&enc=utf8](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=20731&year=2024&month=06&day=10&lang=arm&enc=utf8), ՀՀ օրենքը «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», 12.06.2024, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=194672>:

շրջանակներում 2025 թվականից իրավաբանական ծառայություններ մատուցող տնտեսվարող սուբյեկտները չեն կարողանա օգտվել պարզեցված հարկային սխեմայից և ստիպված կլինեն շահութահարկ և ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) վճարել, ուստի ակնկալվում է, որ այս ծառայությունների գները կաճեն, ինչը կազդի բնակչության համար իրավաբանական ծառայությունների հասանելիության վրա: Հետևաբար, հնարավոր է, որ իրավապաշտպան ՔՀԿ-ները անվճար իրավական աջակցություն հայցող շահառուների թվի աճ գրանցեն<sup>18</sup>:

## Քաղաքացիական հասարակության միջավայրի հիմնական զարգացումները

2024 թվականին Հայաստանի ՔՀԿ միջավայրի ընդհանուր գնահատականը 2023 թվականի համեմատ չի փոխվել (4,8 միավոր՝ առավելագույն 7-ից): Ամենաբարձր գնահատականներն ունեցող երեք ոլորտները նույնն են, ինչ 2023 թվականին՝ միավորումների ազատություն (5,7 միավոր), ֆինանսավորման մատչելիություն (5,3 միավոր) և խաղաղ հավաքների ազատություն (5,2 միավոր): Ամենացածր գնահատված ոլորտները, ինչպես 2023 թվականին, պետություն-ՔՀԿ համագործակցությունն է (4 միավոր), պետական աջակցությունը (4,1 միավոր), պետության կողմից պաշտպանության պարտականությունը (4,5 միավոր) և թվային իրավունքները (4,5 միավոր):

Հավաքների ազատությունը և խոսքի ազատությունը հիմնարար քաղաքացիական իրավունքների ու ազատությունների այն երկու ոլորտներն են, որոնց գնահատականները 2024 թվականին 2023 թվականի համեմատ փոխվել են (բարելավվել կամ վատթարացել): Հավաքների մասնակիցների իրավունքների կոպիտ խախտումները և նախորդ նմանատիպ դեպքերի համար ոստիկանության շարունակվող անպատժելիությունը հանգեցրել են **խաղաղ հավաքների ազատության** գործնական միջավայրի գնահատականի նվազման, ինչի արդյունքում ոլորտի ընդհանուր գնահատականը նվազել է (5,3 միավորից դառնալով 5,2 միավոր): Միևնույն ժամանակ, այս ոլորտում թե՛ դրական, թե՛ բացասական օրենսդրական փոփոխություններ են տեղի ունեցել: Այսպես, «Ոստիկանության գվարդիայի մասին» նոր օրենքի և «Հավաքների ազատության մասին» օրենքի փոփոխությունների արդյունքում ակնկալվում է հավաքների մասնակիցների իրավունքների իրացման բարելավում ոստիկանների համար պարտադիր վերապատրաստումների, հատուկ միջոցների օգտագործման պայմանների հստակեցման և հավաքների վերաբերյալ նախնական ծանուցման ժամկետի կրճատման միջոցով: Մյուս կողմից, ինդրահարույց է ոստիկանությունում հատուկ միջոցների առկայության, քանակի և տեսակների մասին տվյալների գաղտնագրումը ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից:

**խոսքի ազատության** ոլորտում արձանագրվել է գործնական միջավայրի գնահատականի բարելավում, ինչը հանգեցրել է ընդհանուր գնահատականի աճին (4,7 միավորից դառնալով 4,8 միավոր): Այս բարելավումը նշանավորում է վերադարձ դեպի 2022 թվականի գնահատականը և պայմանավորված է վիրավորանքի ու զրպարտության վեճերի արտադատական լուծման դեպքերի աճով և մեդիա ոլորտի բարեփոխումների շուրջ քաղաքացիական հասարակության հետ կառավարության համագործակցությամբ: Բացի այդ, կառավարությունը ՔՀԿ-ների հետ

<sup>18</sup> Հարցազրույց, սեպտեմբեր 2024 թ.:



համատեղ մի շարք միջոցառումներ է իրականացրել մեդիա գրագիտության բարելավման և ապատեղեկատվության դեմ պայքարի ուղղությամբ՝ ըստ 2023 թվականի ավարտին ընդունված «Ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թվականների հայեցակարգի»։ Մինևույն ժամանակ, այս ոլորտում դեռևս բազմաթիվ խնդիրներ կան, ինչպիսիք են, օրինակ, լրագրողների դեմ հարձակումները և ապատեղեկատվության ու ատելության խոսքի բարձր մակարդակը։ Այս գեկույցում նշվում է նաև, որ իրավապահ մարմինները ընտրովի մոտեցում են ցուցաբերում ատելության խոսքի և բռնության հրապարակային կոչերի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների կիրառման գործում՝ առաջին հերթին պաշտպանելով պաշտոնյաներին, ոչ թե ՔՀԿ-ներին ու ակտիվիստներին։

ՔՀԿ չափիչի մյուս ոլորտներում 2024 թվականի գնահատականները չեն փոխվել։ Ընդհանուր առմամբ, Հայաստանի օրենսդրական ու գործնական միջավայրը նպաստավոր է ՔՀԿ-ների ստեղծման և գործունեության համար, իսկ կառավարության կողմից տրամադրված գրանցման նմուշային փաստաթղթերը թույլ են տալիս հասարակական կազմակերպություններին ավելի արագ գրանցվել (թեև այս փաստաթղթերը սահմանում են ղեկավարման կառուցվածքի և անդամակցության կանոնակարգի միայն մեկ ձևաչափ)։ ՔՀԿ-ների համար առցանց գրանցման հնարավորությունների բացակայությունը և իրական շահառուների հայտարարագրման պահանջի հետ կապված վարչարարությունն ու ծախսերը շարունակում են մնալ **միավորումների ազատության** ոլորտի հիմնական մարտահրավերները (ընդհանուր գնահատականը՝ 5,7 միավոր)։

**Հավասար վերաբերմունքի** ոլորտում (ընդհանուր գնահատականը՝ 4,9 միավոր) առկա են նույն խնդիրները, ինչնախորդ տարիներին, մասնավորապես՝ բիզնեսի համար առավել բարենպաստ պայմանները ՔՀԿ-ների համեմատ գրանցման և տնտեսական գործունեության հարկման առումով, ինչպես նաև որոշում կայացնողների կողմից ընտրողական մոտեցումը ՔՀԿ-ներին ներգրավելիս։ Թեև օրենսդրությունը ՔՀԿ-ներին հնարավորություն է ընձեռում ֆինանսավորում փնտրել տարատեսակ աղբյուրներից, **ֆինանսավորման մատչելիության** ոլորտում (ընդհանուր գնահատականը՝ 5,3 միավոր) նշանակալի խնդիր է մնում է ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցման համար խթանների պակասը և դրամաշնորհային ծրագրերը որպես «ծառայությունների մատուցում» մեկնաբանելը և, հետևապես, օրենքով սահմանված դեպքերում ԱԱՀ հարկման օբյեկտ համարելը։

**Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունքի** ոլորտում (ընդհանուր գնահատականը՝ 4,9 միավոր) դրական զարգացումները ներառում են որոշ համայնքապետարանների կողմից ՔՀԿ-ների և քաղաքացիների նկատմամբ բաց և մասնակցային լինելը, մասնակցային գործընթացի միջոցով բարեփոխումների և իրավական նախագծերի մշակման հաջողված դեպքերը և բյուջետավորման ու պետական գնումների վերահսկման գործընթացներում հանրային մասնակցության մեխանիզմների բարելավումը։ Վաղ փուլերում որոշումների կայացման գործընթացում ներգրավման և խորհրդարանում մասնակցության ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև քաղաքականության որոշ ոլորտներում ՔՀԿ-ների առաջարկների սահմանափակ ազդեցությունը և տեղեկատվության մատչելիության հետ կապված շարունակական խնդիրները մնում են այս ոլորտի ամենակարևոր մարտահրավերները։ Տեղեկատվության մատչելիության հետ կապված կարևոր զարգացում է «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագիծը, որը նպատակ ունի բաց տվյալների քաղաքականություն սահմանել հայաստանյան օրենսդրության մեջ։ Թեև ընդհանուր առմամբ նախագիծը դրական է

գնահատվում, սակայն առկա ռիսկերը նվազագույնի հասցնելու և օրենքի արդյունավետ կիրառումն ապահովելու համար հետագա վերանայման և քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերի հետ քննարկման անհրաժեշտություն կա:

Հայաստանի օրենսդրությունը երաշխավորում է **մասնավոր կյանքի իրավունքի** պաշտպանությունը (ընդհանուր գնահատականը՝ 4,9 միավոր), սակայն այս ոլորտում ևս բարելավման կարիք կա՝ հաշվի առնելով նոր տեխնոլոգիաները և դրանց առնչվող ռիսկերը անձնական տվյալների կառավարման և անվտանգության տեսանկյունից: Հսկողության (տեսահսկման ու գաղտնալսման) գործողությունների նկատմամբ վերահսկողության և հաշվետվողականության մեխանիզմների բացակայությունը ևս լուրջ գործնական մարտահրավեր է այս ոլորտում: Կառավարության կողմից հաստատված և Ազգային ժողովում (ԱԺ) քննարկված՝ տեսահսկման վերաբերյալ օրենսդրական նախագիծը ԲՀԿ-ների խիստ քննադատությանն արժանացավ և արդյունքում սառեցվեց կառավարության կողմից մինչև հետագա քննարկումները:

Չգայուն ոլորտներում աշխատող ԲՀԿ-ների արդյունավետ պաշտպանության շարունակական բացակայությունը, մասնավորապես՝ հանրային մասնակցության դեմ ռազմավարական դատավարության (SLAPP) հայցերի և սոցիալական ցանցերում հարձակումների միջոցով բնապահպանական ակտիվիստների վրա ճնշումների ավելացումը **պետության կողմից պաշտպանության պարտականության** ոլորտի (ընդհանուր գնահատականը՝ 4,5 միավոր) հիմնական մարտահրավերներն են: Այս ոլորտի 2024 թվականի իրավական զարգացումների շարքում կարելի է նշել, որ ԲՀԿ-ները քննարկումներ են նախաձեռնել հասարակական կազմակերպությունների կողմից դատարանում հանրային շահերը ներկայացնելու իրավունքի ընդլայնման շուրջ՝ հիմնվելով կառավարության կողմից 2023 թվականին ընդունված ռազմավարության վրա:

**Պետական աջակցության** ոլորտում (ընդհանուր գնահատականը՝ 4,1 միավոր) նույնն են մնացել պետական ֆինանսավորման հետ կապված մարտահրավերները և ԲՀԿ-ների ու դոնորների համար խրախուսող հարկային միջավայրի բացը, թեև ԲՀԿ-ները շարունակել են իշխանությունների հետ երկխոսությունը դրամաշնորհների հարկման հարցերի և բարեգործական գործունեության ու նվիրատվությունների հարկային խթանների շուրջ: Այս ոլորտում 2023 թվականի հոկտեմբերին ուժի մեջ մտած «Կամավոր աշխատանքի մասին» օրենքի կիրարկման հետ կապված մի շարք տեխնիկական խնդիրներ են բացահայտվել:

**Պետություն-ԲՀԿ համագործակցության** ոլորտում (ընդհանուր գնահատականը՝ 4 միավոր) ԲՀԿ զարգացման կամ կառավարություն-ԲՀԿ համագործակցության վերաբերյալ որևէ առանձին քաղաքականություն կամ ռազմավարություն չկա, թեև տարբեր ազգային ռազմավարություններ և օրենսդրական դրույթներ մասնակցության և համագործակցության որոշակի սկզբունքներ են սահմանում: Հանրային խորհուրդների և խորհրդակցական այլ մարմինների գործունեության և արդյունավետության խնդիրները մնում են նույնը, ինչ նախորդ տարիներին:

**Թվային իրավունքների** ոլորտում (ընդհանուր գնահատականը՝ 4,5 միավոր) մի շարք օրենսդրական նախաձեռնություններ են եղել այդ թվում՝ «Կիբերանվտանգության մասին» օրենքի նախագիծը, կիբերանվտանգությունների շրջանակը սահմանող՝ ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխությունները և տեսահսկման միջոցառումների վերաբերյալ փաթեթի նախագիծը: Գործնական զարգացումների շարքում ԲՀԿ-ները նշել են ինչպես պետական,

այնպես էլ երկրից դուրս գործող անձանց կողմից լրտեսող ծրագրերի օգտագործման մի քանի միջադեպերի մասին: Որպես դրական միտում՝ կառավարությունը շարունակում է քայլեր ձեռնարկել մեդիա գրագիտության, թվայնացման, ինտերնետ հասանելիության բարելավման ուղղությամբ, և բազմաթիվ ՔՀԿ-ներ զբաղվում են մեդիա կրթության և փաստերի ստուգման աշխատանքներով:

## Առանցքային իրադարձություններ

2024 թվականի «ՔՀԿ չափիչ» զեկույցի տարբեր ոլորտներում արձանագրվել են հետևյալ առանցքային իրադարձությունները.

- Սկսած 2024 թվականի ապրիլից՝ մի շարք հանրահավաքներ և բողոքի ցույցեր տեղի ունեցան, որոնք պայմանավորված էին Ադրբեյջանի հետ սահմանազատման գործընթացի և Հայաստանի անվտանգության հետ կապված մտահոգությունների աճով: Բողոքի արդյունքում ձևավորվեց «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը, որը պահանջում էր կառավարության հրաժարականը: Չնայած հավաքները հիմնականում խաղաղ բնույթ էին կրում՝ որոշ ցուցարարների կողմից բռնության դրսևորումներ են արձանագրվել: Հավաքների ընթացքում ոստիկանության արձագանքը երբեմն անհամաչափ և կոպիտ է եղել՝ մեծ թվով քաղաքացիների բերման ենթարկելու և որոշ կազմակերպիչների, ցուցարարների և լրագրողների նկատմամբ բռնության կիրառման միջադեպերով: Հունիսի 12-ին, երբ հազարավոր ցուցարարներ հավաքվեցին Ազգային ժողովի շենքի մոտ և բախումներ սկսվեցին հավաքի մասնակիցների և ոստիկանների միջև, ոստիկանությունը լուսաձայնային նռնակներ կիրառեց, որոնց հետևանքով տուժեցին ինչպես ցուցարարները, այնպես էլ լրատվամիջոցների ներկայացուցիչներ, ինչպես նաև հենց ոստիկանները: Չնայած ՔՀԿ-ների հայտարարություններին և ոստիկանության գործողությունների թափանցիկ հետաքննություն անցկացնելու պահանջներին՝ 2024 թվականի նոյեմբերի դրությամբ որևէ ոստիկանի մեղադրանք չի առաջադրվել հունիսի 12-ի հավաքի ընթացքում ուժի անհամաչափ գործադրման և լուսաձայնային նռնակներ օգտագործելու համար:
- 2024 թվականի ապրիլին կառավարությունը հավանություն է տվել «Ոստիկանության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» և հարակից օրենքներում փոփոցային հանցագործության դեմ պայքարին ուղղված փոփոխությունների նախագծերին և փաթեթը ներկայացրել է Ազգային ժողով: Փոփոխությունների նախագծով նախատեսվում է, որ խանութները, սրճարանները, ռեստորանները և այլ ձեռնարկություններ իրենց տարածքի մուտքի մոտ և ամբողջ երկայնքով պետք է բարձր որակի տեսահսկման համակարգեր տեղադրեն՝ ոստիկանությանը ամենօրյա 24-ժամյա հիմքով իրական ժամանակում հասանելիություն տալով այդ համակարգերին: ՔՀԿ-ները, ներառյալ Human Rights Watch-ը, նախագծերի հետ կապված մի շարք խնդիրներ են նշել, այդ թվում՝ անհամաչափությունը, մասնավոր կյանքի իրավունքի հնարավոր խախտումը և տվյալների հավաքագրման նպատակների անորոշությունը: Ելնելով շահագրգիռ կողմերի մտահոգություններից՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը հետ է կանչել նախագիծը՝ նշելով, որ խնդրի լուծման համար կիրառելու է փոփոխյալ մոտեցում և համապատասխան շահագրգիռ կողմերի հետ հետագա քննարկումներ իրականացնելու պատրաստակամություն հայտնելով:

- 2024 թվականի փետրվարին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը հանրային քննարկմանը ներկայացրեց «Հանրային տեղեկությունների մասին» նոր օրենքի, ինչպես նաև հարակից օրենքներում փոփոխությունների և լրացումների նախագիծը, որը հիմք է ծառայելու տվյալների քաղաքականության համար: Նախագծում հաշվի են առնվել նախորդ տարբերակի վերաբերյալ ԶՀԿ-ների կողմից բարձրաձայնված խնդիրները: Սակայն մեդիա կազմակերպությունները նշել են, որ մի շարք քննարկումներից հետո վերանայված տարբերակում որոշ մտահոգություններ դեռևս հաշվի չեն առնվել, և հնարավոր թյուրըմբռնման պատճառով որոշ դրույթներ կիրառման դեպքում կարող են հանգեցնել տեղեկությունների սահմանափակման: 2024 թվականի նոյեմբերի դրությամբ նախագիծը դեռևս չէր հաստատվել կառավարության կողմից:
- 2024 թվականի հոկտեմբերին Ազգային ժողովն ընդունեց «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքը և «Հավաքների ազատության մասին» ու հարակից այլ օրենքների փոփոխությունները, որոնք անդրադառնում են հավաքների վերահսկման որոշ հարցերի: Ոստիկանության գվարդիայի հիմնական գործառույթների շրջանակում նշվում է հավաքների մասնակիցների իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանությունը: Բացի այդ, օրենքը ոստիկանության գվարդիայի ծառայողներին պարտավորեցնում է հատուկ պատրաստություն և պարբերական վերապատրաստում անցնել իրենց գործունեության ոլորտներում, ներառյալ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ: Օրենքը նաև նախանշում է այն հատուկ պայմանները, որոնց դեպքում ոստիկանության գվարդիան կարող է ֆիզիկական ուժ կամ հատուկ միջոցներ գործադրել: Նույն փաթեթի շրջանակներում ընդունված՝ «Հավաքների ազատության մասին» օրենքի փոփոխություններով նախատեսվել են հավաքի մասին իրազեկման ավելի սեղմ ժամկետներ, և ուժը կորցրած է համարվել հրատապ և ինքնաբուխ հավաքների առավելագույն տևողության (վեց ժամ) մասին դրույթը:
- 2024 թվականին ավելացել են սոցիալական ցանցերում բնապահպան ակտիվիստների նկատմամբ հարձակումներն ու ատելության խոսքը, ինչպես նաև զրպարտող հրապարակումները: Հանքարդյունաբերական ընկերությունների կողմից բնապահպան ակտիվիստների դեմ զրպարտության և վիրավորանքի հիմքով նոր դատական հայցեր են ներկայացվել: ԶՀԿ-ներն այս հայցերը որակում են որպես հանրային մասնակցության դեմ ռազմավարական դատավարություն (SLAPP), քանի որ դրանց միջոցով փորձ է արվում ճնշել իրենց քննադատությունն ու գործունեությունը: Որպես Եվրոպայի խորհրդի (ԵԽ) անդամ ՀՀ կառավարությունը պարտավոր է հետևել 2024 թվականի ապրիլին հրապարակված՝ հանրային մասնակցության դեմ ռազմավարական դատավարությունների կիրառմանը հակազդելու վերաբերյալ ԵԽ հանձնարարականներին:
- 2024 թվականին կառավարությունը մի շարք քայլեր է ձեռնարկել «Ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգի» իրականացման ուղղությամբ, որը մշակվել էր ԶՀԿ-ների հետ համատեղ և ընդունվել 2023 թվականի դեկտեմբերին: Այս գործողությունները ներառել են հետևյալը՝ մեդիա գրագիտության բարելավմանն առնչվող աշխատանքները համակարգող խմբի ստեղծում, պետական ծառայողների կարողությունների զարգացման միջոցառումներ, պետական մարմինների հետ համակարգման հանդիպումներ հաղորդակցման ռազմավարությունը պլանավորելու և իրականացնելու համար և

իրագրելի ման արշավներ իրականացնելու նպատակով մասնավոր լրատվական ընկերությունների հետ համագործակցության զարգացում:

- 2024 թվականին ևս 11 համայնք կամավոր սկզբունքով միացավ մասնակցային բյուջետավորման նախաձեռնությանը, որը 2023 թվականին պիլոտային եղանակով իրականացվել էր չորս համայնքներում: Այս նախաձեռնությունը հնարավորություն է տալիս քաղաքացիներին տեղական բյուջեներից ֆինանսավորվող նախագծերի գաղափարներ առաջարկել և քվեարկել դրանց օգտին: 2023 թվականի նոյեմբերին ընդունված որոշման հիման վրա կառավարությունը 2024 թվականի պետբյուջեից փորձնական կարգով 500 մլն դրամ է հատկացրել չորս համայնքներին մասնակցային բյուջետավորման գործընթացը շարունակելու նպատակով, իսկ հաջորդ տարիներին նախատեսվում է այս հնարավորությունը այլ համայնքներին ևս հասանելի դարձնել:
- 2024 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունը շահագրգիռ ՔՀԿ-ների հետ քննարկումներ իրականացրեց «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագծի վերաբերյալ, որը նպատակ ունի ապահովել խտրականության դեմ պայքարը և ստեղծել խտրականության հարցերով խորհուրդ: Նախագիծը ներառում է խտրականության սահմանումը, տեսակները և իրավական ու դատական պաշտպանության կառուցակարգերը, սակայն պաշտպանված հատկանիշների ցանկում չեն նշվել «սեռական կողմնորոշման», «գենդերային ինքնության», «առողջական վիճակի» և «ընտանեկան կարգավիճակի» հասկացությունները՝ անտեսելով ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների առաջարկությունները: 2024 թվականի նոյեմբերի դրությամբ նախագիծը դեռևս չէր հաստատվել կառավարության կողմից:

## Առանցքային առաջնահերթություններ

2024 թվականին աննշան առաջընթաց է գրանցվել 2023 թվականի «ՔՀԿ չափիչ» զեկույցի առաջարկությունների իրականացման հարցում: 2023 թվականի երկու առաջնահերթություն այս տարի եղել է կառավարության ուշադրության կենտրոնում, այն է՝ մասնակցության մեխանիզմների բարելավումն ու քաղաքականության մշակման վաղ փուլերում ՔՀԿ-ների ներգրավումը և կիբերանվտանգության բարելավմանն ուղղությամբ միջոցառումների ձեռնարկումը: Թեև այս հարցերին լիարժեք լուծում չի տրվել, սակայն ընթացիկ օրենսդրական նախագծերն ու քննարկումները հիմք են տալիս 2025 թվականին ավելի լավ արդյունքներ ակնկալելու համար:

ՔՀԿ-ների համար մարտահրավերային մյուս խնդիրները, որոնց ուղղությամբ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, նույնն են մնացել, ինչպես օրինակ՝ անբավարար ֆինանսական կայունությունը, հավաքների մասնակիցների իրավունքների խախտման համար պատասխանատվության բացակայությունը, բովանդակալից մասնակցության իրավական և գործնական խոչընդոտները և պետության կողմից ոչ բավարար պաշտպանությունը: Ըստ այդմ, առաջիկա ժամանակահատվածում ՔՀԿ միջավայրը բարելավելու համար կառավարությանը և համապատասխան կառույցներին կոչ է արվում ՔՀԿ-ների ու բոլոր շահագրգիռ կողմերի հետ միասին իրականացնել հետևյալ յոթ առաջարկությունները, որոնք որպես առաջնահերթ են ընտրվել ՔՀԿ չափիչի 11 ոլորտների 35 առաջարկներից և ներկայացված են ըստ այս զեկույցի ոլորտների հերթականության (այս յոթ առաջարկից չորսը

վերահաստատում են 2023 թվականի զեկույցի առաջարկությունները):

1. ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ սահմանել «դրամաշնորհ» հասկացությունը՝ հաշվի առնելով միջազգային առաջատար փորձը և խորհրդակցելով ՔՀԿ-ների հետ, և դրամաշնորհային ծրագրերը և ոչ առևտրային գործունեության այլ տեսակները չհամարել ձեռնարկատիրական գործունեություն
2. Իրավապահ մարմիններին՝ պատշաճ ու թափանցիկ հետաքննություն ապահովել և համապատասխան պատժամիջոցներ կիրառել այն ոստիկանների նկատմամբ, որոնք չարաշահել են իրենց լիազորությունները հավաքների ժամանակ ոստիկանության գործունեությունն իրականացնելիս, իսկ քաղաքական ղեկավարությանը՝ մինչև հետաքննության պաշտոնական արդյունքները գնահատականներ չտալ ոստիկանության գործողությունների վերաբերյալ:
3. ՀՀ ազգային ժողովին՝ մեխանիզմներ նախատեսել ԱԺ պատգամավորների հեղինակած նախագծերի պարտադիր հանրային քննարկումներն իրականացնելու և իրավական նախագծերի նախնական գաղափարների քննարկման, ինչպես նաև կառավարության կողմից ներկայացված նախագծերի վերանայման ավարտական փուլերում ՔՀԿ-ներին ներգրավելու (այդ թվում՝ մշտական հանձնաժողովների մակարդակով մասնակցության) համար:
4. ՀՀ ազգային ժողովին՝ օրենսդրական փոփոխություններ իրականացնել, ՔՀԿ-ներին հնարավորություն տալով հանրային շահերը ներկայացնել դատարանում՝ իրենց նպատակների շրջանակում, և ապահովել, որ նրանք կարողանան գործնականում օգտվել այս իրավունքից՝ մեղմելով չափազանց բարդ պահանջները և առնչվող վարչարարական ընթացակարգերը:
5. ՀՀ կառավարությանը՝ ապահովել, որ հսկողության գործողությունների վերաբերյալ օրենսդրական կարգավորումները մշակվեն միջազգային իրավունքին համապատասխան և ՔՀԿ-ների հետ քննարկմամբ, ինչպես նաև պահպանվեն գործնականում խախտումների դեպքում կիրառելով թափանցիկ և հաշվետու միջոցառումներ:
6. Պետությանը՝ համարժեք պաշտպանություն ապահովել ՔՀԿ-ների համար, այդ թվում՝ խտրականության դեմ պայքարի մասին օրենքի ընդունման և համապատասխան մարմնի ստեղծման, Եվրոպայի խորհրդի կողմից 2024 թվականի ապրիլին ընդունված հանձնարարականների հիման վրա SLAPP հայցերի դեմ օրենսդրական ու գործնական միջոցառումների իրականացման, երրորդ անձանց կողմից թիրախավորված ՔՀԿ-ներին աջակցող հրապարակային հայտարարությունների ներկայացման և ողջամիտ ժամկետում ՔՀԿ-ների ու ակտիվիստների դեմ հարձակումների պատշաճ քննության միջոցով:
7. ՀՀ կառավարությանը (մասնավորապես ՀՀ ֆինանսների նախարարությանը), ինչպես նաև Ազգային ժողովին՝ ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ստեղծել, որը կօգնի բարելավել տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ անհատների և տնտեսվարող սուբյեկտների նվիրատվություններից և ուղղակի ձեռնարկատիրական գործունեությունից ֆինանսավորում և բնաիրային աջակցություն հայթայթելու հնարավորությունները:

## II. ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԹՎԵՐՈՎ

**Բնակչությունը՝** 3024500 մարդ (2024 թ. հունվարի 1-ի դրությամբ)<sup>19</sup> | **Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն՝** 8715,8 ԱՄՆ դոլար (2023)<sup>20</sup> | **ՔՀԿ-ների քանակը՝** 6766 հասարակական կազմակերպություն, 1765 հիմնադրամ<sup>21</sup> | **ՔՀԿ-ների քանակը 10000 բնակչի հաշվով՝** 28,2 | **ՔՀԿ-ի գրանցման վճար՝** 10000 ՀՀ դրամ<sup>22</sup> | **Ազատությունն աշխարհում 2024՝** 54/100 (մասամբ ազատ)<sup>23</sup> | **Մամուլի ազատության համաշխարհային ինդեքս 2024՝** 71,6 (180 երկրներից 43-րդը)<sup>24</sup>



**Երկրի գնահատական՝ 4.8**

**Իրավական դաշտ՝ 5.2**

**Գործնական դաշտ՝ 4.4**

Գնահատման սանդղակը ներառում է 1-ից 7 միավոր, որտեղ 1-ը ամենացածր հնարավոր գնահատականն է (ծայրաստիճան անբարենպաստ՝ ավտորիտար միջավայր), իսկ 7-ը՝ ամենաբարձր հնարավոր գնահատականը (չափազանց բարենպաստ միջավայր):

Ոլորտներ	Ընդհանուր	Իրավական	Գործնական
Միավորումների ազատություն	5.7	5.8	5.6
Հավասար վերաբերմունք	4.9	5.0	4.8
Ֆինանսավորման մատչելիություն	5.3	5.8	4.8
Խաղաղ հավաքների ազատություն	5.2 ↓	5.7	4.7 ↓
Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք	4.9	5.4	4.3
Խոսքի ազատություն	4.8 ↑	5.2	4.3 ↑
Մասնավոր կյանքի իրավունք	4.9	5.8	3.9
Պետության կողմից պաշտպանության պարտականություն	4.5	5.2	3.8
Պետական աջակցություն	4.1	4.3	3.9
Պետություն-ՔՀԿ համագործակցություն	4.0	4.3	3.6
Թվային իրավունքներ	4.5	4.9	4.0

Սլաքները ցույց են տալիս բարելավում կամ վատթարացում՝ անցյալ տարվա գնահատականների համեմատ:

<sup>19</sup> Ժամանակագրական շարքեր, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, <https://armstat.am/en/?nid=12&id=11001>:

<sup>20</sup> GDP per capita – Armenia (ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով. Հայաստան), Համաշխարհային Բանկ, <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=AM>:

<sup>21</sup> Տվյալները տրամադրվել են 2024 թ. օգոստոսի 31-ի դրությամբ՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2024 թվականի սեպտեմբերի 13-ին՝ ի պատասխան ԹԻՎԿ հարցման:

<sup>22</sup> Պետական գրանցման/հաշվառման/ համար անհրաժեշտ փաստաթղթեր, տուրքերի դրույքաչափեր և ժամկետներ, Էլեկտրոնային Ռեգիստր, Հայաստանի Հանրապետության կառավարություն, <https://www.e-register.am/am/docs/49>:

<sup>23</sup> Freedom in the World 2024 (Ազատությունն աշխարհում 2024), Countries and Territories, Freedom House, <https://freedomhouse.org/countries/freedom-world/scores>.

<sup>24</sup> 2024 World Press Freedom Index (Մամուլի ազատության համաշխարհային ինդեքս 2024), Reporters Without Borders, <https://rsf.org/en/index>.

# III. ԲԱՅԱՅՈՒՄՆԵՐ

## 3.1 Միավորումների ազատություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 5.7/7

Իրավական դաշտ՝ 5.8/7	Գործնական դաշտ՝ 5.6/7
-------------------------	--------------------------

Հայաստանում միավորումների ազատությունը երաշխավորված է օրենսդրությամբ: ՔՀԿ-ները (հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները) էական դժվարությունների չեն հանդիպում գրանցման և գործունեության ընթացքում: Քաղաքացիական նախաձեռնություններից չի պահանջվում գրանցվել որպես իրավաբանական անձ, չկան նաև առցանց միավորումներ կազմելու սահմանափակումներ: Գրանցման ընթացակարգը պարզ է և ոչ թանկ, թեև լինում են կանոնադրությունների բազմակի վերանայման դեպքեր: Հասարակական կազմակերպությունների գրանցումն ավելի արագ է իրականացվում այն դեպքում, երբ հիմնադիրներն օգտվում են կառավարության կողմից հաստատված՝ փաստաթղթերի նմուշային ձևից, սակայն այս նմուշը ղեկավարման կառուցվածքի և անդամակցության պահանջների միայն մեկ տարբերակ է առաջարկում: ՔՀԿ-ները դեռ առցանց գրանցվելու հնարավորություն չունեն, որը կապված է տեխնիկական խնդիրների հետ: Այն ՔՀԿ-ները, որոնք այլևս չեն գործում, խուսափում են լուծարման գործընթացից դրա հետ կապված վարչարարության և ծախսերի պատճառով:

ՀԿ-ներն ու հիմնադրամները պարտավոր են տարեկան հաշվետվություններ ներկայացնել իրենց բյուջեի և գործունեության վերաբերյալ: Այս պահանջները չկատարելու համար օրենսդրությամբ որոշակի պատժամիջոցներ են սահմանված, որոնց կիրառման լիազոր մարմինը ՀՀ պետական եկամուտների կոմիտեն է: ՔՀԿ-ների տարեկան հաշվետվությունները ստանալուց հետո ՀՀ պետական եկամուտների կոմիտեն դրանք հրապարակում է կայքում՝ PDF ձևաչափով, ինչը դժվարացնում է համապատասխան տեղեկատվության որոնումը և վերլուծությունը: 2023 թվականին ուժի մեջ մտած՝ իրական շահառուներին հայտարարագրելու պահանջը շփոթմունք է առաջացրել ՔՀԿ-ների շրջանում և լրացուցիչ ծախսեր է ենթադրում հայտարարագրի տվյալների փոփոխության դեպքում:

Միավորումների ազատության ոլորտի գնահատականները 2023 թվականի համեմատ նույնն են մնացել: Ուժի մեջ են մնացել «ՔՀԿ չափիչի» նախորդ գեկույցի առաջարկները՝ առցանց գրանցման հնարավորություն տալու և ՔՀԿ-ների տարեկան հաշվետվությունների բազան արդիականացնելու վերաբերյալ: Բացի այդ, առաջարկվում է ավելի ճկուն դարձնել գրանցման համար օգտագործվող կանոնադրության նմուշը:



Չափորոշիչ 1. Յուրաքանչյուր ոք ազատորեն կարող է ՔՀԿ ստեղծել, անդամակցել ՔՀԿ-ին և մասնակցել ՔՀԿ գործունեությանը:

Հայաստանում օրենսդրությունը բոլորին թույլ է տալիս ՔՀԿ ստեղծել, անդամակցել ՔՀԿ-ին կամ մասնակցել ՔՀԿ-ի գործունեությանը: Սահմանադրությամբ ամրագրված է միավորումների ազատությունը, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով<sup>25</sup>: ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված շահույթ չհետապնդող կազմակերպությունները ներառում են հասարակական միավորումները և հիմնադրամները, իսկ հասարակական միավորումների շարքում են հասարակական կազմակերպությունները, կրոնական կազմակերպությունները, քաղաքական կուսակցությունները և արհմիությունները: Այս զեկույցի շրջանակներում «գրանցված ՔՀԿ-ներ» ասելով նկատի կունենանք Հայաստանի հասարակական կազմակերպություններն և հիմնադրամները:

Հասարակական կազմակերպություն (ՀԿ) կարող է հիմնադրել առնվազն երկու անձ՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական: Կուսակցությունները, կրոնական կազմակերպությունները, արհեստակցական միությունները չեն կարող ՀԿ հիմնադիր կամ անդամ լինել<sup>26</sup>: Հիմնադրամը կարող է հիմնադրել մեկ կամ ավելի անձ՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական<sup>27</sup>: Հիմնադրամների և ՀԿ-ների հիմնադիրների կացության, ազգության կամ քաղաքացիության վերաբերյալ սահմանափակումներ օրենսդրությամբ նախատեսված չեն: Դատավորները չեն կարող ոչ առևտրային կազմակերպությունում ղեկավար պաշտոն զբաղեցնել<sup>28</sup>: Անհատները և կազմակերպությունները կարող են նաև ազատորեն միավորվել ինչպես անձամբ, այնպես էլ առցանց՝ առանց գրանցվելու անհրաժեշտության:

Գործնականում որևէ խոչընդոտ չկա կազմակերպություն հիմնադրելու կամ գրանցելու, ինչպես նաև որևէ ՔՀԿ-ին անդամակցելու կամ ՔՀԿ-ի գործունեությանը մասնակցելու համար: Գրանցման ընթացակարգը ներառում է հիմնականում իրավական պահանջներին փաստաթղթերի համապատասխանության ձևական ստուգում:

Արցախի ողջ բնակչության բռնի տեղահանման հետևանքով Արցախից տեղափոխված տասնյակ ՔՀԿ-ներ 2023 թվականի ավարտին և 2024 թվականի ընթացքում գրանցվեցին Հայաստանում<sup>29</sup>:

<sup>25</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 45, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=102510>:  
<sup>26</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, վերջին փոփ. 14.06.2023, հոդված 10, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=183139>:  
<sup>27</sup> ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, վերջին փոփ. 22.05.2024, հոդված 12, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=193925>:  
<sup>28</sup> ՀՀ դատական օրենսգիրք, 07.02.2018, վերջին փոփ. 11.04.2024, հոդված 5, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=192671>:  
<sup>29</sup> Ըստ պետքեզիստրի կողմից 2024 թ. սեպտեմբերի 13-ին տրամադրված տեղեկատվության, որը ներկայացվել է ի պատասխան ԹԻՀԿ հարցման՝ Արցախի 16 ՔՀԿ ՀՀ-ում վերագրանցվել է գրանցման բնօրինակ փաստաթղթերի հիման վրա, սակայն ըստ ԹԻՀԿ տվյալների՝ ավելի մեծ քանակով արցախյան ՔՀԿ-ներ գրանցվել են որպես նոր կազմակերպություն:

Չափորոշիչ 2. ԲՀԿ-ն որպես իրավաբանական անձ գրանցելու ընթացակարգը հստակ է, պարզ, արագ և ոչ թանկ:

ԲՀԿ-ների գրանցման օրենքով սահմանված ընթացակարգը պարզ է, արագ և ոչ թանկ: Հայաստանում իրավաբանական անձանց գրանցման պատասխանատուն ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունն է (պետռեգիստր): ԲՀԿ-ների գրանցման պետական տուրքը 10000 դրամ է, գրանցման ժամկետը՝ առավելագույնը 10 աշխատանքային օր: Այն դեպքում, երբ հիմնադիրներն օգտվում են կանոնադրության և մյուս փաստաթղթերի նմուշային ձևերից, հասարակական կազմակերպության գրանցումն իրականացվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում<sup>30</sup>: Կանոնադրության փոփոխությունների ու լրացումների և գրանցման ենթակա տեղեկությունների փոփոխության գրանցման համար պետական տուրքը 10000 դրամ է, իսկ գործադիր դեկավարի տվյալների փոփոխության դեպքում՝ 5000 դրամ<sup>31</sup>: Առցանց գրանցումը ԲՀԿ-ների համար դեռևս հասանելի չէ. ակնկալվում է, որ ՀՀ արդարադատության նախարարությունը այն կգործարկի 2025 թվականին կեսերին<sup>32</sup>:

Գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանված է օրենքով և հրապարակված է պետռեգիստրի կայքում<sup>33</sup>: Գրանցումը մերժելու հիմքերը ներառում են իրավաբանական անձի կազմավորման կարգի խախտումը, սահմանված փաստաթղթերը չներկայացնելը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի կամ անվանման անհամապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին<sup>34</sup>: Մասնավորապես, ըստ օրենքի, ԲՀԿ անվանումը պետք է ցուցում պարունակի կազմակերպության գործունեության բնույթի մասին<sup>35</sup> և չպետք է նույնական լինի որևէ այլ, ներառյալ գրանցմանը նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում լուծարված իրավաբանական անձանց անվանումներին<sup>36</sup>:

Գործնականում չեն արձանագրվել այնպիսի դեպքեր, երբ որևէ ԲՀԿ չի կարողացել գրանցվել: Պետռեգիստրի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2024 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ԲՀԿ-ների կողմից ներկայացված սկզբնական պետական գրանցման և փոփոխությունների պետական գրանցման 797 հայտից մերժվել է տասը, ընդ որում՝ հնարավորություն է տրվել նորից դիմելու հայտում անհրաժեշտ շտկումները կատարելուց հետո<sup>37</sup>:

ԲՀԿ-ները նշում են, որ պետռեգիստրի աշխատակիցները պատրաստակամ են և համագործակցող, ժամանակին հետադարձ կապ են տրամադրում և անհրաժեշտության

<sup>30</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 14:

<sup>31</sup> ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, վերջին փոփ. 22.12.2023, հոդված 16, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=196895>:

<sup>32</sup> Տեղեկությունը տրամադրվել է պետռեգիստրի 2024 թ. սեպտեմբերի 13-ի գրությամբ՝ ի պատասխան ԹԻՀԿ հարցման:

<sup>33</sup> Պետական գրանցման/հաշվառման/ համար անհրաժեշտ փաստաթղթեր, տուրքերի դրույթաչափեր և ժամկետներ, ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստր, <https://www.e-register.am/am/docs/49>:

<sup>34</sup> ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», 03.04.2001, վերջին փոփ. 22.11.2023, հոդված 36, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=186733>:

<sup>35</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 05.05.1998, վերջին փոփ. 10.09.2024, հոդված 58, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=198205>:

<sup>36</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 6, ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 5:

<sup>37</sup> Տեղեկությունը տրամադրվել է պետռեգիստրի 2024 թ. սեպտեմբերի 13-ի գրությամբ՝ ի պատասխան ԹԻՀԿ հարցման:

դեպքում խորհրդատվություն տալիս կանոնադրության և այլ փաստաթղթերում շտկումների վերաբերյալ, որպեսզի մերժման կարիք չլինի<sup>38</sup>: Միևնույն ժամանակ, քանի որ 2023 թվականին պետոեզիստրի մարզային գրասենյակների կեսից ավելին փակվել է օպտիմալացման նպատակներով<sup>39</sup>, ԲՀԿ-ների հիմնադիրները կամ ներկայացուցիչները ստիպված են լինում մեկնել մարզկենտրոն կամ մայրաքաղաք Երևան՝ նոր կազմակերպություն գրանցելու կամ փոփոխություններ կատարելու, ինչը լրացուցիչ դժվարություններ և ծախսեր է առաջացնում հեռավոր բնակավայրերում տեղակայված կազմակերպությունների համար: Երևան հասնելու և պետոեզիստրի կենտրոնական գրասենյակ դիմելու կարիքը ԲՀԿ-ների կողմից հիմնավորվում է նաև նրանով, որ պետոեզիստրի մարզային ներկայացուցիչները բավարար կարողություններ և գիտելիքներ չունեն գրանցման գործընթացին աջակցելու համար<sup>40</sup>:

Օրենսդրությունը ԲՀԿ-ներին ճկունության հնարավորություն է տալիս իրենց կառավարման կառուցվածքը, անդամակցության չափանիշները և կանոնադրության այլ դրույթները սահմանելու հարցում: Այնուամենայնիվ, գործնականում, ըստ ԲՀԿ-ների, պետոեզիստրի աշխատակիցները երբեմն հորդորում են կանոնադրության դրույթների ձևակերպումները համապատասխանեցնել օրինակելի ձևանմուշին<sup>41</sup>: Պետության կողմից տրամադրված նմուշային փաստաթղթերը դյուրինացնում են գրանցման փաթեթի պատրաստման գործընթացը և թույլ են տալիս արագ գրանցվել: Սակայն կանոնադրության նմուշը ղեկավարման կառուցվածքի և անդամակցության պահանջների միայն մեկ տարբերակ է առաջարկում, և չկան ղեկավարման այլ կառույցներ (օրինակ՝ խորհուրդ) նախատեսող այլընտրանքային նմուշներ, որոնք թույլ կտային ԲՀԿ-ներին ղեկավարման այս ձևն ընտրելիս ևս ավելի արագ գրանցվել<sup>42</sup>:

ԲՀԿ-ների կամավոր լուծարումը մի շարք վարչարարական և ֆինանսական դժվարություններ է ենթադրում: Լուծարման գրանցումը սկսելու համար պահանջվող տուրքը կազմում է 20000 դրամ, իսկ լուծարման գործընթացի համար անհրաժեշտ է տարբեր գերատեսչություններից մի շարք փաստաթղթեր հավաքագրել: Գործնականում բազմաթիվ ԲՀԿ-ներ, որոնք փաստացի չեն գործում, գերադասում են լուծարման գործընթաց չսկսել՝ խուսափելով համապատասխան ծախսերից և թղթաբանությունից: Արդյունքում գրանցված ԲՀԿ-ների ներկայիս քանակը և ցանկը չեն արտացոլում գործող կազմակերպությունների իրական պատկերը, և ԲՀԿ հատվածի վերաբերյալ հետազոտությունների կամ զարգացման ծրագրերի իրականացման գործում լրացուցիչ դժվարություններ են առաջանում:

<sup>38</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>39</sup> Ըստ պետոեզիստրի կողմից 2024 թ. սեպտեմբերի 13-ին տրամադրված տեղեկատվության, որը ներկայացվել է ի պատասխան ԹԻՀԿ հարցման՝ 2023 թվականի ընթացքում պետոեզիստրի 31 տարածքային գրասենյակներից 18-ը փակվել են, և 2024 թվականի սեպտեմբերի դրությամբ գործում է 13 տարածքային գրասենյակ (մեծ մասը՝ մարզկենտրոններում):

<sup>40</sup> Ֆոկուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2024 թ.:

<sup>41</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>42</sup> ՀԿ նմուշային փաստաթղթեր, ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստր, <https://www.e-register.am/am/docs/364>:

Չափորոշիչ 3. ԲՅԿ-ներն ազատ են սահմանելու իրենց նպատակներն ու գործունեության տեսակները և կարող են գործել ինչպես իրենց գրանցման երկրի սահմաններում, այնպես էլ այլ սահմաններից դուրս:

ՀՀ օրենսդրության համաձայն՝ ԲՅԿ-ներն ազատ են իրենց նպատակները որոշելիս, իսկ գործունեության ոլորտների սահմանափակումներ չկան: ՀԿ-ներն իրենց գործունեության նպատակները սահմանում են իրենց կանոնադրությամբ. արգելվում է այնպիսի նպատակների սահմանումը, որոնք համարվում են այլ տեսակի հասարակական միավորումների (կրոնական կազմակերպություններ, արհմիություններ կամ կուսակցություններ) նպատակներ<sup>43</sup>: Ինչ վերաբերում է հիմնադրամին, օրենքով այն սահմանվում է որպես ոչ առևտրային կազմակերպություն, որը «հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական և (կամ) այլ հանրագուտ նպատակներ»<sup>44</sup>:

Ըստ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի՝ ՀԿ-ները կարող են անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ առևտրային կազմակերպություններին և այլ պետություններում ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ<sup>45</sup>: «Հիմնադրամների մասին» օրենքով նախատեսվում է հիմնադրամների՝ միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին անդամակցելու իրավունքը<sup>46</sup>:

ԲՅԿ-ների՝ օրենքով թույլատրված գործունեության ոլորտներով զբաղվելու հարցում պետության կողմից կիրառվող գործնական խոչընդոտներ չկան:

Չափորոշիչ 4. Կիրառվող գանկազած պատժամիջոց հստակ է, համապատասխանում է համաչափության սկզբունքին և գանկայի նպատակին համելու համար նվազագույն միջամտություն է նախատեսում:

Օրենսդրությամբ աստիճանական պատժամիջոցներ են սահմանված իրավական պահանջները չկատարող ԲՅԿ-ների համար, այդ թվում՝ կասեցում կոպիտ խախտումների համար: Այնուամենայնիվ, պատժամիջոցների որոշ հիմքեր հստակ չեն:

Գրանցված ԲՅԿ-ները կարող են ենթարկվել վարչական պատասխանատվության օրենքով սահմանված հաշվետվությունը<sup>47</sup> չներկայացնելու, ինչպես նաև կանոնադրությամբ սահմանված նպատակներին անհամապատասխան գործունեություն իրականացնելու դեպքում<sup>48</sup>: Օրենքում հստակ սահմանված չէ, թե հատկապես ինչը կարող է համարվել կանոնադրությամբ սահմանված նպատակներին անհամապատասխան գործունեություն: ԲՅԿ-ների վերահսկողության և պատժամիջոցների կիրառման համար պատասխանատու

<sup>43</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 3:

<sup>44</sup> ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 3:

<sup>45</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 28:

<sup>46</sup> ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 18:

<sup>47</sup> Ըստ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի (հոդված 24)՝ ՀԿ-ն պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը, կազմակերպությունների կողմից հրապարակվող էլեկտրոնային հաշվետվությունների համար նախատեսված համակարգի անձնական էջում և իր պաշտոնական ինտերնետային կայքում (այդպիսին ունենալու դեպքում) հրապարակել գործունեության տարեկան հաշվետվությունը: Ըստ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի (հոդված 39)՝ հիմնադրամը իր գործունեության մասին հաշվետվությունը պարտավոր է հրապարակել յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ից ոչ ուշ՝ հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված համակարգում:

<sup>48</sup> Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 06.12.1985, վերջին փոփ. 20.03.2024, հոդված 169.18, 169.26, 169.27, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=198215>:

լիազոր մարմինը ՀՀ պետական եկամուտների կոմիտեն է (ՊԵԿ): Նշված խախտումների համար տույժերը կիրառվում են աստիճանաբար՝ 30-օրյա միջակայքերով, և ներառում են նախ՝ կազմակերպության ղեկավարին ուղղված նախազգուշացում, ապա 50000 դրամ տուգանք և վերջապես՝ 200000 դրամ տուգանք<sup>49</sup>: ՀՀ գրանցման կասեցման հիմք կարող է լինել հիմնադրելիս կամ գործունեության ընթացքում թույլ տրված օրենքի կոպիտ կամ էական խախտումը: Եթե մեկ տարվա ընթացքում կասեցման հիմքերը չեն վերացվում, կազմակերպությունը ենթակա է լուծարման: Բացի այդ, հարկադիր լուծարման հիմք կարող են լինել ՀՀ գործունեության ընթացքում սահմանադրական կարգը բռնի տապալելու կամ ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու գործողությունները<sup>50</sup>: Նման դեպքերում լուծարման մասին որոշումը կայացնում է դատարանը լիազոր մարմնի պատճառաբանված պահանջի հիման վրա: Հիմնադրամների հարկադիր լուծարման հիմք կարող են լինել գործունեության ընթացքում օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումները, հիմնադրամը ստեղծելիս էական խախտումները կամ կեղծիքները, հիմնադրամի գույքի բավարար չլինելը նրա գործունեության իրականացման համար, կանոնադրությամբ նախատեսված նպատակներից շեղվելը, հիմնադրամի նպատակներին հասնելու անհնարինությունը, իր գործունեությամբ պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները վտանգելը<sup>51</sup>: Հիմնադրամի լուծարումը՝ կամավոր թե հարկադիր, կարող է տեղի ունենալ միայն դատարանի որոշմամբ, որը դատական այլ որոշումների նման կարող է վիճարկվել վերաքննիչ, ապա՝ Վճռաբեկ դատարանում:

ՊԵԿ-ի կողմից տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2024 թվականի հունվար-օգոստոս ամիսներին 67 ՀՀ-ի ու 17 հիմնադրամի վերաբերյալ որոշում է կայացվել՝ 50000 դրամ տուգանք գանձելու մասին հաշվետվություն ներկայացնելու պարտավորությունը նախազգուշացման ընթացքում սահմանված ժամկետում չկատարելու համար, ինչպես նաև 200000 դրամ տուգանք գանձելու մասին որոշումներ՝ 34 ՀՀ-ի ու վեց հիմնադրամի վերաբերյալ, որոնք տուգանքի մասին առաջին որոշումից հետո դարձյալ չեն հրապարակել իրենց հաշվետվությունները համապատասխան էլեկտրոնային հարթակում: Կանոնադրական նպատակներին չհամապատասխանող գործունեության համար վարույթներ չեն հարուցվել<sup>52</sup>: Պետոեզիստրի կողմից 2024 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում ՔՀԿ-ների դիմումների հիման վրա ՀՀ լուծարման 21 դեպք է գրանցվել, ներառյալ մեկ դեպք՝ դատարանի որոշման հիման վրա (մնանկության հիմքով), և հիմնադրամների լուծարման հինգ դեպք, բոլորը՝ դատարանի որոշման հիման վրա, ինչպես և նախատեսված է օրենքով<sup>53</sup>:

2023 թվականից սկսած ոչ առևտրային կազմակերպությունները պետք է հայտարարագիր տրամադրեն իրենց իրական շահառուների վերաբերյալ<sup>54</sup>: Սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու կամ սահմանված կարգի

<sup>49</sup> Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 06.12.1985:

<sup>50</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 32:

<sup>51</sup> ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 34:

<sup>52</sup> Տեղեկությունը տրամադրվել է ՊԵԿ 2024 թ. սեպտեմբերի 20-ի գրությամբ՝ ի պատասխան ԹԻՀԿ հարցման:

<sup>53</sup> Տեղեկությունը տրամադրվել է պետոեզիստրի 2024 թ. սեպտեմբերի 13-ի գրությամբ՝ ի պատասխան ԹԻՀԿ հարցման:

<sup>54</sup> «Ընդլայնվել է իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիր ներկայացնողների շրջանակը. ովքե՞ր և ի՞նչ ժամկետում պետք է ներկայացնեն հայտարարագիրը», ՀՀ արդարադատության նախարարություն, 11.10.2021, <https://www.moj.am/article/2982>:

խախտմամբ ներկայացնելու դեպքում նախատեսված է վարչական պատասխանատվություն՝ ներառյալ 30000-ից մինչև 100000 դրամ տուգանքի նշանակում<sup>55</sup>, մինչև անգամ դատարանի որոշմամբ հարկադիր լուծարում այն դեպքում, եթե հայտարարագիրը երեք տարի անընդմեջ չի ներկայացվել<sup>56</sup> (տես նաև Ոլորտ 8՝ «Պետության կողմից պաշտպանության պարտականություն»): Իրական շահառուների վերաբերյալ առաջին հայտարարագիրը ներկայացվում է անվճար, իսկ իրական շահառուների տվյալների փոփոխման հիմքով հայտարարագրի գրանցման տուրքը կազմում է 10000 դրամ<sup>57</sup>: Պետոեզիստրից ստացված տեղեկատվության համաձայն՝ իրական սեփականատերերի մասին հայտարարագիր չներկայացնելու հիմքով որևէ ՀԿ-ի նկատմամբ տույժ կամ նախազգուշացում չի կիրառվել, իսկ հիմնադրամներից մեկը ստացել է նախազգուշացում<sup>58</sup>: Սակայն հայտարարագիր ներկայացրած ՔՀԿ-ների թիվը հայտնի չէ, քանի որ այս հայտարարագրերի վերաբերյալ ըստ կազմակերպությունների տեսակների առանձնացված վիճակագրություն չի վարվում<sup>59</sup>:

### Չափորոշիչ 5. Պետությունը չի միջամտում ՔՀԿ-ների ներքին գործերին և գործունեությանը:

Օրենքով պետական մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ), ինչպես նաև պաշտոնատար անձանց արգելվում է միջամտել կամ խոչընդոտել հասարակական կազմակերպության օրինական գործունեությանը<sup>60</sup>: Ինչ վերաբերում է հիմնադրամներին, պաշտոնատար անձինք կարող են ներգրավվել կառավարման մարմիններում մասնավորապես այն դեպքերում, երբ հիմնադրամը հիմնադրվում է կառավարության կամ ՏԻՄ որոշմամբ<sup>61</sup>:

Հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների՝ օրենսդրության պահանջներին համապատասխանության վերահսկողության համար պատասխանատու լիազոր մարմինը ՊԵԿ ոչ առևտրային կազմակերպությունների հսկողության բաժինն է: Այս բաժնի գործառույթները ներառում են՝ ոչ առևտրային կազմակերպությունների իրազեկում, օրենքով սահմանված հաշվետվությունների և այլ փաստաթղթերի ընդունում, ուսումնասիրություն, օրենսդրության համապատասխանության գնահատում: Օրենսդրության համապատասխանության գնահատման արդյունքների հիման վրա բաժինը կարող է վարչական վարույթ հարուցել կազմակերպությունների նկատմամբ, առաջարկություններ ներկայացնել խախտումների վերացման կարգի վերաբերյալ, կազմակերպությունների գործունեության կասեցման և լուծարման պահանջ ներկայացնել դատարան<sup>62</sup>: Տվյալ ստորաբաժանումը տեղում ստուգումներ իրականացնելու լիազորություն չունի, ուստի նրա վերահսկողության գործառույթը սահմանափակվում է փաստաթղթերի ուսումնասիրությամբ:

<sup>55</sup> Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 06.12.1985, հոդված 169.29:

<sup>56</sup> ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», 03.04.2001, հոդված 60.5:

<sup>57</sup> ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, հոդված 16:

<sup>58</sup> Տեղեկությունը տրամադրվել է պետոեզիստրի 2024 թ. սեպտեմբերի 13-ի գրությամբ՝ ի պատասխան ԹԻՀԿ հարցման:

<sup>59</sup> Տեղեկությունը տրամադրվել է պետոեզիստրի 2023 թ. ապրիլի 21-ի գրությամբ՝ ի պատասխան ԹԻՀԿ հարցման:

<sup>60</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 9:

<sup>61</sup> ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդվածներ 10 և 12:

<sup>62</sup> ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի Նախագահի 2019 թ. մարտի 4-ի թիվ 137-Լ հրամանը «Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեի ոչ առևտրային կազմակերպությունների հսկողության բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին»,

[https://www.src.am/storage/workers/charter/hr\\_hhpekn\\_2019\\_137\\_I\\_6423f78426d05.pdf](https://www.src.am/storage/workers/charter/hr_hhpekn_2019_137_I_6423f78426d05.pdf):

Թե՛ ԶԿ-ները, թե՛ հիմնադրամները էլեկտրոնային հաշվետվությունների համար նախատեսված համակարգում պետք է ներկայացնեն իրենց գործունեության և բյուջեի վերաբերյալ տարեկան հաշվետվություններ: Այս հաշվետվությունները հրապարակվում են ՊԵԿ-ի կայքում՝ PDF ձևաչափով<sup>63</sup>: 2024 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ 2023 թվականի տարեկան հաշվետվությունները ներկայացրել են 2422 հասարակական կազմակերպություններ և 950 հիմնադրամներ<sup>64</sup> (նախորդ տարվա համեմատ փոքր ան է գրանցվել, քանի որ 2023 թվականին մինչև օգոստոսի 1-ը տարեկան հաշվետվություն էին ներկայացրել 2248 ԶԿ-ներ և 914 հիմնադրամներ): Գործնականում հաշվետվության ներկայացման պահանջները համարվում են պարզ և չձանրաբեռնող, սակայն բազմաթիվ ԶԿ-ների կարծիքով այս պահանջը ավելորդ ձևականություն է<sup>65</sup>: ՊԵԿ կայքի հաշվետվությունների բազան որոնման և գտման

սահմանափակ հնարավորություններ ունի և չի համապատասխանում բաց տվյալների սկզբունքներին: 2024 թվականին իրականացված ստուգումների վերաբերյալ որևէ տվյալ չի հաղորդվել, և, ընդհանուր առմամբ, ԶԿ-ների հարկային ստուգումները սովորաբար հազվադեպ են լինում՝ ընդգրկելով հիմնականում պետական ֆինանսավորում ստացող կազմակերպություններ կամ կրթական հաստատություններ (բուհեր) և բխում են համապատասխան օրենսդրական կարգավորումներից<sup>67</sup>:

### Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Իրավաբանական անձանց պետական ռեգիստրին՝ վերանայել գրանցման համար նախատեսված կանոնադրության նմուշային օրինակը կամ մի քանի ձևանմուշ նախատեսել կազմակերպության որոշ առանձնահատկությունների ավելի ճկուն կարգավորումներ թույլ տալու համար (օրինակ՝ ղեկավարման կառուցվածք, անդամավճար և այլն):
- ԶՅ արդարադատության նախարարությանը՝ հնարավորություն ընձեռել ԶԿ-ներին գրանցվել և իրենց գրանցման տվյալները փոփոխել էլեկտրոնային եղանակով:
- ԶՅ պետական եկամուտների կոմիտեին՝ արդիականացնել ԶԿ հաշվետվությունների էլեկտրոնային բազան՝ տեղեկատվության որոնման և գտման հնարավորություններ նախատեսելով ըստ տարբեր չափորոշիչների, տրամադրելով մեքենայի համար ընթեռնելի, կրկնակի օգտագործման և համեմատության հնարավորություն տվող տվյալներ՝ ըստ «բաց տվյալների» սկզբունքի<sup>66</sup>, ինչպես նաև խթանել բազայի օգտագործումը, օրինակ՝ ԶՅ պետական եկամուտների կոմիտեի կայքի գլխավոր էջում և այլ պետական մարմինների կայքերում հղում տեղադրելով:

<sup>63</sup> Ոչ առևտրային կազմակերպությունների հաշվետվություններ, ԶՅ ՊԵԿ-ի կայքում, <https://www.src.am/am/organizationReportsPage/137/>:

<sup>64</sup> Տեղեկությունը տրամադրվել է ՊԵԿ 2024 թ. սեպտեմբերի 20-ի գրությամբ՝ ի պատասխան ԹԻԶԿ հարցման:

<sup>65</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>66</sup> Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս՝ Open Data Charter Principles («Բաց տվյալների կանոնադրության սկզբունքներ»), Open Data Charter, <https://opendatacharter.org/principles/>:

<sup>67</sup> 2023 թվականի հուլիսի 1-ից մինչև 2024 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացվող համալիր հարկային ստուգումների ծրագիր, ԶՅ ՊԵԿ-ի կայքում, [https://www.src.am/storage/menu\\_contents\\_2023/ck\\_hhpek\\_2023\\_2024\\_inspection\\_plan\\_6478326b713e4.xlsx](https://www.src.am/storage/menu_contents_2023/ck_hhpek_2023_2024_inspection_plan_6478326b713e4.xlsx):

## 3.2 Հավասար վերաբերմունք

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.9/7

Իրավական դաշտ՝	Գործնական դաշտ՝
5.0/7	4.8/7

ՔՀԿ-ների, ինչպես նաև ՔՀԿ-ների և տնտեսվարող սուբյեկտների միջև տարբերակման առումով պետության վերաբերմունքը 2023 թվականի համեմատ չի փոխվել: Գրանցման և հարկման օրենսդրության որոշ դրվագներ ավելի նպաստավոր են գործարար հատվածի համար, թեպետ գործնականում ՔՀԿ-ները զգալիորեն ավելի քիչ են ենթարկվում հարկային ստուգումների: Իրավական կարգավորումները հավասար վերաբերմունք են ապահովում բոլոր ՔՀԿ-ների համար, սակայն որոշակի խտրական դրսևորումներ են արձանագրվել որոշումների կայացման գործընթացում ՔՀԿ-ներին ներգրավելու գործելակերպում: Ընդհանուր առմամբ, տպավորություն կա, որ իշխանությունները հակված են քննարկումներից դուրս մղել խիստ անհամաձայնություններ արտահայտող կազմակերպություններին և ավելի բարեհաճ ու արձագանքող վերաբերմունք ցուցաբերել ծառայություններ մատուցող ՔՀԿ-ների նկատմամբ՝ ի հակադրություն իրավապաշտպան, վերահսկող (watchdog) և բնապահպանական նախաձեռնություններով զբաղվող ՔՀԿ-ների:

Հավասար վերաբերմունքի ոլորտի գնահատականները նույնն են մնացել 2023 թվականի համեմատ: Ինչպես և նախորդ զեկույցում, պետությանը առաջարկվում է միջոցներ ձեռնարկել ՔՀԿ-ների և տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ համահավասար վերաբերմունք ապահովելու ուղղությամբ, քանի որ ընկերությունները հնարավորություն ունեն գրանցվել առցանց եղանակով և անվճար՝ նմուշային փաստաթղթերի օգտագործման շնորհիվ:

### Չափորոշիչ 1. Պետությունը համահավասար կերպով է վերաբերում ՔՀԿ-ներին և առևտրային ընկերություններին:

Գրանցման և հարկման վերաբերյալ օրենքները ՔՀԿ-ներին ավելի քիչ առավելություններ են տալիս, քան տնտեսվարող սուբյեկտներին: Մասնավորապես, տնտեսվարող սուբյեկտների գրանցումը ՔՀԿ-ների գրանցման համեմատ ավելի էժան է և արագ: Այսպես, ընկերությունների գրանցման համար սահմանված առավելագույն ժամկետը երկու օր է՝ ի տարբերություն հիմնադրամների և ՀԿ-ների համար սահմանված 10 օրվա (բացառությամբ այն դեպքի, երբ ՀԿ-ներն օգտագործում են նմուշային կանոնադրություն, և գրանցումը երկու օր է տևում): Այս տարբերությունը պայմանավորված է ՔՀԿ-ների կանոնադրությունը մանրամասնորեն ուսումնասիրելու անհրաժեշտությամբ, եթե այն չի կազմվել ըստ պետության կողմից տրամադրված նմուշային օրինակի: ՔՀԿ-ների գրանցման պետական տուրքը 10000 դրամ է, մինչդեռ առևտրային ընկերությունների գրանցման համար տուրք չի գանձվում, իսկ անհատ ձեռնարկատերերը վճարում են 3000 դրամ: Բացի այդ, ի տարբերություն ՔՀԿ-ների և այլ իրավաբանական անձանց՝ ՄՊԸ-ները և անհատ ձեռնարկատերերը կարող են գրանցվել առցանց եղանակով:



Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս ՔՀԿ-ները առևտրային ընկերությունների համեմատ անբարենպաստ վիճակում են գտնվում: Մասնավորապես, ՔՀԿ-ները չեն կարող օգտվել հարկման պարզեցված ընթացակարգերից, ինչպիսիք են շրջանառության հարկը կամ միկրոձեռնարկատիրությունը: Շրջանառության հարկից կարող են օգտվել 115 միլիոն դրամը չգերազանցող շրջանառություն ունեցող ընկերությունները<sup>68</sup>: Հարկման այս համակարգում ընդգրկվելու դեպքում ՔՀԿ-ները կվճարեն համախառն եկամտի 5%-ը՝ շահութահարկի փոխարեն, որը, որպես կանոն, կազմում է զուտ եկամտի 18%-ը<sup>69</sup>: Միկրոձեռնարկատիրության հարկային համակարգը նախատեսված է գործունեության սահմանափակ տեսակներ իրականացնող այն տնտեսվարող սուբյեկտների համար, որոնց տարեկան շրջանառությունը չի գերազանցում 24 միլիոն դրամը: Այս համակարգում ներառվելու դեպքում տնտեսվարողը ազատվում է բոլոր հարկային պարտավորություններից (բացառությամբ մաքսատուրքի, ակցիզային հարկի և վարձու աշխատողների համար հաստատագրված եկամտային հարկի)<sup>70</sup>:

Ի տարբերություն ընկերությունների՝ ՀԿ-ները պարտավոր են առևտրի հաշվետվություն ներկայացնել, եթե հանրային աղբյուրներից նրանց տարեկան եկամուտը գերազանցում է 10 միլիոն դրամը: Այս գումարն ավելանում է նրանց նախահաշվին պետական գնումների մրցույթներին դիմելիս: Գործնականում սակավաթիվ օրինակներ կան, երբ ՔՀԿ-ները պետական գնումների պատվեր են ստանում՝ հիմնականում որոշակի նեղ մասնագիտացում ունենալու դեպքում, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին վերականգնողական կամ առողջապահական ծառայությունների մատուցման կամ ՄԻԱՎ-ի վերաբերյալ տվյալների մոնիտորինգի ոլորտում<sup>71</sup>:

Մյուս կողմից՝ ՔՀԿ-ներում հարկային ստուգումներն ավելի հազվադեպ են իրականացվում, քան ընկերություններում: ՊԵԿ-ի՝ 2023 թվականի հուլիսից մինչև 2024 թվականի հուլիս ժամանակահատվածի համար սահմանված տարեկան ստուգումների ծրագրում ընդգրկված 2000 կազմակերպությունների մեծամասնությունը մասնավոր ընկերություններ են: Այս ցանկում նշված են ընդամենը վեց հասարակական կազմակերպություն և 29 հիմնադրամ, որոնց մեծ մասը պետության կողմից հիմնադրված կազմակերպություններ կամ կրթական հաստատություններ են (բուհեր)<sup>72</sup>:

Թե՛ ՔՀԿ-ներին, թե՛ տնտեսվարող սուբյեկտներին օրենքով թույլատրվում է ֆինանսավորում ստանալ ցանկացած աղբյուրից, այդ թվում՝ արտերկրից:

<sup>68</sup> ՀՀ հարկային օրենսգրքի, 04.10.2016, վերջին փոփ. 12.06.2024, հոդված 254,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=195238>

<sup>69</sup> Նույն տեղում, հոդված 125:

<sup>70</sup> Նույն տեղում, հոդված 267 և 269:

<sup>71</sup> Աղբյուր՝ PPCM, <https://armeps.am/ppcm/public/contracts>:

<sup>72</sup> 2023 թվականի հուլիսի 1-ից մինչև 2024 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացվող համալիր հարկային ստուգումների ծրագիր, ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ, [https://www.src.am/storage/menu\\_contents\\_2023/ck\\_hhpek\\_2023\\_2024\\_inspection\\_plan\\_6478326b713e4.xlsx](https://www.src.am/storage/menu_contents_2023/ck_hhpek_2023_2024_inspection_plan_6478326b713e4.xlsx): *Նշում*՝ ըստ ՀՀ հարկային օրենսգրքի 2024 թ. փոփոխությունների՝ 2024 թ. հուլիսից հետո տարեկան ստուգումների ծրագիրն այլև չի հրապարակվելու, տե՛ս՝ ՀՀ օրենքը «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», 22.05.2024, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=193377>:

Չափորոշիչ 2. Պետությունը հավասարապես է վերաբերվում բոլոր ՔՀԿ-ներին նրանց հիմնադրման, գրանցման և գործունեության հարցերում:

ՔՀԿ-ների միջև օրենքով սահմանված հատուկ տարբերակում չկա: Հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների համար գրանցման նույն ժամկետներն ու հաշվետվության ներկայացման նույնատիպ պահանջներ են սահմանված: Հիմնադրամների համար տարեկան կտրվածքով աուդիտի հաշվետվության պահանջ է սահմանված, եթե հաշվետու տարվա ավարտին նրանց ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամը<sup>73</sup>: ՀԿ-ներից աուդիտի հաշվետվություն է պահանջվում պետական կամ համայնքային աղբյուրներից ստացած միջոցների օգտագործման վերաբերյալ, եթե այդ միջոցների հանրագումարը հաշվետու տարվա ընթացքում կազմել է 10 միլիոն և ավելի դրամ<sup>74</sup>:

Գործնականում, ըստ ՔՀԿ-ների, պաշտոնյաները ընտրողական մոտեցում են ցուցաբերում ՔՀԿ-ների հետ խորհրդակցելիս՝ ելնելով կազմակերպությունների ու նրանց ներկայացուցիչների քննադատական դիրքորոշումներից (տե՛ս նաև Ոլորտ 5՝ «Որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու իրավունք»): Ընդհանուր առմամբ, ՔՀԿ-ների և փորձագետների շրջանում կարծիք կա, որ իշխանությունները հակված են ավելի բարեհաճ և արձագանքող վերաբերմունք ցուցաբերել ծառայություններ մատուցող ՔՀԿ-ների նկատմամբ՝ ի հակադրություն իրավապաշտպան, վերահսկող (watchdog) և բնապահպանական նախաձեռնություններով զբաղվող ՔՀԿ-ների<sup>75</sup>:

**Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.**

- ՀՀ արդարադատության նախարարությանը՝ հնարավորություն ընձեռել ՔՀԿ-ներին գրանցվել և գրանցման տվյալները թարմացնել էլեկտրոնային եղանակով:
- ՀՀ արդարադատության նախարարությանը՝ նմուշային փաստաթղթերով գրանցման դեպքում գրոյացնել ՔՀԿ-ների գրանցման վճարը (ինչպես դա արվում է ընկերությունների դեպքում):
- ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ տնտեսական գործունեություն իրականացնող ՔՀԿ-ների համար հարկային դաշտում ապահովել առնվազն մասնավոր ընկերություններին հավասար վերաբերմունք՝ թույլ տալով նրանց գործել պարզեցված հարկային համակարգերում:

<sup>73</sup> ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 39:

<sup>74</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 26:

<sup>75</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

### 3.3 Ֆինանսավորման մատչելիություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 5.3/7

Իրավական դաշտ՝ 5.8/7	Գործնական դաշտ՝ 4.8/7
-------------------------	--------------------------

ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս ԲՀԿ-ներին ֆինանսավորում հայցել, ստանալ և օգտագործել բոլոր օրինական աղբյուրներից: Սակայն այս իրավունքը լիարժեք չի իրացվում նվիրաբերություններ հավաքագրելու և ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար խթանող մեխանիզմների պակասի պատճառով, ուստի ԲՀԿ-ների մեծ մասը ապավինում է դրամաշնորհներին: Միջազգային աղբյուրներից նվիրատվություններ, դրամաշնորհներ կամ բնաիրային աջակցություն ստանալու համար իրավական սահմանափակումներ չկան:

Ինչպես և նախորդ տարիներին, աուդիտ իրականացնելու՝ օրենքով սահմանված պահանջը բացասաբար է ազդում ֆինանսավորման մատչելիության վրա, քանի որ բազմաթիվ կազմակերպություններ ազատ միջոցներ չունեն աուդիտի ծախսերը հոգալու համար: Տարեկան շրջանառության սահմանված շեմը անցնելու դեպքում դրամաշնորհային ֆինանսավորումը ԱԱՀ-ով հարկելու պահանջը մտահոգություններ է առաջացրել ԲՀԿ-ների շրջանում և կարող է գործնականում ֆինանսավորման մատչելիության սահմանափակում դառնալ:

Ֆինանսավորման մատչելիության ոլորտի գնահատականները 2023 թվականի համեմատ չեն փոխվել: Աուդիտի պարտադիր պահանջի հետ կապված խնդիրները հասցեագրելու, դրամաշնորհի հասկացությունը սահմանելու և ավելի բարենպաստ հարկային միջավայր ապահովելու վերաբերյալ առաջարկները արդիական են մնացել:

[Չափորոշիչ 1. ԲՀԿ-ներն ազատ են ֆինանսական և նյութական ռեսուրսներ փնտրել, ստանալ և օգտագործել իրենց նպատակների իրականացման ուղղությամբ:](#)

ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս ԲՀԿ-ներին իրենց գործունեության համար ազատորեն հայցել, ստանալ և օգտագործել ֆինանսական ու նյութական ռեսուրսներ: Կազմակերպությունների եկամուտների հնարավոր աղբյուրները թվարկված են «Հասարակական կազմակերպությունների մասին» և «Հիմնադրամների մասին» օրենքներում: ԲՀԿ-ները կարող են անդամավճար գանձել, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել, ստանալ դրամական մուտքեր պետական բյուջեից, ինչպես նաև դրամաշնորհներ, նվիրաբերություններ և օրենքով չարգելված այլ միջոցներ<sup>76</sup>: «Հիմնադրամների մասին» օրենքում որպես ֆինանսավորման հնարավոր աղբյուր է նշված նաև անձեռնմխելի կապիտալով հիմնադրամը, որի մասին դրույթը պետք է ներառված լինի

<sup>76</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 7, ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 8:

կանոնադրության մեջ այդ հիմնադրամի կառավարման և վերահսկման վերաբերյալ այլ դրույթների հետ մեկտեղ:

Օրենսդրությամբ սահմանված աուդիտի ընթացակարգերը խնդրահարույց են ՔՀԿ-ների՝ դրամական միջոցներն օգտագործելու և ֆինանսավորման վերաբերյալ հաշվետվություններ կայացնելու կարողության տեսանկյունից: Այսպես, ՀԿ-ները հանրային միջոցների օգտագործման վերաբերյալ աուդիտորական հաշվետվություն պետք է ներկայացնեն, եթե հաշվետու տարվա ընթացքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից 10 միլիոն և ավելի դրամի չափով գումար են ստացել<sup>77</sup>: Հիմնադրամների համար աուդիտի պահանջը սահմանված է այն դեպքում, եթե հաշվետու տարվա ավարտին հիմնադրամի հաշվեկշռային ակտիվների արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամ<sup>78</sup>: Աուդիտի իրականացումը ՔՀԿ-ների կողմից խնդրահարույց է դիտվում, քանի որ այն լրացուցիչ ֆինանսական ծախսեր է ենթադրում և նվազեցնում է նրանց մրցունակությունը պետական գնումների մրցույթներին մասնակցելիս<sup>79</sup>:

Ոչ առևտրային կազմակերպությունները ինքնաբերաբար դառնում են 20% ԱԱՀ վճարող, եթե նրանց իրացման շրջանառությունը տարվա ընթացքում գերազանցում է 115 միլիոն դրամը, սակայն այս հարկը հաշվարկվում է միայն ԱԱՀ-ի շեմը գերազանցող մասով<sup>80</sup>: Այն դեպքում, երբ ՔՀԿ-ն գերազանցել է այս շեմը (անկախ նրանից, թե այդ եկամուտը ինչ աղբյուրներից է գոյացել, օրինակ՝ դրամաշնորհներից, նվիրատվություններից, թե տնտեսական գործունեությունից), այն պետք է ԱԱՀ գանձի իր ապրանքների, աշխատանքի ու ծառայությունների համար և իրականացնի համապատասխան վճարումը: Ըստ ՀՀ հարկային օրենսգրքի՝ դրամաշնորհների ձևով հատուցմամբ ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և ծառայության մատուցումը ևս ենթակա են ԱԱՀ-ով հարկման, թեև կարող են բացառություններ տրամադրվել կառավարության համապատասխան որոշմամբ<sup>81</sup>: Հարկ է նշել, սակայն, որ որևէ օրենքում «դրամաշնորհ» հասկացությունը սահմանված չէ, սակայն այն օրենսդրության մեջ օգտագործվում է հակասական բնորոշումներով, ինչն այս պահանջի տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս<sup>82</sup>:

ՔՀԿ-ները մտավախություն ունեն դրամաշնորհների՝ ԱԱՀ-ով հարկման պահանջի վերաբերյալ, որը կարող է դիսկեր առաջացնել այն կազմակերպությունների համար, որոնք ապավինում են դրամաշնորհային ֆինանսավորմանը և որոնց շրջանառությունը գերազանցել է 115 միլիոն դրամի շեմը, հատկապես եթե նրանց ծրագրերը չեն համապատասխանում բարեգործական կարգավիճակի չափանիշներին: Սա նշանակում է, որ նրանք պետք է ԱԱՀ վճարեն բոլոր այն դրամաշնորհային միջոցների համար, որոնք ընթացիկ տարում գերազանցում են սահմանված շեմը, իսկ հաջորդ տարի արդեն՝ հարկման ենթակա բոլոր միջոցների համար՝ անկախ եկամտի չափից (քանի որ հաջորդ տարվա սկզբից կհամարվեն ԱԱՀ վճարող կազմակերպություն): Չնայած 2023-2024 թվականներին պետական մարմինների և ՔՀԿ-ների միջև տեղի ունեցած մի շարք հանդիպումներին և քննարկումներին՝ այս հարցով որևէ համաձայնություն դեռևս ձեռք

<sup>77</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 26:

<sup>78</sup> ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 39:

<sup>79</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>80</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդվածներ 59 և 63:

<sup>81</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 4 և 64:

<sup>82</sup> «Դրամաշնորհային ծրագրերը որպես տնտեսական գործունեություն դիտարկելը վտանգում է ՔՀԿ-ների ֆինանսավորման մատչելիության իրավունքը», Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 13.12.2023, <https://transparency.am/hy/media/news/article/5031>

չի բերվել: ԲՀԿ-ները գտնուում են, որ խնդրի լուծումը կարող է լինել «դրամաշնորհների» սահմանումը օրենքով՝ միջազգային պրակտիկային համապատասխան<sup>83</sup>:

Հարկային միջավայրը չի խթանում ֆիզիկական անձանց և ընկերությունների նվիրատվությունները, որոնք ֆինանսավորման կարևոր աղբյուր կարող են լինել: Մասնավոր հատվածի նվիրատվությունների համար առկա արտոնությունները արդյունավետ չեն, իսկ անհատական նվիրատվությունները խթանող իրավական մեխանիզմ չկա: Բնահարային նվիրատվությունները հարկվում են ԱԱՀ-ով՝ բացառությամբ հատուկ դեպքերի (տե՛ս նաև Ոլորտ 9՝ «Պետական աջակցություն»):

Գործնականում ԲՀԿ-ները սահմանափակումների չեն հանդիպում տարբեր աղբյուրներից ֆինանսավորում հայցելու, ստանալու և օգտագործելու հարցում: Լայն հանրության շրջանում բարեգործության մշակույթը վերջին տարիներին աստիճանաբար զարգանում է<sup>84</sup>, և ավելի շատ են այն կազմակերպությունները, որոնք ձգտում են զարգացնել քառուղֆանդինգի իրենց հմտությունները և ներկայացնել քառուղֆանդինգի նախագծեր<sup>85</sup>: Այդուհանդերձ, դոնոր կազմակերպությունների ֆինանսավորումը դեռևս ԲՀԿ-ների ֆինանսավորման հիմնական աղբյուրն է, իսկ նվիրատվությունները, ձեռնարկատիրական գործունեությունը, անդամավճարները և մասնավոր հատվածի աջակցությունը ԲՀԿ-ների եկամուտների միայն փոքր մասն են կազմում: Ֆինանսավորման հնարավորությունների սահմանափակ լինելը ԲՀԿ-ների կողմից առավել հաճախ է նշվել որպես գործունեության մարտահրավեր<sup>86</sup>: ԲՀԿ-ները հասկանում են, որ ինքնաբավությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ֆինանսավորման բազմազան աղբյուրներ ունենալ, սակայն դա խնդրահարույց է մի շարք հանգամանքների պատճառով: Մասնավոր ընկերությունները նախընտրում են բարեգործական ծրագրեր իրականացնել առանց ԲՀԿ-ների ներգրավման՝ իրենց ստեղծած հիմնադրամների միջոցով, և մտահոգություն են հայտնում ԲՀԿ-ների կողմից գումարների օգտագործման թափանցիկության և հաշվետվողականության վերաբերյալ: Միևնույն ժամանակ, ԲՀԿ-ներին աջակցություն տրամադրելու փորձ ունեցող ընկերությունների մեծ մասը դրական է գնահատում համագործակցությունը<sup>87</sup>: ԲՀԿ-ների կողմից սոցիալական ձեռներեցության մի շարք նախաձեռնություններ են իրականացվել, ընդ որում շատերը՝ դոնորների ֆինանսավորման միջոցով: Այնուամենայնիվ, սոցիալական ձեռներեցության վերաբերյալ որևէ իրավական կարգավորում չկա, որը թույլ կտար տարբերակված մոտեցում ցուցաբերել և աջակցություն տրամադրել ԲՀԿ-ների ձեռնարկատիրական նախաձեռնություններին՝ ի տարբերություն մասնավոր ընկերությունների գործունեության:

<sup>83</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>84</sup> Ըստ CAF World Giving Index զեկույցի՝ Հայաստանի նվիրատվության ընդհանուր ցուցանիշը 2019-2024 թվականներին 21%-ից հասել է 29%-ի, իսկ գումար նվիրաբերած չափահաս անձանց տոկոսը աճել է 2019 թ. 10-ից մինչև 17% 2023 թ. և 15%՝ 2024 թ.: Տե՛ս՝ World Giving Index (Բարեգործության համաշխարհային ինդեքս), CAF, <https://www.cafonline.org/insights/research/world-giving-index>:

<sup>85</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>86</sup> 'Update of the In-depth Assessment of Existing and Emerging CSO Initiatives and State of Civic Space in Armenia' («Հայաստանում առկա և ձևավորվող ԲՀԿ նախաձեռնությունների և բաղաբացիական տարածքի վիճակի խորքային գնահատման թարմացում»), People in Need, հուլիս 2024 թ., [https://armenia.peopleinneed.net/media/publications/2396/file/update-assessment\\_-\\_civic-space-in-armenia.pdf](https://armenia.peopleinneed.net/media/publications/2396/file/update-assessment_-_civic-space-in-armenia.pdf).

<sup>87</sup> Բաղաբացիական հասարակության կազմակերպությունների մասնավոր ոլորտի կողմից ֆինանսավորման հնարավորությունների գնահատում, «ՍԻՎԻՏՍՍ ԷՅԷՍ» ՓԲԸ, 2023, [https://www.counterpart.org/wp-content/uploads/2024/02/REPORT\\_Private-sector-funding-CSO.pdf](https://www.counterpart.org/wp-content/uploads/2024/02/REPORT_Private-sector-funding-CSO.pdf):

Միևնույն ժամանակ, ԶՀԿ-ների՝ սոցիալական ձեռնարկություն կառավարելու կարողությունները սահմանափակ են<sup>88</sup>:

Չափորոշիչ 2. Ֆինանսավորման կամ նյութական ռեսուրսների տեղական, օտարերկրյա և միջազգային աղբյուրների միջև տարբերություն չի դրվում:

ԶՀԿ-ների համար միջազգային աղբյուրներից նվիրատվություններ, դրամաշնորհներ կամ բնաիրային աջակցություն ստանալու համար իրավական սահմանափակումներ չկան: Հարկային ընթացակարգերն ավելի նպաստավոր են որոշակի օտարերկրյա աղբյուրներից ֆինանսավորվելու դեպքում, երբ ԶՀԿ-ները կարող են ազատվել ԱԱՀ-ից դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում հատուկ միջկառավարական համաձայնագրերի հիման վրա ապրանքներ կամ ծառայություններ գնելիս (օրինակ՝ ԵՄ-ից կամ ԱՄՆ ՄՉԳ-ից ֆինանսավորում ստանալու դեպքում): Այլ աղբյուրներից ֆինանսավորվելու դեպքում հարկային արտոնություններ կարող են տրամադրվել տվյալ ծրագիրը որպես բարեգործական որակող համապատասխան լիազոր մարմնի որոշմամբ, որը, սակայն, երկարատև վարչարարական գործընթաց է պահանջում (տե՛ս նաև Ոլորտ 9՝ «Պետական աջակցություն»): Ինչ վերաբերում է միջազգային աղբյուրներից բնաիրային աջակցության հարկմանը, ապա արտերկրից ստացած ապրանքները ենթակա են մաքսատուրքի վճարման, եթե դրանք բարեգործական ծրագրերի շրջանակներում չեն ներմուծվել:

Ի տարբերություն նախորդ տարիների, երբ ԶՀԿ-ներին «օտար շահերին ծառայելու» համար մեղադրող բացասական խոսույթները կապված էին Բաց հասարակության հիմնադրամի կողմից ֆինանսավորման հետ<sup>89</sup>, 2024 թվականին այս խոսույթները ավելի շատ կապված էին ոչ թե ֆինանսավորման աղբյուրի, այլ գործունեության տեսակի հետ: Այսպես, բնապահպանության ոլորտի որոշումների դեմ բարձրաձայնող ԶՀԿ-ները սոցիալական ցանցերում հարձակումների և զրպարտող մեղադրանքների են բախվել (տե՛ս նաև Ոլորտ 8՝ «Պետության կողմից պաշտպանության պարտականություն»):

**Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.**

- ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ապահովել, որ պետական մարմինները դրամաշնորհներ և գնումների պայմանագրեր տրամադրելիս տրամադրեն պարտադիր աուդիտի համար անհրաժեշտ ծախսերը, ինչպես նաև քննարկել աուդիտի ենթակա գումարի շեմի բարձրացման հնարավորությունը աուդիտի համար նախատեսված ծախսը նվազեցնելու և այդ գումարը դրամաշնորհային բյուջե ուղղելու նպատակով:
- ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ սահմանել «դրամաշնորհ» հասկացությունը՝ հաշվի առնելով միջազգային առաջատար փորձը և խորհրդակցելով ԶՀԿ-ների հետ, և դրամաշնորհային ծրագրերը և ոչ առևտրային գործունեության այլ տեսակները չհամարել ձեռնարկատիրական գործունեություն:

<sup>88</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>89</sup> Տե՛ս «ԶՀԿ չափիչ 2021 Հայաստան», ԹԻՀԿ, ECNL, 2022, [https://csometer.info/sites/default/files/2023-04/2021%20Armenia%20CSO%20Meter%20Country%20Report%20ARM\\_3\\_0.pdf](https://csometer.info/sites/default/files/2023-04/2021%20Armenia%20CSO%20Meter%20Country%20Report%20ARM_3_0.pdf), «Ապատեղեկատվությունն ու կեղծ տեղեկատվությունը Հայաստանում. դիմակայելով կեղծ պատմություններին», Freedom House, հունիս 2021 թ., [https://freedomhouse.org/sites/default/files/2021-07/Disinformation-in-Armenia\\_Am-final.pdf](https://freedomhouse.org/sites/default/files/2021-07/Disinformation-in-Armenia_Am-final.pdf):

- ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ստեղծել ավելի բարենպաստ հարկային միջավայր, որը կբարելավի ՔՀԿ-ների հնարավորությունները տարբեր աղբյուրներից ֆինանսավորում և բնափրային աջակցություն հայթայթելու գործում, ներառյալ անհատներից և տնտեսվարող սուբյեկտներից նվիրատվությունների ստացումը և ուղղակի ձեռնարկատիրական գործունեությունը:

### 3.4 Խաղաղ հավաքների ազատություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 5.2/7

Իրավական դաշտ՝ 5.7/7	Գործնական դաշտ՝ 4.7/7
-------------------------	--------------------------

Հավաքների ազատությունը պաշտպանվում է ՀՀ օրենսդրությամբ՝ միջազգային չափորոշիչներին համահունչ: Յուրաքանչյուր ոք կարող է կազմակերպել խաղաղ հավաքներ և մասնակցել դրանց, և այս իրավունքը պետք է պատշաճ պաշտպանվի, անկախ այն բանից, թե որտեղ են կազմակերպվում հավաքները: Ըստ օրենքի՝ բացօթյա հանրային հավաքների կազմակերպիչները հավաքին 100 հոգուց ավելի մասնակից ակնկալելու դեպքում պետք է հավաքի մասին իրազեկեն համայնքապետարանին: Ինքնաբուխ և շտապ հավաքների դեպքում նախնական իրազեկում ներկայացնելը պարտադիր չէ: Միաժամանակյա և հակադարձ ուղղվածությամբ հավաքների համար սահմանափակումներ չկան: Ըստ օրենքի՝ ոստիկանությունը պարտավոր է ցանկացած դեպքում աջակցել հավաքին, եթե հավաքը խաղաղ բնույթ ունի՝ անկախ իրազեկման պահանջի իրականացումից: Ոստիկանությունը կարող է դադարեցնել հավաքը միայն այն դեպքում, եթե այլ կերպ հնարավոր չէ կանխել այլ անձանց հիմնական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը:

Այս ոլորտի իրավական դաշտում 2024 թվականի կարևոր զարգացում էր խորհրդարանի կողմից «Ոստիկանության գվարդիայի մասին» նոր օրենքի և «Հավաքների ազատության մասին» օրենքում փոփոխությունների ընդունումը: Ակնկալվում է, որ այս օրենսդրական փաթեթը կնպաստի հավաքների մասնակիցների իրավունքների իրացման բարելավմանը, քանի որ այն, ի թիվս այլ դրույթների, նախատեսում է ոստիկանության գվարդիայի ծառայողների կանոնավոր վերապատրաստում, հատուկ միջոցների օգտագործման պայմանների հստակեցում և հավաքի մասին ծանուցման նախնական ժամկետի կրճատում:

Այնուամենայնիվ, գործնականում բազմաթիվ դեպքեր են արձանագրվել, երբ պետությունը չի կարողացել երաշխավորել և պաշտպանել հավաքների ազատությունը: Քաղաքացիներին անօրինական կերպով բերման ենթարկելու, բռնության և լուսաձայնային նշանների ենթադրաբար ապօրինի կիրառման դեպքեր են արձանագրվել, իսկ օրինախախտ ոստիկանական ծառայողների նկատմամբ արդյունավետ պատժամիջոցներ չեն կիրառվել: Միևնույն ժամանակ, ՀՀ ներքին գործերի նախարարությունը հրաժարվել է տեղեկատվություն

տրամադրել հունիսին տեղի ունեցած հավաքի ժամանակ հատուկ միջոցների կիրառման վերաբերյալ, այնուհետև գաղտնագրել ոստիկանությունում հատուկ միջոցների առկայության, քանակի և տեսակների հետ կապված տվյալները:

2024 թվականի մայիս-հունիս ամիսների հավաքների ընթացքում տեղ գտած աննախադեպ խախտումների և ոստիկանական բռնությունների արդյունքում այս ոլորտի գործնական դաշտի գնահատականը վատթարացել է (2023 թվականի 4,9-ից 2024 թվականին դառնալով 4,7), որը բերել է ընդհանուր գնահատականի նվազմանը (2023 թվականի 5,3-ից 2024 թվականին դառնալով 5,2): «ԶԳԿ չափիչի» նախորդ զեկույցների առաջարկությունները՝ հավաքների ոստիկանական վերահսկողության ընթացքում որևէ անօրինական կամ անհետևողական մոտեցում բացառելու և իրավախախտ ոստիկաններին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, չեն իրականացվել և դեռևս արդիական են մնում: Բացի այդ, ՀՀ ներքին գործերի նախարարությանը առաջարկվում է նաև հավաքների ընթացքում հատուկ միջոցներ չօգտագործել՝ առանց անհրաժեշտության և համաչափության սկզբունքների վրա հիմնված բավարար հիմքերի, և գաղտնագրծել հատուկ միջոցների վերաբերյալ տեղեկությունները:

Չափորոշիչ 1. Յուրաքանչյուր ոք կարող է ազատորեն օգտվել խաղաղ հավաքների կազմակերպման և մասնակցության իրավունքից:

Ըստ օրենքի՝ յուրաքանչյուր ոք կարող է կազմակերպել խաղաղ հավաքներ և մասնակցել դրանց, և այդ հավաքները պետք է պատշաճ պաշտպանվեն, անկախ այն բանից, թե որտեղ են կազմակերպվում: Հավաքների ազատությունը պաշտպանվում է ՀՀ Սահմանադրությամբ և կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով<sup>90</sup>: «Հավաքների ազատության մասին» օրենքում հավաքի հասկացությունը հետևյալ կերպ է սահմանվում՝ «հավաքը երկու կամ ավելի անձանց խաղաղ և առանց զենքի ժամանակավոր ներկայությունն է որևէ վայրում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ ընդհանուր կարծիք ձևավորելու կամ արտահայտելու մտադրությամբ»<sup>91</sup>: Օրենքը սահմանափակումներ է նախատեսում հավաքների ազատության իրավունքի իրացման նկատմամբ որոշակի անձանց, օրինակ՝ դատավորների, դատախազների, քննիչների, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների համար. նրանք հավաքներին մասնակցելիս պետք է քաղաքական չեզոքություն ցուցաբերեն և ծառայողական համազգեստ չկրեն<sup>92</sup>: Ինքնաբուխ և շտապ հավաքների դեպքում նախնական իրազեկում ներկայացնելը պարտադիր չէ: Միաժամանակյա և հակադարձ ուղղվածությամբ հավաքների համար սահմանափակումներ չկան: Ընդհանուր առմամբ, խաղաղ հավաքների վերաբերյալ օրենսդրությունը գնահատվում է որպես միջազգային չափորոշիչներին համապատասխան: Թվային կամ առցանց հավաքների վերաբերյալ կարգավորումներ չկան: Սա մի կողմից նշանակում է, որ դրանց համար ներկայումս սահմանափակումներ չեն սահմանվել, մյուս

<sup>90</sup> ՀՀ Սահմանադրություն, փոփ. 06.12.2015, հոդված 44:

<sup>91</sup> ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, վերջին փոփ. 05.10.2022, հոդված 2, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=178234>.

<sup>92</sup> ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, հոդված 8:



կողմից՝ միջոցներ չեն նախատեսված նման հավաքներին մասնակցությունը պաշտպանելու համար:

2024 թվականին հավաքի մասնակիցներին հետապնդելու և ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառման բազմաթիվ դեպքեր են եղել: Տարվա ընթացքում բազմաթիվ հավաքներ են անցկացվել՝ հիմնականում քաղաքական որոշումներին հակադրելու նպատակով և վարչապետի հրաժարականի կոչերով: Ադրբեջանի հետ սահմանագամային գործընթացի հետ կապված անվտանգության աճող մտահոգությունների արդյունքում ձևավորվեց «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը: Մի շարք հանրահավաքներ ու ցույցեր կազմակերպվեցին Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում և ապա՝ Երևանում: Չնայած հավաքները հիմնականում խաղաղ բնույթ էին կրում, որոշ ցուցարարների կողմից բռնության դրսևորումներ են արձանագրվել: Այնուամենայնիվ, ոստիկանության արձագանքը երբեմն անհամաչափ և կոպիտ է եղել: Օրինակ՝ որոշ դեպքերում ոստիկանության աշխատակիցները բերման են ենթարկել մեծ թվով քաղաքացիների և բռնություն կիրառել ինչպես կազմակերպիչների, այնպես էլ խաղաղ ցուցարարների և լրագրողների հանդեպ<sup>93</sup>: Մասնավորապես, բռնի գործողություններ են արձանագրվել 2024 թվականի մայիսի 27-ի բողոքի ցույցերի ժամանակ, երբ ընդհանուր առմամբ 285 անձ բերման է ենթարկվել, իսկ հետո ազատ արձակվել<sup>94</sup>: Ոստիկանության կողմից հավաքի մասնակիցների նկատմամբ բռնությունները գազաթնակետին հասան հունիսի 12-ին, երբ հազարավոր ցուցարարներ հավաքվեցին խորհրդարանի շենքի մոտ: Այն բանից հետո, երբ ցուցարարները սկսեցին հրել ոստիկանական շղթան և ոստիկանների ու ցուցարարների միջև բախումներ սկսվեցին, ոստիկանությունը լուսաձայնային նռնակներ կիրառեց, ինչի հետևանքով վնասվածքներ ստացան ինչպես ցուցարարներ, այնպես էլ լրատվամիջոցների ներկայացուցիչներ<sup>95</sup>: Ըստ մոնիտորինգային զեկույցի տվյալների՝ տուժել է 101 մարդ, որից 57-ը՝ նռնակների բեկորներից<sup>96</sup>: Մի խումբ ՔՀԿ-ներ և իրավապաշտպաններ դատապարտեցին ոստիկանության կողմից ֆիզիկական ուժի և բռնության կիրառումը ցուցարարների նկատմամբ հավաքի վայրում և բերման ենթարկելու ընթացքում, իսկ լուսաձայնային նռնակների օգտագործումը որակեցին որպես ոչ անհրաժեշտ և անհամաչափ, հետևաբար՝ ոչ իրավաչափ<sup>97</sup>: ՔՀԿ-ների մեկ այլ խումբ նույնպես քննադատել է ոստիկանությանը պատշաճ մասնագիտական հմտություն չդրսևորելու և անհամաչափ ուժ կիրառելու, չափից շատ քանակով և սահմանված կարգի խախտմամբ նռնակներ օգտագործելու համար՝ նշելով նաև, որ շարժման ղեկավարներն ու ընդդիմության ներկայացուցիչներն իրենց ելույթներում նախորդ երեք ամիսների ընթացքում

<sup>93</sup> Տե՛ս «ՔՀԿ չափիչ. ՀՀ Կառավարության դեմ գանգվածային բողոքի ակցիաներ, որոնք ուղեկցվում են անօրինական կալանավորումներով և ոստիկանության բռնությամբ», Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 01.06.2024, <https://transparency.am/hy/media/news/article/5118>:

<sup>94</sup> «Բերման ենթարկված 285 անձինք ազատ են արձակվել. մանրամասներ՝ բողոքի ակցիաների մասին», Առաջին լրատվական այիք, 27.05.2024, <https://www.1lurer.am/hy/2024/05/27/1/1131838>

<sup>95</sup> 'Protesters, Police Clash Outside Armenian Parliament (UPDATED)' (Բախում ցուցարարների և ոստիկանության միջև Հայաստանի խորհրդարանի մոտ (ԹԱՐՄԱՑՎԱԾ)), Azatutyun.am, 12.06.2024, <https://www.azatutyun.am/a/32990293.html>, ՀԱՏՈՒԿ ՉԵԿՈՒՅՑ Հունիսի 12-ին Երևանում՝ Ազգային ժողովի նստավայրի մոտ տեղի ունեցած հավաքի և ոստիկանության գործողությունների վերաբերյալ, Քաղաքական իրավունքների հայկական կենտրոն, Հայաստանի Հեյսինկյան կոմիտե, 17.06.2024, Երևան, [https://armhels.com/wp-content/uploads/2024/08/Joint\\_Ad\\_Hoc\\_Report\\_HCA\\_ACPH\\_17.06.2024\\_arm.pdf](https://armhels.com/wp-content/uploads/2024/08/Joint_Ad_Hoc_Report_HCA_ACPH_17.06.2024_arm.pdf):

<sup>96</sup> Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում (հունվար-հունիս, 2024), Չեկույց, Հայաստանի Հեյսինկյան կոմիտե, Երևան 2024, [https://armhels.com/wp-content/uploads/2024/08/FoA\\_monitoring\\_january\\_june\\_2024\\_arm.pdf](https://armhels.com/wp-content/uploads/2024/08/FoA_monitoring_january_june_2024_arm.pdf):

<sup>97</sup> «Դատապարտում ենք ոստիկանության անօրինական գործողությունները», «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, 14.06.2024, <https://prwb.am/2024/06/14/datapartum-enkh-ostikanuthyan-anorinakan-gortcoghuthunnereh/>:

«գարգացնում էին ծայրահեղացնող, ապա նաև բռնի գործողությունների դրդող հռետորաբանություն»<sup>98</sup>: Այս երկու խմբերն էլ պահանջել են վարույթ նախաձեռնել մասնակիցների և լրատվամիջոցների ներկայացուցիչների նկատմամբ հատուկ միջոցների և բռնի ուժի կիրառման փաստով և անկախ ու արդյունավետ հետաքննություն իրականացնել:

Հունիսի 12-ի հավաքի մասնակիցների նկատմամբ քրեական գործեր են հարուցվել, այդ թվում՝ 14 անձի՝ խուլիգանության, իսկ մեկի դեպքում՝ «զանգվածային անկարգություններին» մասնակցելու հատկանիշներով: Միևնույն ժամանակ, որևէ ոստիկանի դեռևս մեղադրանք չի առաջադրվել 2024 թվականի նոյեմբերի դրությամբ<sup>99</sup>:

## Չափորոշիչ 2. Պետությունն աջակցում է խաղաղ հավաքների ընթացքին և պաշտպանում է խաղաղ հավաքները:

Օրենքով սահմանված՝ հավաքի մասին իրազեկման գործընթացը հիմնականում համահունչ է միջազգային իրավունքին: Բացօթյա հանրային հավաքների համար օրենքը պահանջում է հավաքի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 7 օր, և ոչ շուտ, քան 30 օր առաջ գրավոր իրազեկում ներկայացնել այն համայնքի ղեկավարին, որտեղ նախատեսվում է անցկացնել հավաքը: Մինչև 100 մասնակից ունեցող, շտապ և ինքնաբերական հավաքների, ինչպես նաև առցանց հավաքների և փակ կամ մասնավոր տարածքում անցկացվող հավաքների համար իրազեկում չի պահանջվում: Իրազեկման նպատակը պետության կողմից հավաքի բնականոն և խաղաղ ընթացքն ապահովելու, ինչպես նաև այլ անձանց սահմանադրական իրավունքների ու հանրության շահերի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելն է<sup>100</sup>:

Իրազեկումը քննարկվում է մուտքագրվելու պահից առավելագույնը 5 օրվա ընթացքում և ուղարկվում է ոստիկանություն կարծիք ստանալու նպատակով: Եթե մտադրություն կա հավաքի անցկացման համար սահմանափակումներ կիրառել կամ արգելել հավաքը, ապա ՏԻՄ-ը լսումներ է անցկացնում և ծանուցում հավաքի կազմակերպիչներին: Սահմանափակումներ կարող են կիրառվել, եթե նախատեսված հավաքի ժամանակը, վայրը կամ եղանակը անմիջականորեն կարող են հանգեցնել այլ անձանց հիմնարար իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակման: Նման դեպքում լիազոր մարմինը կազմակերպիչին կարող է առաջարկել փոխել հավաքի անցկացման ժամանակը, վայրը կամ եղանակը: Հավաքն արգելվում է, եթե հավաքի նպատակն է սահմանադրական կարգի բռնի տապալումը, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելը, բռնություն կամ պատերազմ քարոզելը: Եթե սահմանափակման կամ արգելման որոշում չի ընդունվում, ապա համարվում է, որ իրազեկումն ընդունված է ի գիտություն<sup>101</sup>: Հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների դեմ կարող է հայց ներկայացվել վարչական դատարան՝

<sup>98</sup> «Հայտարարություն 2024 թ. հունիսի 12-ի դեպքերի մասին», Իրազեկ քաղաքացիների միավորում, 19.06.2024, <https://uic.am/19287>:

<sup>99</sup> «Աժ շենքի մոտ բախումներից երեք ամիս անց էլ գործում մեղադրյալ ոստիկան չկա», Azatutyun.am, 12.09.2024, <https://www.azatutyun.am/a/azh-shenqi-mot-bakhumnerits-erek-amis-ants-el-gortsum-meghadryal-vostikan-chka-33117700.html>, ««Խափանել են հանրային միջոցառումը». դատախազները՝ հունիսի 12-ի գործով դատական նիստում», Azatutyun.am, 02.12.2024, <https://www.azatutyun.am/a/khanel-en-hanrayin-mijotsarumy-datkhaznery-hunisi-12-i-gortsov-dakan-nistum/33223947.html>:

<sup>100</sup> ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, հոդվածներ 9-13:

<sup>101</sup> ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, հոդվածներ 15-20:

հավաքի նախատեսված օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ: Հայցադիմումները քննվում են 2 օրացուցային օրվա ընթացքում<sup>102</sup>:

Գործնականում 2024 թվականի հավաքների մի մասն անցկացվել է առանց իրազեկման՝ որպես շտապ կամ ինքնաբուխ հավաք: Հավաքները վերահսկող ոստիկանական ծառայողների և այլ խմբերի (օրինակ՝ հատուկ ջոկատների) գործողությունները երբեմն անհետևողական էին: Օրինակ՝ երբ հանրահավաքներից մեկի ժամանակ մասնակիցները արգելափակել էին երթևեկությունը, հավաքի վայրում ներկա ոստիկանության ներկայացուցիչը ցուցարարներին ժամանակ տրամադրեց փողոցն ազատելու համար, սակայն հատուկ նշանակության գումարտակի ներկայացուցիչներն անմիջապես սկսեցին բերման ենթարկել հավաքի մասնակիցներին, այդ թվում՝ փողոցն ազատելուց հետո, ինչպես նաև կամայական կերպով բերման էին ենթարկում պատահական քաղաքացիների մայրերից: Բացի այդ, տարբեր հավաքների ընթացքում ոստիկանությունը խաղաղ ցուցարարներին բերման էր ենթարկել առանց որևէ իրավական հիմքի, ինչպես նաև բերման ենթարկվածներին ոստիկանության բաժիններում պահել օրենքով թույլատրված առավելագույն ժամանակահատվածից ավելի երկար<sup>103</sup>:

2024 թվականի հոկտեմբերին Ազգային ժողովն ընդունեց «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքը և «Հավաքների ազատության մասին» ու հարակից այլ օրենքների փոփոխությունները: «Հավաքների ազատության մասին» օրենքի փոփոխություններով, ի թիվս այլ կետերի, նախատեսվել են հավաքի մասին իրազեկման ավելի սեղմ ժամկետներ («հավաքի օրվանից ոչ ուշ, քան յոթ օրվա» փոխարեն՝ «ոչ ուշ, քան հավաքի սկզբից 72 ժամ առաջ»), և ուժը կորցրած է համարվել հրատապ և ինքնաբուխ հավաքների առավելագույն տևողության (վեց ժամ) մասին դրույթը<sup>104</sup>: Նույն փաթեթի շրջանակներում ընդունված «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքով (որն ուժի մեջ է մտնելու 2025 թվականի նոյեմբերին) ոստիկանության գվարդիայի հիմնական գործառնությունների շրջանակում նշվում է հավաքների բնականոն ընթացքի ապահովումը և դրանց մասնակիցների իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանությունը: Բացի այդ, օրենքը ոստիկանության գվարդիայի ծառայողներին պարտավորեցնում է հատուկ պատրաստություն և պարբերական վերապատրաստում անցնել իրենց գործունեության ոլորտներում, ներառյալ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ: Օրենքը նաև նախանշում է այն հատուկ պայմանները, որոնց դեպքում ոստիկանության գվարդիան կարող է ֆիզիկական ուժ կամ հատուկ միջոցներ գործադրել<sup>105</sup>: Այսպիսով, նոր օրենքը և օրենսդրական փոփոխությունները կնպաստեն հավաքների իրազեկման պահանջի կատարման և ինքնաբուխ կամ հրատապ հավաքների անցկացման դյուրինացմանը՝ նախադրյալներ ստեղծելով նաև ոստիկանության անհետևողական և անհամաչափ գործողությունների ռիսկերը մեղմելու համար:

<sup>102</sup> ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 05.12.2013, վերջին փոփ. 09.06.2022, հոդված 204, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164969>:

<sup>103</sup> Նաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում (հունվար-հունիս, 2024), Չեկույց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան 2024, հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>104</sup> ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, 24.10.2024, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=199673>:

<sup>105</sup> ՀՀ օրենքը «Ոստիկանության գվարդիայի մասին» 24.10.2024, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=199700>:

Համացանցի հասանելիությունը սահմանափակելու կամ գալիք հավաքների մասին տեղեկատվության տարածման գործում հավաքների կազմակերպիչներին որևէ այլ կերպ խոչընդոտելու փաստագրված դեպքեր չկան:

[Չափորոշիչ 3. Պետությունն անհարկի պահանջներ չի առաջադրում խաղաղ հավաքների կազմակերպիչների և մասնակիցների նկատմամբ:](#)

Ըստ օրենքի՝ հավաքի ղեկավարը հավաքի ընթացքում պարտավոր է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հավաքի բնականոն ընթացքն ապահովելու համար, մասնավորապես հավաքի մասնակիցների կողմից բռնի գործողությունները կանխելու, բռնությունից զերծ մնալու և ուժի կիրառմանը պատրաստ մասնակիցներից սահմանազատվելու կոչերի միջոցով: Կազմակերպիչը պարտավոր է նաև հավաքի մասնակիցներին տեղեկացնել ոստիկանության ծառայողների պահանջների մասին, օրինակ եթե պահանջվում է ազատել փողոցը կամ դադարեցնել հավաքը<sup>106</sup>: Ոստիկանությունը պարտավոր է հավաքի մասին տեղեկատվություն ստանալուց հետո անհապաղ նշանակել իր ներկայացուցչին և հավաքի անցկացման վայրից հեռացնել այն անձանց, որոնք կոպտորեն խախտում են հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը<sup>107</sup>: Պետության կողմից հավաքի անցկացման և կամ առնչվող ծախսերի համար որևէ վարձավճար սահմանված չէ: Հավաքի մասնակիցների գործողությունների համար կազմակերպիչներին պատասխանատվության ենթարկելու որևէ պահանջ օրենքով սահմանված չէ:

Կազմակերպիչների կողմից հավաքների վերաբերյալ տեղեկատվության տարածման (այդ թվում՝ առցանց եղանակների միջոցով) կամ հավաքների ընթացքում սարքավորումների օգտագործման հետ կապված որևէ սահմանափակում չի արձանագրվել:

[Չափորոշիչ 4. Իրավապահ մարմիններն աջակցում են խաղաղ հավաքներին և պատասխանատու են իրենց ներկայացուցիչների գործողությունների համար:](#)

Օրենքը հստակ կարգավորումներ է սահմանում ոստիկանության կողմից ուժի, հատուկ միջոցների և հսկողության սարքերի կիրառման վերաբերյալ: Սակայն հավաքների ոստիկանական վերահսկման վերաբերյալ առանձին ենթաօրենսդրական կարգավորումներ չկան: Իրազեկման պահանջի խախտման դեպքում ոստիկանությունը պետք է բարձրախոսով տեղեկացնի, որ հավաքն անօրինական է, և որ մասնակիցները կարող են ենթարկվել պատասխանատվության: Միաժամանակ, ըստ օրենքի, ոստիկանությունը պարտավոր է ցանկացած դեպքում աջակցել հավաքին, եթե հավաքը խաղաղ բնույթ ունի՝ անկախ իրազեկման պահանջի իրականացումից: Ոստիկանությունը կարող է դադարեցնել հավաքը միայն այն դեպքում, եթե այլ կերպ հնարավոր չէ կանխել այլ անձանց հիմնական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը: Այդ դեպքում հավաքը դադարեցնելու պահանջով ոստիկանությունը դիմում է հավաքի ղեկավարին, այնուհետև (հավաքի ղեկավարի բացակայության կամ հավաքի ղեկավարի կողմից ոստիկանության պահանջը չկատարելու դեպքում) ոչ պակաս, քան երկու անգամ բարձրախոսով մասնակիցներից պահանջում է դադարեցնել հավաքը՝ սահմանելով ողջամիտ ժամկետ, և նախազգուշացնում է չենթարկվելու դեպքում հատուկ միջոցներ (օրինակ, արցունքաբեր գազ, ջրանետեր, լուսաձայնային նռնակներ) կիրառելու հնարավորության մասին: Չանզվածային

<sup>106</sup> ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, հոդված 31:

<sup>107</sup> Նույն տեղում, հոդված 32:

անկարգությունների դեպքում ոստիկանությունը լիազորված է անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ առանց նախապես ծանուցելու<sup>108</sup>:

Ըստ «Ոստիկանության մասին» օրենքի, արգելվում է հատուկ միջոցներ օգտագործել խաղաղ, առանց զենքի և օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող հավաքները դադարեցնելու ժամանակ: Արգելվում է նաև ոստիկանության սպառազինության մեջ հատուկ միջոցների այնպիսի տեսակներ ընդգրկել, որոնք կարող են մարդու առողջությանը ծանր վնաս պատճառել կամ չհիմնավորված ռիսկի աղբյուր են<sup>109</sup>: Բացի դրանից, օրենքը ոստիկանության ծառայողներին պարտավորեցնում է հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս կրել սահմանված համազգեստ՝ տեսանելի տարբերանշաններով<sup>110</sup>: Նույն օրենքում սահմանվել են նաև հսկողության տեխնիկական միջոցների կիրառման կանոնակարգերը, որոնք ապահովում են նման սարքերի օգտագործման վերաբերյալ պատշաճ ծանուցումը և անձնական տվյալների պաշտպանությունը: Հանրային վայրերում տեղադրված անշարժ տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերի մասին պետք է նախազգուշացնող ցուցանակներ տեղադրվեն տեսանելի վայրերում: Շարժական սարքավորումներ օգտագործելիս ոստիկանության ծառայողները դրանք պետք է կրեն տեսանելի ձևով՝ բացառությամբ գաղտնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման դեպքերի: Տեսանյութերը կամ լուսանկարները կարող են օգտագործվել նպատակների միայն նեղ շրջանակի համար՝ առանց այլ անձանց նույնականացնող տվյալների հրապարակման կամ դրանց նվազագույն հրապարակմամբ: Տեսանյութերը կամ լուսանկարներն այլ նպատակներով օգտագործելը (այդ թվում՝ հրապարակելը) արգելվում է: Տեսանյութերի և լուսանկարների պահոց մուտք գործելու և տվյալներին ծանոթանալու իրավունք ունեցող ոստիկանության պաշտոնատար անձանց ցանկը, տվյալներից օգտվելու կարգը սահմանվում են ոստիկանության պետի հրամանով<sup>111</sup>:

Հավաքների ժամանակ ոստիկանների կատարած ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ թափանցիկ հետաքննության և պատժամիջոցների կիրառման բացակայությունը կարևորագույն խնդիր է մնում: ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից տրամադրած տվյալների համաձայն՝ 2024 թվականին՝ սեպտեմբեր ամսվա դրությամբ, հավաքների ժամանակ ոստիկանական իրավախախտումների հիմքով նախարարությունը 24 ծառայողական քննություն է նախաձեռնել և 19 քրեական գործ հարուցել: Սակայն ծառայողական քննությունները կա՛մ կասեցվել են, կա՛մ մնացել անհետևանք, ուստի վարչական տույժեր չեն կիրառվել, իսկ քրեական վարույթները դեռևս ընթացքի մեջ են<sup>112</sup>: Փորձագետները կարծում են, որ նախորդ տարիներին ոստիկանության խախտումների համար պատասխանատվության բացակայությունը նպաստավոր հող է ստեղծել 2024 թվականի մայիս-հունիս ամիսներին տեղի ունեցած հավաքների ժամանակ օրենքի աննախադեպ խախտումների և ոստիկանական բռնությունների համար<sup>113</sup>: Վերոնշյալ հավաքների վերաբերյալ ռեպորտաժները և զեկույցները վկայում են, որ ոստիկանները ծեծի են ենթարկել

<sup>108</sup> Նույն տեղում, հոդվածներ 32 և 33:

<sup>109</sup> ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին, 16.04.2001, վերջին փոփ. 07.02.2024, հոդված 31, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=190377> .:

<sup>110</sup> Նույն տեղում, հոդված 12:

<sup>111</sup> Նույն տեղում, հոդված 22:

<sup>112</sup> Տեղեկությունը տրամադրվել է ՀՀ ներքին գործերի նախարարության 2024 թ. հոկտեմբերի 3-ի գրությամբ՝ ի պատասխան ԹԻՀԿ հարցման:

<sup>113</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

բազմաթիվ ցուցարարներին թե՛ բերման ենթարկելիս, թե՛ հետագայում՝ ոստիկանական բաժանմունքներում, և մի քանի ցուցարարներ վնասվածքներ են ստացել, որոնք բժշկական միջամտության կարիք ունեին<sup>114</sup>: Հավաքների ընթացքում տեղ են գտել նաև լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության դեպքեր<sup>115</sup>: 2024 թվականին ոստիկանական բռնության ակնառու դեպք էր մի խումբ ոստիկանների կողմից ԱԺ ընդդիմադիր պատգամավորին ծեծելը: Թեև այս միջադեպը նկարահանվել և հրապարակվել է, միայն մեկ ոստիկանի նկատմամբ է պատժամիջոց կիրառվել՝ աշխատանքից ազատում<sup>116</sup>:

Չնայած հունիսի 12-ին տեղի ունեցած բռնի գործողությունների և հատուկ միջոցների անհամաչափ կիրառման փաստին՝ վարչապետը և ԱԺ նախագահը դրական են գնահատել ոստիկանության գործողությունները, ինչը, իրավապաշտպան ԶԻԿ-ների կարծիքով, ոչ միայն ուղիղ հրահանգ է ոստիկաններին՝ շարունակելու նման գործելաոճը, այլև կարող է ազդել ոստիկանության գործողությունների քննության անկախության և անաչառության վրա<sup>117</sup>: 2024 թվականի նոյեմբերի դրությամբ որևէ ոստիկանի մեղադրանք չի առաջադրվել հունիսի 12-ի դաժան բախումների և նռնակների օգտագործման համար<sup>118</sup>: Հունիսի 12-ի հավաքի ժամանակ կիրառված նռնակի տեսակի վերաբերյալ ՀՀ ներքին գործերի նախարարությանն ուղղված ԶԻԿ հարցումը մերժվել է՝ գործը նախաքննության փուլում գտնվելու հիմքով: Սակայն փորձագետները այս մերժումը անհիմն են համարում, քանի որ այս տեղեկությունը (որն առկա է ոստիկանության արձանագրություններում) պետք է բաց լինի հանրության համար և հանրային մեծ կարևորություն ունի<sup>119</sup>: Ըստ հետաքննող լրատվամիջոցների՝ ոստիկանությունը կիրառել է «Չարյա 3» նռնակը<sup>120</sup>, որը հանրահավաքի պահին ներառված չէր նռնակների թույլատրելի տեսակների և չափանիշների վերաբերյալ կանոնակարգում: Հավաքից երկու շաբաթ անց ՀՀ առողջապահության նախարարը փոփոխություն կատարեց

<sup>114</sup> «Ալցիդիայի մասնակիցները պնդում են՝ ոստիկանները բռնությունների են ենթարկել, սարկավազի խոսքով՝ նաև ծաղրել են», Azatutyun.am, 03.06.2024, <https://www.azatutyun.am/a/armenia-clashes-opposition-police/32977123.html>, «ԱԺԲ-ից ահազանգում են՝ 96 համակիր բերման է ենթարկվել. ԼՐԱՅՎԱԾ», Factor.am, 24.04.2024, <https://factor.am/766304.html>, «Կարմիր բերետներն» ընդդեմ մարդու իրավունքների. համատեղ հայտարարություն, Քաղաքական իրավունքների հայկական կենտրոն, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, 31.05.2024, Երևան, [https://drive.google.com/file/d/1DVssFXxiW-2w4whqul3\\_7wIDjKpsrUWq/view](https://drive.google.com/file/d/1DVssFXxiW-2w4whqul3_7wIDjKpsrUWq/view), ՀԱՏՈՒԿ ՉԵԿՈՒՅՑ Հունիսի 12-ին Երևանում՝ Ազգային ժողովի նստավայրի մոտ տեղի ունեցած հավաքի և ոստիկանության գործողությունների վերաբերյալ, Քաղաքական իրավունքների հայկական կենտրոն, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, 17.06.2024, Երևան:

<sup>115</sup> 'Protests in Armenia: RSF denounces deliberate police violence against reporters' («Բողոքի ցույցեր Հայաստանում. RSF-ն դատապարտում է ոստիկանության կանխամտածված բռնությունը լրագրողների նկատմամբ»), Լրագրողներ առանց սահմանների, 21.05.2024, <https://rsf.org/en/protests-armenia-rsf-denounces-deliberate-police-violence-against-reporters>:

<sup>116</sup> «Հայտարարություն. ոստիկանության ծառայողի լիազորությունները դադարեցվել են», ՀՀ ներքին գործերի նախարարություն, 27.05.2024, <https://mia.gov.am/2024/05/27/haytararutyun-3/>:

<sup>117</sup> «Դատապարտում ենք ոստիկանության անօրինական գործողությունները» (ԶԻԿ-ների հայտարարությունը), Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 14.06.2024, <https://transparency.am/hy/media/news/article/5123>, «Հայտարարություն 2024 թ. հունիսի 12-ի դեպքերի մասին», Իրազեկ քաղաքացիների միավորում, 19.06.2024, <https://uic.am/19287>:

<sup>118</sup> «Մեկնարկեց հունիսի 12-ի գործով դատավարությունը», Azatutyun.am, 12.08.2024, <https://www.azatutyun.am/a/hounisi-12-i-gortsov-nisty-meknarkets/33075694.html>, «ԱԺ շենքի մոտ բախումներից երեք ամիս անց էլ գործում մեղադրյալ ոստիկան չկա», Azatutyun.am, 12.09.2024, <https://www.azatutyun.am/a/azh-sheng-i-mot-bakhumnerits-erek-amis-ants-el-gortsum-meghadryal-vostikan-chka-/33117700.html>, ««Խափանել են հանրային միջոցառումը». դատախազները՝ հունիսի 12-ի գործով դատական նիստում», Azatutyun.am, 02.12.2024, <https://www.azatutyun.am/a/khapanel-en-hanrayin-mijotsarumy-datkhaznery-hunisi-12-i-gortsov-datakan-nistum/33223947.html>:

<sup>119</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>120</sup> «Ոստիկանությունը «Չարյա 3» լուսաձայնային նռնակ է կիրառել ցուցարարների դեմ. ըստ արտադրողի՝ այն օգտագործվում է զինված հանցագործների դեմ», Hetq.am, 13.06.2024, <https://hetq.am/hy/article/167363>:

«Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանելու մասին» հրամանում՝ հավելվածում ներառելով նոնակի այս տեսակը<sup>121</sup>: Ավելի ուշ՝ 2024 թվականի հուլիսին, ՀՀ ներքին գործերի նախարարը փոփոխեց այն հրամանը, որով սահմանվում է նախարարության կողմից տնօրինվող գաղտնագրման ենթակա տեղեկությունների գերատեսչական ցանկը՝ ցանկում ներառելով ոստիկանության ստորաբաժանումներում հատուկ միջոցների առկայության, դրանց տեսակի և քանակի վերաբերյալ տեղեկությունները<sup>122</sup>:

Ընդհանուր առմամբ, թեև Հայաստանում ոստիկանության հաշվետվողականությունը տարիներ ի վեր խնդրահարույց է եղել, 2024 թվականին այս չափորոշիչի գործնական դաշտի վատթարացումը պայմանավորված է հատուկ միջոցների կիրառման թափանցիկության և ոստիկանների գործողությունների արագ քննության բացակայությամբ՝ ի տարբերություն ցուցարարների դեմ ընթացքի մեջ գտնվող դատական գործերի: Միաժամանակ արձանագրվում է իրավական դաշտի որոշակի վատթարացում՝ կապված հատուկ միջոցների վերաբերյալ տեղեկատվության գաղտնագրման հետ:

### Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- ՀՀ ներքին գործերի նախարարությանը՝ բացառել ոստիկանության ծառայողների կողմից անիրավաչափ գործողությունները և հետևողական ու պրոֆեսիոնալ մոտեցում կիրառել հավաքների վերահսկման ընթացքում:
- ՀՀ ներքին գործերի նախարարությանը՝ հավաքների ժամանակ չօգտագործել հատուկ միջոցներ՝ առանց անհրաժեշտության ու համաչափության սկզբունքների վրա հիմնված բավարար հիմքերի:
- Իրավապահ մարմիններին՝ պատշաճ ու թափանցիկ հետաքննություն ապահովել և համապատասխան պատժամիջոցներ կիրառել այն ոստիկանների նկատմամբ, որոնք չարաշահել են իրենց լիազորությունները հավաքների ժամանակ ոստիկանության գործունեությունն իրականացնելիս, իսկ քաղաքական ղեկավարությանը՝ մինչև հետաքննության պաշտոնական արդյունքների հայտնի լինելը գնահատականներ չտալ ոստիկանության գործողությունների վերաբերյալ:
- ՀՀ ներքին գործերի նախարարությանը՝ ապագաղտնագրեթել հատուկ միջոցների տեսակի ու օգտագործման վերաբերյալ տեղեկությունները և դրանք հասանելի դարձնել հանրությանը:

<sup>121</sup> ՀՀ առողջապահության նախարարի թիվ N 197-Ն հրամանը «ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի ապրիլի 20-ի թիվ 09-Ն հրամանում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», 26.06.2024, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=194494>:

<sup>122</sup> ՀՀ ներքին գործերի նախարարի թիվ 55-Լ հրամանը, 12.07.2024, հրապարակված է՝ 15.07.2024, ՀՀ ներքին գործերի նախարարություն, <https://mia.gov.am/2024/07/15/55/>, «Հատկանշական է, որ իրավապահ մարմինները չեն հերքում, որ կիրառվել է Չարյա 3», Aravot.am, 25.07.2024, <https://www.aravot.am/2024/07/25/1434503/>:

### 3.5 Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.9 / 7

Իրավական դաշտ՝ 5.4/7	Գործնական դաշտ՝ 4.3/7
-------------------------	--------------------------

Օրենսդրությամբ մի շարք ինստիտուցիոնալ մեխանիզմներ են սահմանված քաղաքացիական հասարակությանը և հանրությանը որոշումների կայացման գործընթացում ներգրավելու համար, ներառյալ՝ հանրային քննարկումների էլեկտրոնային հարթակը, հանրային լսումները, խորհրդակցական մարմինները: Սակայն գործնականում մասնակցությունը դեռևս լիարժեք կայացած չէ և երբեմն սահմանափակվում է բովանդակային ազդեցություն չունեցող ձևական քննարկումներով: 2024 թվականին ԲՀԿ-ները ավելի հաճախ են ընտրողական վերաբերմունքի միտում նկատել իրավերների սկզբունքով կազմակերպվող հանդիպումների պարագայում: Համայնքներում բնապահպանական հարցերի շուրջ հանրային լսումների ընթացակարգի կոպիտ խախտման դեպքեր են արձանագրվել: Արդիական է մնում նաև օրենքների նախագծերի մշակման նախնական և հետագա վերանայման փուլերին մասնակցության բացը: Դրական զարգացումներից են առանձին համայնքապետարանների կողմից ավելի բաց ու մասնակցային մոտեցումը ԲՀԿ-ների և քաղաքացիների հանդեպ, օրենսդրության և բարեփոխումների մասնակցային մշակման հաջողված դեպքերը և ազգային ու տեղական բյուջետավորման ու գնումների գործընթացներին հանրային մասնակցության մեխանիզմների բարելավումը:

Խորհրդարանի աշխատանքում մասնակցության ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայությունը ինդիկատորային է մասնակցության իրավական հիմքերի տեսանկյունից, թեև առանձին պատգամավորների հետ որոշակի արդյունավետ երկխոսություն է հաստատվել: Հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերը (SLAPP) շարունակում են բացասաբար ազդել քաղաքացիական ակտիվության վրա, քանի որ բնապահպան ակտիվիստների դեմ հանքարդյունաբերական ընկերությունների՝ զրպարտության և վիրավորանքի հիմքերով և փոխհատուցման պահանջներով հայցերը շարունակվում են քննվել:

Չնայած իրավական երաշխիքներին և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթներին՝ պետական մարմինները հաճախ ուշացնում են տեղեկատվության հարցումների պատասխանները, որոշ դեպքերում էլ պատասխանները լինում են թերի կամ ընդհանրական: Գերատեսչությունների կողմից տեղեկատվության հրապարակումը ևս գործնականում հաճախ չի համապատասխանում իրավական պահանջներին: Տեղեկատվության մատչելիության իրավունքի ոլորտի դրական զարգացում է կառավարության կողմից ներկայացված և քննարկված «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագիծը, որի նպատակն է ապահովել պետության կողմից տրամադրվող տեղեկությունների համապատասխանությունը «բաց տվյալների» սկզբունքներին: Թեև վերանայված նախագծում ԲՀԿ-ների նախնական մտահոգությունները հասցեագրվել են, ԲՀԿ-ները ընդգծել են հետագա քննարկումների



անհրաժեշտությունը՝ չեզոքացնելու տեղեկատվության սահմանափակումների հետ կապված հնարավոր ռիսկերը:

Այս ոլորտի ընդհանուր գնահատականը, ինչպես նաև առաջարկությունների մեծ մասը մնացել է նույնը, ինչ 2023 թվականին էր: Մասնավորապես, կառավարությանը առաջարկվում է ավելի արդյունավետ օգտագործել մասնակցության առկա գործիքները բովանդակալից մասնակցություն ապահովելու նպատակով, ԹՀ-ներին ներգրավել որոշումների կայացման վաղ փուլերում, ինչպես նաև քաղաքականության մոնիտորինգի և իրականացման գործընթացներում: Ազգային ժողովին առաջարկվում է մեխանիզմներ ստեղծել պատգամավորների հեղինակած նախագծերի պարտադիր հանրային քննարկման համար և ավելի ակտիվ ներգրավել ԹՀ-ներին իրավաստեղծ փուլերում՝ մասնավորապես հրավիրելով նրանց մշտական հանձնաժողովների նիստերին: Մյուս առաջարկությունները վերաբերում են տեղեկատվության մատչելիության հետ կապված խնդիրներին և ներառում են հետևյալը՝ ժամանակին, լիարժեք և որակյալ պատասխանների տրամադրում և տեղեկատվություն հրապարակում, տեղեկատվության ազատության հարցերով արտադատական անկախ մարմնի ստեղծում և այս գործերի քննության համար առավել սեղմ ժամկետների սահմանում, ինչպես նաև առանցքային պետական տվյալների շտեմարանների անվճար հանրային հասանելիության ապահովում:

Չափորոշիչ 1. Յուրաքանչյուր ոք կարող է մասնակցել որոշումների ընդունման գործընթացներին:

Հայաստանում, ըստ օրենքի, յուրաքանչյուր ոք իրավունք ունի մասնակցելու որոշումների կայացմանը, և մի շարք հնարավորություններ կան քաղաքացիների և ԹՀ-ների մասնակցության համար: Սակայն մասնակցության պահանջները չկատարելու համար պատասխանատվության մեխանիզմները թերի են:

Ըստ ՀՀ Սահմանադրության՝ քաղաքացիները կարող են որոշում կայացնողներին օրենսդրական նախագծերի նախաձեռնություններ և հանրագրեր ներկայացնել: Մասնավորապես, ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք ունի<sup>123</sup>: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի համաձայն՝ օրենսդրական ակտերի նախագծերը ենթակա են պարտադիր հանրային քննարկման՝ բացառությամբ միջազգային պայմանագրերի վավերացման մասին օրենքի նախագծերի: Հանրային քննարկումները կանոնավոր կերպով տեղի են ունենում առցանց հարթակում ([www.e-draft.am](http://www.e-draft.am)), իսկ իրավաստեղծ մարմնի հայեցողությամբ կարող են կազմակերպվել նաև լրացուցիչ դեմառոյեմ հանրային լսումներ, հարցումներ և քննարկումներ: Հանրային քննարկումների տևողությունն առնվազն 15 օր է, իսկ քննարկումների արդյունքները ենթակա են հրապարակման լրամշակված նորմատիվ իրավական ակտի նախագծի հետ միասին: Եթե կառավարություն է ներկայացվել հանրային քննարկում չանցած նախագիծ, ապա կառավարությունը կարող է վերադարձնել այն ներկայացնող մարմին<sup>124</sup>: Այս դրույթները, սակայն, չեն տարածվում Ազգային ժողովի կողմից նախաձեռնված, ինչպես նաև

<sup>123</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723>, հոդված 109:

<sup>124</sup> ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին», 21.03.2018, վերջին փոփ. 12.09.2023, հոդվածներ 3 և 4, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=187324>:

քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջադրված օրենսդրական նախագծերի վրա<sup>125</sup>: Բացի այդ, ռազմական և արտակարգ դրությանն առնչվող իրավական ակտերը ենթակա չեն պարտադիր հանրային քննարկման, թեև կարող են քննարկման դրվել մշակող կամ ընդունող մարմնի նախաձեռնությամբ<sup>126</sup>:

Ըստ Ազգային ժողովի կանոնակարգի՝ խորհրդարանական լուսմներ կարող են հրավիրվել ԱԺ նախագահի, մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի, ինչպես նաև խմբակցության որոշմամբ<sup>127</sup>: 2024 թվականին (նոյեմբերի 15-ի դրությամբ) կազմակերպվել է ինը խորհրդարանական լուսմ հիմնականում մշտական հանձնաժողովների նախաձեռնությամբ, մինչդեռ 2023 թվականի ընթացքում չորս լուսմ էր եղել<sup>128</sup>: Առաջիկա լուսմների մասին տեղեկությունը հրապարակվում է խորհրդարանի կայքում, իսկ լուսմները հեռարձակվում են ուղիղ եթերում: Բացի այդ, խորհրդարանական հանձնաժողովների կողմից կազմակերպվում են աշխատանքային քննարկումներ ԹՀ-ների և փորձագետների հետ հրավերների սկզբունքով:

Տեղական մակարդակում մի շարք իրավակարգավորումներ կան տեղական ինքնակառավարմանը համայնքի անդամների մասնակցության վերաբերյալ: Ըստ օրենքի՝ համայնքի ավագանու նիստերը հրապարակային են, իսկ 3000 և ավել բնակիչ ունեցող համայնքներում դրանք հեռարձակվում են առցանց եղանակով: Հանրային լուսմները պարտադիր են համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի քննարկումների դեպքում<sup>129</sup>: Առցանց մասնակցության հնարավորությունները ևս հասանելի են համայնքային կայքերի միջոցով (օրինակ՝ դիտարկումներ, առաջարկություններ և մասնակցային բյուջետավորման առաջարկներ ներկայացնելու համար):

Պարտադիր հանրային քննարկումների վերաբերյալ դրույթը խախտելու համար վարչական պատժամիջոցներ սահմանված չեն: Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգում նշված է, որ հանրային քննարկումների իրականացման խախտումներ հայտնաբերելու դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են դիմել ինչպես տվյալ պետական մարմին, այնպես էլ ՀՀ արդարադատության նախարարություն և պարզաբանում ստանալու նպատակով<sup>130</sup>:

Հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցադիմումների (SLAPP) վերաբերյալ իրավական դրույթներ չկան: 2024 թվականին հանքարդյունաբերական ընկերությունների կողմից բնապահպան ակտիվիստների դեմ զրպարտության և վիրավորանքի հիմքով հարուցված դատական գործերը շարունակվել են, ինչպես նաև նոր հայցեր են ներկայացվել: ԹՀ-ները այս հայցերը որակում են որպես SLAPP, քանի որ դրանց միջոցով փորձ է արվում ճնշել

<sup>125</sup> Նույն տեղում, հոդված 1:

<sup>126</sup> Նույն տեղում, հոդված 27.1:

<sup>127</sup> ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենք, 16.12.2016, վերջին փոփ. 25.10.2023, հոդված 125, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=185339>:

<sup>128</sup> Ըստ Ազգային ժողովի կայքի «Լուրեր» բաժնի ուսումնասիրության արդյունքների, <http://parliament.am/news.php?lang=arm>:

<sup>129</sup> ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, խմբ. 16.12.2016, վերջին փոփ. 02.05.2024, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=193988>:

<sup>130</sup> Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգ, Հավելված ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 10-ի թիվ 1146-Ն որոշման, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126002>:

իրենց քննադատությունն ու գործունեությունը<sup>131</sup>: Այս գործերը նաև կանխարգելող ազդեցություն ունեն տեղացիների քաղաքացիական ակտիվության վրա (տե՛ս ավելին՝ Ոլորտ 8՝ «Պետության կողմից պաշտպանության պարտավորություն») <sup>132</sup>:

Գործնականում ԲՀԿ-ները մասնակցության տարբեր փորձառություն են նշում կախված թեմայից, տվյալ պետական մարմնից կամ համայնքից: Ընդհանուր առմամբ, պաշտոնյաներն արձագանքում են հանդիպման խնդրանքներին և բաց են երկխոսության համար, և ԲՀԿ-ները հնարավորություն ունեն մասնակցելու կառավարության կողմից կազմակերպվող հանրային քննարկումներին<sup>133</sup>: Օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարությունը 2024 թվականի հունիսին քննարկումներ նախաձեռնեց իրավապաշտպան ԲՀԿ-ների հետ խտրականության դեմ պայքարի օրենքի վերաբերյալ<sup>134</sup>, ՀՀ վարչապետի աշխատակազմը և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը 2024 թվականի հունվար-փետրվարին աշխատանքային հանդիպումներ կազմակերպեցին «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի շուրջ<sup>135</sup>, իսկ Ազգային ժողովը 2024 թվականի սեպտեմբերին հանրային քննարկում էր կազմակերպել «Սոցիալական աջակցության մասին» և «Պետական նպաստների մասին» օրենքներում փոփոխությունների նախագծերի վերաբերյալ<sup>136</sup>: ԲՀԿ-ներն ընդգծում են, որ պետական մարմինները հատկապես բաց են այն դեպքում, երբ քննարկվող հարցերը համահունչ են քաղաքականության տվյալ ոլորտի ռազմավարություններին և առաջնահերթություններին<sup>137</sup>: Օրինակ՝ խտրականության դեմ պայքարի օրենքը նախատեսված է մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով, իսկ «Հանրային տեղեկությունների մասին» օրենքը 2022-2024 թվականների Բաց կառավարման ծրագրով նախատեսված հանձնառության մաս է: Մինևույն ժամանակ, լայնածավալ դեմառոզեմ հանրային քննարկումները հիմնականում նախաձեռնում են ԲՀԿ-ները կամ միջազգային կազմակերպությունները, այլ ոչ թե պետական մարմինները<sup>138</sup>: Օրինակ՝ 2024 թվականի փետրվարին Օքսֆորդն հիմնադրամը կազմակերպեց Ազգային ֆորում քննարկելու ՀՀ գեներալային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարության

<sup>131</sup> Ֆոկուս խմբային քննարկումներ և էլեկտրոնային հաղորդակցություն բնապահպան ակտիվիստի հետ, սեպտեմբեր 2024 թ., տե՛ս նաև Declaration on the abusive use of legal proceedings to silence activists in Armenia (Հայտարարություն Հայաստանում ակտիվիստներին լռեցնելու համար դատական գործընթացների չարաշահման վերաբերյալ), Friends of Earth, 03.07.2024, <https://friendsoftheearth.eu/news/declaration-abusive-use-legal-proceedings-silence-activists-armenia/>:

<sup>132</sup> Ֆոկուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2024 թ.:

<sup>133</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>134</sup> «Խտրականության դեմ օրենքի նոր նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման», Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 01.08.2024, <https://transparency.am/hy/media/news/article/5146>:

<sup>135</sup> ՀՀ կառավարություն, Facebook, 19.01.2024,

<https://www.facebook.com/armgovernment/posts/pfbid04jyzvzNz2QDkp6X1rbyxT4hhn7vU9vNcJwHjDBHu61W9iM7pYErC BADgAifJTXvrl>, «Աշխատանքային 2-րդ հանդիպումը՝ օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու նախագծերի շուրջ», Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, 12.02.2024, <https://hightech.gov.am/hy/tegekatvakan-kentron/ayl/norutyunner/draft-law-on-information>:

<sup>136</sup> «Հանրային քննարկում ընտանիքի անապահովության գնահատման նոր համակարգի վերաբերյալ», 13.09.2024, ՀՀ Ազգային ժողով,

[http://www.parliament.am/news.php?do=view&cat\\_id=2&day=13&month=09&year=2024&NewsID=21054&lang=eng](http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=13&month=09&year=2024&NewsID=21054&lang=eng):

<sup>137</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>138</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

և միջոցառումների ծրագրի նախագիծը<sup>139</sup>: ՀՀ ներքին գործերի նախարարությունը ժողովրդավարության զարգացման հիմնադրամի հետ համատեղ կազմակերպեց Ոստիկանության բարեփոխումների ռազմավարական ծրագրի հանրային քննարկումներ՝ նպատակ ունենալով քննարկել ռազմավարության վերաբերյալ ՔՀԿ-ների կողմից ներկայացված առաջարկությունների փաթեթը և համատեղ ջանքերով ապահովել ռազմավարության հետագա իրականացումը<sup>140</sup>: Հաճախ կառավարությունն օգտվում է դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում ՔՀԿ-ների կողմից կազմակերպվող քննարկումներից, նրանց փորձագիտությունից և մշակված առաջարկներից: Օրինակ՝ ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում ՔՀԿ-ները երկրի ողջ տարածքում լայնածավալ քննարկումներ իրականացրին և հաջողությամբ մասնակցություն ունեցան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից նախաձեռնված «Երիտասարդական քաղաքականության մասին» նոր օրենքի մշակմանը<sup>141</sup>: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ները նշում են նաև, որ չնայած քաղաքականության մշակմանը մասնակցելու առկա հնարավորություններին՝ համապատասխան գերատեսչությունները կարող են հաշվի չառնել իրենց առաջարկները՝ առանց պատշաճ հիմնավորում տրամադրելու: Կան նաև դեպքեր, երբ փաստաթղթերի արդեն իսկ քննարկված ու համաձայնեցված նախագծերը Եպես փոխվում են և չեն արտացոլում նախորդ փուլում ընդունված առաջարկները իրավաստեղծ գործընթացի հաջորդ փուլերում, մասնավորապես՝ խորհրդարանական քվեարկության փուլում<sup>142</sup>: ՔՀԿ-ները նշում են, որ բովանդակային մասնակցության բաց կա հատկապես բնապահպանության, քաղաքաշինության, տարածքային բարեփոխումների, քաղաքական և այլ զգայուն հարցերում, որտեղ նրանց կարծիքը կարող է անտեսվել<sup>143</sup>:

Քանի որ ԱԺ պատգամավորների կողմից հեղինակված նախագծերի դեպքում պարտադիր հանրային քննարկման մեխանիզմներ չկան, օրենսդրական գործընթացներին մասնակցելու հնարավորությունը կախված է տվյալ պատգամավորի կամ հանձնաժողովի հայեցողությունից և բարի կամքից: Այսպես, 2024 թվականի մայիսին ԱԺ պատգամավորները փոփոխություններ նախաձեռնեցին «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում, որն իրար հաջորդող ընթերցումներով ընդունվեց հուլիսին, և չնայած բազմաթիվ փորձերին՝ ՔՀԿ-ները չկարողացան որևէ մասնակցություն ունենալ նախագծի քննարկմանը<sup>144</sup>: Ընդհանուր առմամբ, թեև օրենքների և օրենսդրական փոփոխությունների նախագծերը հրապարակվում են ԱԺ կայքում, այդ նախագծերի

<sup>139</sup> National Forum on ‘Observations and recommendations of CSOs on the draft strategy and action plan for implementation of the RA gender policy for 2024-2028’ («ՔՀԿ-ների դիտարկումներն ու առաջարկությունները ՀՀ գեղեցիկության քաղաքականության իրականացման 2024-2028 թթ. ռազմավարության և միջոցառումների ծրագրի նախագծի վերաբերյալ» ազգային ֆորում), ՕքսեՋեն, <https://oxygen.org.am/en/news/cso-national-forum-2024/>:

<sup>140</sup> «Ոստիկանության բարեփոխումների ռազմավարական ծրագրի հանրային քննարկում», ժողովրդավարության զարգացման հիմնադրամ, 22.07.2024, <https://demdev.org/hy/2024/07/22/vostikanutyanyan-barepoxumneri-razmavarakan-cragri-gnnarkum/>, «Արփինե Սարգսյանը 2024-2026 թթ. Ոստիկանության բարեփոխումների ռազմավարական ծրագիրը քննարկել է Երիտասարդների հետ», Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն, 16.08.2024, <https://mia.gov.am/2024/08/16/dilijan/>:

<sup>141</sup> Youth Organizations Union of Armenia, Facebook, 30.07.2024, <https://www.facebook.com/YOU.Armenia.NGO/posts/pfbid02ytT3JenVL7kaFSRMZoSGD83oW4EmnDehvcU3VoErC6atci99GPwp4SEfRiY4yHl>

<sup>142</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>143</sup> Նույն տեղում:

<sup>144</sup> Հարցազրույց, սեպտեմբեր 2024 թ., Նախագծի պատմություն, ՀՀ Ազգային ժողով, [http://www.parliament.am/draft\\_history.php?id=15068](http://www.parliament.am/draft_history.php?id=15068):

վերաբերյալ առաջարկներ ներկայացնող ՔՀԿ-ների նամակները հաճախ մնում են անարձագանք<sup>145</sup>:

Տեղական մակարդակում մասնակցության և երկխոսության շրջանակն ու արդյունավետությունը հաճախ կախված են տեղական ՔՀԿ-ների ռեսուրսներից ու հաղորդակցվելու և արդյունավետ ներդրում կատարելու կարողություններից, ինչպես նաև համայնքների ղեկավարների անձնական վերաբերմունքից: Համայնքի բյուջեի և զարգացման ծրագրի վերաբերյալ հանրային լուսմները շատ անգամ ձևական բնույթ են կրում, քանի որ կազմակերպվում են առանց բովանդակալից մասնակցության: Միևնույն ժամանակ, ՔՀԿ-ները նշում են, որ ՏԻՄ-երը ավելի բաց են դարձել ՔՀԿ-ներին ներգրավելու և նրանց կարծիքը լսելու առումով, օրինակ՝ համայնքի զարգացման ծրագրերում ներառելով ՔՀԿ-ների առաջարկները կամ համատեղ աշխատելով Արցախից տեղահանվածների սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ<sup>146</sup>: Տեղական մակարդակում մասնակցության դրական օրինակ էր Ալավերդի համայնքի երիտասարդական քաղաքականության ընդունումը, որը նախաձեռնվել էր երիտասարդական կազմակերպությունների կողմից և մշակվել մասնակցային գործընթացի միջոցով: Այս քաղաքականությունը նախատեսում է տեղական երիտասարդական խորհուրդ ստեղծել, խորհրդի աշխատանքների համար համայնքապետարանում տարածք տրամադրել, իսկ համայնքը տարեկան բյուջեի ծախսերի մեկ տոկոսը ուղղել երիտասարդական ծրագրերին<sup>147</sup>:

ՔՀԿ-ները և քաղաքացիները խոչընդոտների են հանդիպում բնապահպանական հարցերի վերաբերյալ տեղական հանրային լուսմներին մասնակցելիս: Հանրային լուսմները օրենքով պարտադիր են այն համայնքներում, որոնք կարող են իրենց շրջակա միջավայրի վրա ազդեցություն կրել առաջարկվող որևէ ծրագրի (շինարարական, արտադրական, հանքարդյունաբերական և այլն) իրականացումից<sup>148</sup>: 2024 թվականի հուլիսին Գինեվետ բնակավայրում ոստիկանությունը քաղաքացիներին և ակտիվիստներին թույլ չտվեց մուտք գործել դահլիճ՝ մասնակցելու հանքարդյունաբերական ծրագրի վերաբերյալ լուսմներին: Նրանց, ովքեր կարողացել էին մուտք գործել, քննադատական կարծիք արտահայտելուց հետո թույլ չեն տվել խոսել: Համայնքապետարանը խախտել է օրենսդրության և Օրիուսի կոնվենցիայի<sup>149</sup> դրույթները՝ չապահովելով նախնական ծանուցման և բոլոր հետաքրքրված քաղաքացիների համար բավարար տարածք հատկացնելու վերաբերյալ պահանջները<sup>150</sup>:

<sup>145</sup> Խորհրդակցություն ՔՀԿ փորձագիտական խմբի անդամների հետ, սեպտեմբեր 2024 թ.:

<sup>146</sup> Հարցազրույցներ և ֆոկլուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>147</sup> «Ալավերդին արդեն երիտասարդական քաղաքականություն ունի. համապատասխան փաստաթուղթն ավագանին հաստատեց (տեսակյութ)», Քաղաքացու ձայնը, 22.09.2024, <https://cvmedia.am/page2-5536--88->:

<sup>148</sup> ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 21.06.2014, վերջին փոփ. 03.05.2023, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=178468>:

<sup>149</sup> Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա, 25.06.1998, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=77849>:

<sup>150</sup> «Հակաժողովրդավարական լուսմներ Գինեվետում. Օլեգ Դուլգարյան», 10.07.2024, Քաղաքացու ձայնը, <https://cvmedia.am/page2-5054--88->, «Չհանրային լուսմներ Վեդի համայնքի Գինեվետ բնակավայրում» թեմայով քննարկում. ՈՒՂԻՂ, 12.07.2024, Factor.am, <https://factor.am/791995.html>, ֆոկլուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2024 թ.:

Չափորոշիչ 2. Առկա են հստակ, դյուրին և թափանցիկ մեխանիզմներ ու ընթացակարգեր, որոնք նպաստում են ՔՀԿ-ների կանոնավոր, բաց և արդյունավետ մասնակցությանը պետական քաղաքականության մշակման, իրականացման և մոնիտորինգի գործում:

Օրենսդրությամբ մի շարք մեխանիզմներ կան սահմանված հանրային քաղաքականության մշակման գործում հանրության բաց ու կանոնավոր մասնակցության նպատակով: Այդ մեխանիզմները մասնավորապես ներառում են հանրային քննարկման նպատակով միասնական հարթակում իրավական նախագծերի հրապարակումը, հանրային լուսմների կազմակերպումը և խորհրդակցական մարմինների կազմավորումը:

Ըստ կառավարության կողմից հաստատված կարգի՝ պետական մարմնի կողմից մշակված նորմատիվ իրավական ակտի նախագծի հանրային քննարկումը պետք է տեղի ունենա հանրային քննարկում իրականացնող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում և իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում ([www.e-draft.am](http://www.e-draft.am))<sup>151</sup>: Նորմատիվ իրավական ակտի նախագծի հետ միասին այստեղ հրապարակվում են իրավական ակտի համառոտ նկարագիրը և հիմնավորումը, և հնարավորություն է տրվում նախագծի վերաբերյալ առաջարկներ ներկայացնել, որոնք ևս հրապարակվում են նախագիծը հեղինակած գերատեսչության արձագանքի հետ մեկտեղ: ՔՀԿ-ները գտնում են, որ հարթակը օգտակար է որպես նախագծերի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր և առաջարկներ տրամադրելու ուղի, բայց նշում են հարթակի մի շարք թերություններ, ինչպիսիք են՝ նախագծերի վերանայված տարբերակի չհրապարակելը, առաջարկների վերաբերյալ հետադարձ կապի բացակայությունը կամ ուշացումը, առաջարկների մերժման դեպքում ոչ բավարար հիմնավորումները, ծավալուն նախագծերին առաջարկներ տրամադրելու համար չափազանց կարճ ժամկետը: Առավել կարևոր խնդիր է այն, որ արդեն ընդունված նախագիծը կարող է էականորեն տարբերվել հանրային քննարկման համար տեղադրված տարբերակից, իսկ հանրության համար վերանայված տարբերակի վերաբերյալ արձագանք տրամադրելու որևէ հնարավորություն չկա<sup>152</sup>:

Ըստ հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգի՝ հանրային լուսմների և հարցումների կազմակերպումը հայեցողական է: ՔՀԿ-ները գտնում են, որ e-draft հարթակում նախագծերի հրապարակումից առաջ պետք է կազմակերպվեն դեմառդեմ քննարկումներ ավելի բովանդակային կարծիք ստանալու համար: Իրավական նախագծի նախնական փուլերում դեմառդեմ քննարկում կազմակերպելու պրակտիկան կախված է նախագիծը նախաձեռնող մարմնից: Այնուամենայնիվ, եթե անգամ այդպիսի քննարկումներ լինում են, ՔՀԿ-ների կարծիքը հաճախ հաշվի չի առնվում, ինչը բացասաբար է անդրադառնում հետագա մասնակցության մոտիվացիայի և գործընթացի նկատմամբ վստահության վրա: ՔՀԿ-ները նշում են, որ իրենք ընտրողական մոտեցում են նկատել հրավերի մոտեցմամբ կազմակերպվող քննարկումների մասնակիցների ներգրավման հարցում: Նրանք, ովքեր քննադատական կամ բացասական կարծիքներ են արտահայտում, կարող են չհրավիրվել հետագա հանդիպումներին<sup>153</sup>: Բացի այդ, դեմառդեմ քննարկումները սովորաբար տեղի են

<sup>151</sup> Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգ, Չավելված ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 10-ի թիվ 1146-Ն որոշման:

<sup>152</sup> Հարցազրույցներ և ֆոկլուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>153</sup> Ֆոկլուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2024 թ.:

ունենում երևանում առանց առցանց միանալու հնարավորության, ինչը դժվարացնում է մարզային ՔՀԿ-ների մասնակցությունը:

Հաճախ կառավարության հետ երկխոսությունն արդյունավետ է միջանձնային մակարդակում կախված ՔՀԿ-ների հետ հաղորդակցվող ներկայացուցչի անհատական մոտեցումից: Անձնական հարաբերություններն ու մոտիվացիան հատկապես որոշիչ են խորհրդարանում մասնակցային նախաձեռնությունների դեպքում, քանի որ մի քանի ՔՀԿ-ներ առանձին պատգամավորների հետ համագործակցության հաջող փորձ ունեն<sup>154</sup>: Թեև սա դրական փորձ է, սակայն ընդգծում է Ազգային ժողովում մասնակցության ինստիտուցիոնալ մեխանիզմների և կայունության կարիքը:

Նախարարությունների կանոնադրություններում առանձին դրույթ կա նախարարության առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման ընթացքում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովման նպատակով նախարարին կից հասարակական խորհուրդ ստեղծելու մասին<sup>155</sup>: Հասարակական խորհուրդները կազմավորվում են հայտարարության միջոցով, իսկ անդամակցությունը բաց է համապատասխան փորձ ունեցող բոլոր քաղաքացիների և կազմակերպությունների համար: Յուրաքանչյուր նախարարությունում հասարակական խորհրդի վերջնական կազմի մասին որոշումն ընդունում է նախարարը, որը հանդիսանում է խորհրդի նախագահը: Սակայն գործնականում այդ խորհուրդները միշտ չէ, որ լիարժեք գործում են, և ՔՀԿ-ների կողմից դրանք հաճախ դիտարկվում են որպես ձևական մարմին: Նախարարությունների պաշտոնական կայքերում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականին (սոյեմբերի դրությամբ) հասարակական խորհուրդներ կան կազմավորված տասներկու նախարարություններից յոթում, սակայն միայն երեքի դեպքում են ընթացիկ տարում նիստեր գումարվել<sup>156</sup>:

Կառավարության կողմից ընդունված՝ Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության և ռազմավարության իրականացման 2023-2025 թվականների ճանապարհային քարտեզի փաստաթղթերում մատնանշվել են մասնակցային կառավարման առկա խնդիրները և հանրային մասնակցության բարելավմանը ուղղված մի շարք գործողություններ են նախատեսվել, ներառյալ՝ մասնակցային կառավարման մշտադիտարկման ու ընթացակարգերի սպասարկման ինստիտուցիոնալ մեխանիզմի ձևավորումը և մասնակցային կառավարման թվային ու անցանց գործիքների, կարգավորումների և մեխանիզմների բարելավումը<sup>157</sup>: Հանրային կառավարման բարեփոխումների շրջանակներում կառավարության ռազմավարական կառավարման համակարգի մասին որոշման նախագիծ է մշակվել: Ըստ նախագծի՝ ռազմավարությունների մշակման գործընթացի՝ խնդիրների վերհանման և առաջնահերթությունների որոշման փուլերը պարտադիր ներառում են քննարկումներ շահագրգիռ մարմինների և մասնավոր

<sup>154</sup> Ֆոկուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2024 թ.:  
<sup>155</sup> ՀՀ կառավարության թիվ 337-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 31.03.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=104665>:  
<sup>156</sup> Աղբյուր՝ ՀՀ կառավարության կայքում թվարկված 12 նախարարությունների պաշտոնական կայքեր, <https://www.gov.am/am/structure/>:  
<sup>157</sup> ՀՀ կառավարության N 1367-Լ որոշումը ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի N 691-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, 11.08.2023, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=181429>:

սուբյեկտների հետ<sup>158</sup>: Նախագիծն ընդունելու դեպքում այս պահանջը որոշ չափով կնպաստի օրենսդրության վաղ փուլերում հանրային քննարկումների առաջարկի իրականացմանը:

Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) 2022-2024 թվականների գործողությունների ծրագրի համաձայն<sup>159</sup> կառավարությունը նախատեսել էր վարչապետի աշխատակազմում ստեղծել հատուկ ինստիտուցիոնալ ստորաբաժանում մասնակցային կառավարման գործընթացներին նպաստելու նպատակով<sup>160</sup>: Սակայն 2024 թվականի նոյեմբերի դրությամբ ստորաբաժանումը դեռ չէր գործում: Կառավարությունը նաև սերտորեն համագործակցում է ԶԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ հանրային մասնակցության և մասնակցային կառավարման բարելավման հարցերի շուրջ<sup>161</sup>: Օրինակ՝ ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Գործուն քաղաքացիական հասարակություն» ծրագիրը<sup>162</sup> քննարկումներ է նախաձեռնել և առաջարկություններ մշակել հասարակական խորհուրդների կարգավորումների բարելավման վերաբերյալ: «ԶԿ չափիչ» և այլ հետազոտությունների արդյունքների հիման վրա՝ ԹԻՅԿ-ն առաջարկություններ է մշակել և ներկայացրել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ իրավաստեղծման գործընթացներում մասնակցության մեխանիզմների բարելավման նպատակով: ԱՄՆ ՄԶԳ-ի «Ռազմավարական հաղորդակցությունների աջակցության» ծրագիրը, որն իրականացվում է Քեմոնիքս Ինթենեշնլի կողմից, ևս աջակցում է կառավարությանը՝ ներդնելու հստակ և քաղաքացիակենտրոն ռազմավարական հաղորդակցություն<sup>163</sup>:

Ըստ «Բաց բյուջեի» 2023 թվականի հետազոտության՝ Հայաստանը բյուջետային գործընթացի տարբեր փուլերում հանրային մասնակցության մասով ցածր միավորներ ունի՝ 100 հնարավոր միավորից 11-ը<sup>164</sup>: Այնուամենայնիվ, նախորդ՝ 2021 թվականի զեկույցի վեց միավորի համեմատ սա առաջընթաց է հանդիսանում, որը պայմանավորված է գործադիր մարմինների կողմից բյուջեի ձևավորմանը հանրային մասնակցության վերաբերյալ կարգավորումների ընդունմամբ<sup>165</sup>: 2024 թվականին պետական մարմիններն ավելի ակտիվ են եղել բյուջեի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման հարցում, իսկ քննարկումների հայտարարությունները և արդյունքները հրապարակվել են ՀՀ ֆինանսների նախարարության հատուկ հարթակում: Թեև պետական բոլոր գերատեսչությունները պարտավոր են բյուջեի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ իրականացնել, սակայն 32 մարմիններից

<sup>158</sup> ՀՀ կառավարության որոշում «Կառավարության ռազմավարական կառավարման աշխատակարգը հաստատելու մասին», Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/7524/about>:

<sup>159</sup> «Հայաստանը հավանություն է տվել ԲԿԳ 2022-2024 թթ գործողությունների հինգերորդ ծրագրին», Թրանսփարենսի Ինթենեշնլի հակակոռուպցիոն կենտրոն, 19.10.2022, <https://transparency.am/hy/media/news/article/4742>:

<sup>160</sup> ՀՀ կառավարության N 1568-Լ որոշումը ««Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», 06.10.2022, փոփ. 09.11.2023, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185253>

<sup>161</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>162</sup> Civil Society in Action (Գործուն քաղաքացիական հասարակություն), Counterpart International, <https://www.counterpart.org/project/civil-society-in-action-armenia/>.

<sup>163</sup> Improving Strategic Communications in Armenia (Ռազմավարական հաղորդակցության բարելավում Հայաստանում), Chemonics, <https://chemonics.com/projects/improving-strategic-communications-in-armenia/>.

<sup>164</sup> Armenia: Open Budget Survey 2023 (Հայաստան Բաց բյուջեի հետազոտություն 2023), International Budget Partnership, <https://internationalbudget.org/open-budget-survey/country-results/2023/armenia>.

<sup>165</sup> ՀՀ վարչապետի N 35-Ս որոշումը «ՀՀ 2022 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին», 18.01.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149254>:



միայն հինգին է հաջողվել կարծիքներ հավաքագրել հանրությունից<sup>166</sup>: Հանրային բնասարկումների իրականացման մարտահրավերներից են ՔՀԿ-ների և քաղաքացիների տեղեկացվածության պակասը, հետաքրքրության և մոտիվացիայի ցածր մակարդակը<sup>167</sup>:

Տեղական մակարդակում հանրության մասնակցությունը, ըստ օրենքի, նախատեսված է մասնավորապես համայնքների զարգացման ծրագրերի, տարեկան բյուջեի և պետական բյուջեից ֆինանսավորման համար կառավարությանը ներկայացվող սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ բնասարկումների միջոցով: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը քաղաքացիներին հնարավորություն է տալիս նաև ստորագրահավաքի միջոցով համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ներառել օրենքով սահմանված քանակով ստորագրություններ հավաքագրելու դեպքում<sup>168</sup>: ՔՀԿ-ները և փորձագետները նշում են, որ առանձին համայնքապետարանների դեպքում տեսանելի են որոշ բարելավումներ ավելի բաց լինելու և քաղաքացիական հասարակության հետ համագործակցելու առումով, սակայն շատ դեպքերում համայնքներում հանրային բնասարկումները դեռևս ձևական բնույթ են կրում, քանի որ կայացվող որոշումներում իրական մասնակցության և առաջարկությունների ներառման մակարդակը ցածր է<sup>169</sup>:

ԲԿԳ 2022-2024 թթ. գործողությունների ծրագրի հիման վրա չորս համայնքում 2023 թվականին պիլոտային եղանակով իրականացվեց մասնակցային բյուջետավորում, երբ քաղաքացիներին հնարավորություն տրվեց տեղական բյուջեներից ֆինանսավորվող նախագծերի գաղափարներ առաջարկել և քվեարկել դրանց օգտին: 2024 թվականին ևս 11 համայնք կամավոր միացան այս նախաձեռնությանը՝ բյուջեից գումար հատկացնելով քաղաքացիների այն գաղափարների համար, որոնք առավելագույն ծայրերը կստանան համայնքի անդամների և տեղական ՔՀԿ-ների կողմից<sup>170</sup>: ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված՝ մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգի<sup>171</sup> հիման վրա 2024 թվականին պետբյուջեից 500 մլն դրամ է հատկացվել չորս պիլոտային համայնքներին՝ հաջորդ տարիներին այս հնարավորությունը այլ համայնքներին ևս հասանելի դարձնելու մտադրությամբ<sup>172</sup>: Համայնքի բնակիչների կողմից նախագծերի գաղափարների ներկայացումը և հետագա քվեարկությունը իրականացվում է համայնքային կայքերի միջոցով: Սակայն առկա են որոշակի մարտահրավերներ, ինչպիսիք են քաղաքացիների տեղեկացվածության և մասնակցելու մոտիվացիայի ցածր մակարդակը, իսկ սուբվենցիոն նախագծերի շրջանակներում մասնակցային բյուջեի նախաձեռնությունների դեպքում հիմնական խոչընդոտը նույնականացման պահանջն է (նույնականացման քարտերի միջոցով մուտք գործելու

<sup>166</sup> Բյուջետային տեղեկատվության հանրայինացում, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, [https://minfin.am/hy/page/hy\\_government\\_list\\_1/](https://minfin.am/hy/page/hy_government_list_1/):

<sup>167</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>168</sup> ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, հոդված 14:

<sup>169</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>170</sup> «Մասնակցային բյուջետավորումը ներդրվել է Հայաստանի 15 համայնքում. ԳԴՀ դեսպանի ներկայացուցիչ», ԱՐՄԵՆՊՐԵՍ, 06.09.2024, <https://armenpress.am/hy/article/1199186>:

<sup>171</sup> ՀՀ կառավարության N 1890-Ն որոշումը «ՀՀ համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին», 02.11.2023, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=184645>:

<sup>172</sup> Մասնակցային բյուջետավորում, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, [https://minfin.am/hy/page/hy\\_participatory\\_1/](https://minfin.am/hy/page/hy_participatory_1/):

անհրաժեշտությունը), որը հասանելի չէ համայնքի բնակչության զգալի մասի համար, քանի որ շատերը նույնականացման քարտեր չունեն<sup>173</sup>:

Քաղաքականության իրականացման և մշտադիտարկման գործընթացներում մասնակցությունը ապահովող իրավակարգավորումներ չկան: Պետական քաղաքականության և ծրագրերի իրականացման, մշտադիտարկման և գնահատման փուլերում ՔՀԿ-ներին ներգրավելու գործելակերպը սահմանափակ է և հաճախ կախված է ՔՀԿ-ների նախաձեռնողականությունից և դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի առկայությունից: Քաղաքականության որոշակի ոլորտների, նախագծերի կամ ծրագրերի շուրջ ստեղծված աշխատանքային խմբերը, հանձնաժողովները և բազմաշահառու խմբերը գործակցության հաջողված փորձ ունեն, սակայն սահմանափակ են մտում իրենց ընդգրկմամբ և ազդեցությամբ: Կառավարության 2024 թվականի մայիսի որոշմամբ ՔՀԿ-ներին հնարավորություն է տրվել ներգրավվել պետական գնումների մոնիտորինգի գործընթացում: Մասնավորապես, ՀՀ պետական գրանցում ունեցող ՀԿ-ները և լրատվական գործունեություն իրականացնողները կարող են պատասխանատու պետական ստորաբաժանման հետ միասին մասնակցել գնումների պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին (եթե գնումները պետական գաղտնիք չեն պարունակում) իրենց դիմումի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համապատասխան վկայական ստանալուց հետո<sup>174</sup>: 2024 թվականի օգոստոսի դրությամբ երեք ՔՀԿ վկայական է ստացել՝ հնարավորություն ստանալով մասնակցել պետական գնումների կատարման արդյունքների մոնիտորինգին<sup>175</sup>:

### Չափորոշիչ 3. ՔՀԿ-ների համար հասանելի է արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

ՀՀ օրենսդրությունը տեղեկություններ ստանալու իրավունքին առնչվող հստակ ընթացակարգեր է սահմանում, այդ թվում՝ պետական մարմինների կողմից որոշումների կայացման գործընթացի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պահանջ: Տեղեկություններ ստանալու իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ<sup>176</sup>: Ըստ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի՝ գրավոր հարցման պատասխանը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, իսկ եթե հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օր<sup>177</sup>: Տեղեկությունների տրամադրումը կարող է սահմանափակվել ազգային անվտանգության, մասնագիտական գաղտնիության, անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության, հեղինակային իրավունքի և քրեական վարույթի՝ հրապարակման ոչ ենթակա տվյալների, ինչպես նաև սահմանափակ տարածման ծառայողական տեղեկության դեպքում<sup>178</sup>: «Սահմանափակ տարածման ծառայողական տեղեկության» հասկացությունը սահմանվել է 2024 թվականի հունվարից ուժի մեջ մտած «Պետական գաղտնիքի մասին» օրենքով և ներառում է այն տեղեկությունները, որոնք չեն

<sup>173</sup> Ֆոկուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2024 թ.:

<sup>174</sup> ՀՀ կառավարության N 732-Ն որոշումը «ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 23.05.2024, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=193122>:

<sup>175</sup> Հարցազրույց, սեպտեմբեր 2024 թ.:

<sup>176</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 51:

<sup>177</sup> ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, վերջին փոփ. 01.03.2023, հոդված 9, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=175858>:

<sup>178</sup> ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, հոդված 8:

դասվում պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների շարքին, սակայն դրանց տարածումը կարող է բացասաբար անդրադառնալ երկրի «պաշտպանությանը, ազգային անվտանգությանը, արտաքին հարաբերություններին, քաղաքական և տնտեսական շահերին, իրավակարգի պահպանությանը»<sup>179</sup>:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկությունների տրամադրման համար կատարվող գանձումը ներառում է միայն տեխնիկական ծախսերը, ընդ որում գանձում չի կատարվում մինչև 10 Էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս, տեղեկությունն էլեկտրոնային փոստով տրամադրելիս կամ գրավոր հարցումներին պատասխանելիս<sup>180</sup>: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողների կողմից օրենքով սահմանված տեղեկության ապօրինի չտրամադրելու համար նախատեսվում է տուգանք՝ 30000-70000 դրամի չափով, իսկ մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելու դեպքում՝ 100000-150000 դրամի չափով<sup>181</sup>: Էլեկտրոնային հարցումների միասնական [www.e-request.am](http://www.e-request.am) պետական հարթակը<sup>182</sup> հնարավորություն է տալիս առցանց դիմում, հարցում, բողոք ուղարկել պետական մարմիններին և հետևել դրանց ընթացքին: Պետական տվյալների որոշ շտեմարանների դեպքում կոնկրետ տեղեկություն ստանալու համար վճարներ են սահմանված: Օրինակ՝ պետոռգիստրից որևէ կազմակերպության մասին տվյալների համար գանձվող վճարը կազմում է 3000 դրամ<sup>183</sup>, ինչը դժվարացնում է դիտորդական և մոնիտորինգի աշխատանքներով զբաղվող ՔՀԿ-ների աշխատանքը<sup>184</sup>: Օրենքով նախատեսվում է նաև պետության կողմից որոշակի տեղեկությունների պարտադիր հրապարակումը: Պետական մարմինները, մարզպետարանները ու ՏԻՄ-երը առնվազն տարին մեկ անգամ պետք է իրենց կայքում հրապարակեն օրենքով սահմանված տեղեկությունները<sup>185</sup>: Հայաստանը վավերացրել է «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, որը տեղեկատվության մատչելիության իրավունքի սահմանափակումների խիստ շրջանակ է սահմանում և նախատեսում է պաշտոնական փաստաթղթերի վերաբերյալ հարցումների մշակման նվազագույն չափորոշիչներ<sup>186</sup>: Թեև կոնվենցիան բողոքարկման արագ և ոչ թանկ ընթացակարգի պահանջ է նախատեսում, Հայաստանը դեռևս չունի արտադատական անկախ մարմին, որը պատասխանատու կլինի տեղեկատվության մատչելիության իրավունքի իրացման վերահսկման և վեճերի քննման

<sup>179</sup> ՀՀ օրենքը «Պետական գաղտնիքի մասին», 01.03.2023, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=175793>:

<sup>180</sup> ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, հոդված 10:

<sup>181</sup> ՀՀ օրենքը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», 14.09.2022, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=169101>:

<sup>182</sup> Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման կարգ, Հավելված ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1204-Ն որոշման, վերջին փոփ. 26.11.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=147567>:

<sup>183</sup> ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, հոդված 20:

<sup>184</sup> Հարկ է նշել, որ գանձվածային լրատվամիջոցների համար այս վճարը հանվել է 2020 թվականին:

<sup>185</sup> ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, հոդված 7:

<sup>186</sup> ՀՀ օրենքը «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացնելու մասին», 23.03.2022, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=161489>, 'Armenia ratified the Council of Europe Convention on Access to Official Documents and the Additional Protocol to the Convention on the Prevention of Terrorism', Council of Europe (Հայաստանը վավերացրել է «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան և «Վիաբեկչության կանխարգելման մասին» կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, Եվրոպայի խորհուրդ), 04.05.2022, <https://www.coe.int/en/web/human-rights-rule-of-law/-/armenia-ratifies-the-council-of-europe-convention-on-access-to-official-documents-and-the-additional-protocol-to-the-convention-on-the-prevention-of-t>:

համար, իսկ դատական ընթացակարգը տեղեկատվության մատչելիության հետ կապված գործերի քննման համար սեղմ ժամկետներ չի նախատեսում:

2024 թվականի փետրվարին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը հանրային քննարկմանը ներկայացրեց «Հանրային տեղեկությունների մասին» նոր օրենքի, ինչպես նաև հարակից օրենքներում փոփոխությունների և լրացումների նախագիծը<sup>187</sup>: Ըստ կառավարության՝ այս օրենքը պետք է հիմք ծառայի տվյալների քաղաքականության համար և մասնավորապես հնարավորություն տա հանրային վերահսկողություն իրականացնել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ: Նոր նախագծում հաշվի են առնվել տարեսկզբին «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի փոփոխությունների նախագծի վերաբերյալ ԶԻԿ-ների կողմից բարձրաձայնված մտահոգությունները, մասնավորապես տվյալների քաղաքականության կարգավորումները առանձնացվել են տեղեկատվության ազատության վերաբերյալ դրույթներից, որոշակի տեղեկությունների դեպքում տեղեկատվության տրամադրման ժամկետների երկարացման հնարավորությունը չեղարկվել է, իսկ լիազոր պետական մարմնի լիազորությունները վերանայվել են<sup>188</sup>: Այնուամենայնիվ, մեղիա կազմակերպությունները նշել են, որ նախագծի վերանայված տարբերակում նրանց մտահոգությունների մի մասը հաշվի չի առնվել, և հնարավոր թյուրըմբռնման պատճառով որոշ դրույթներ կիրառման դեպքում կարող են հանգեցնել այնպիսի տեղեկությունների սահմանափակման (զաղտնագրման), որոնք գործող կարգավորումների շրջանակում սահմանափակված չեն<sup>189</sup>: 2024 թվականի նոյեմբերի դրությամբ նախագիծը դեռևս չէր հաստատվել կառավարության կողմից:

Գործնականում, ըստ փորձագետների և ԶԻԿ-ների, տեղեկատվության մատչելիությունը վերջին տարիներին վատթարացել է: Պետական մարմինները և համայնքապետարանները հաճախ տեղեկատվությունը լիարժեք և ժամանակին չեն հրապարակում, իսկ հրապարակված տեղեկատվությունը սովորաբար մեքենայի համար ոչ ընթերցելի PDF ձևաչափ է ունենում, որը չի համապատասխանում բաց տվյալների և մատչելիության սկզբունքներին: Ինչպես նախորդ տարի, ԶԻԿ-ները նշում են հարցումներին պատասխաններ ստանալու հետ կապված խնդիրների մասին, քանի որ հաճախ այդ պատասխանները ուշացած են լինում, մերժվում են կամ կարող են ընդհանրապես չտրամադրվել: Հաճախ ԶԻԿ-ները պետք է զանգահարեն իրենց հարցման հետքերով, որպեսզի գերատեսչությունից պատասխան ստանան: ԶԻԿ-ները նշում են, որ հարցումներին ավելի քիչ են արձագանքում հատկապես ՏԻՄ-երը և տարածքային կառավարման մարմինները, այդ թվում՝ տեխնիկական խնդիրների պատճառով, թեև այս փորձառությունը տարբեր է համայնքից համայնք<sup>190</sup>: Ամենալուրջ խնդիրներից մեկը, որն

<sup>187</sup> «Հանրային տեղեկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/6936/about>:

<sup>188</sup> Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս՝ «Հանրային տեղեկությունների մասին» նոր օրենքի նախագիծը կոչված է բարելավել բաց տվյալների կառավարումը և հասանելիությունը», Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 01.04.2024, <https://transparency.am/hy/media/news/article/5088>, «Տեղեկատվության ազատության և հանրային տեղեկությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը քննադատության է արժանացել ԶԻԿ-ների կողմից, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 02.02.2024, <https://transparency.am/hy/media/news/article/5055>:

<sup>189</sup> Լրագրողական կազմակերպությունների հայտարարությունը «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի լրամշակված նախագծի վերաբերյալ, MediaLab, 04.11.2024, <https://medialab.am/290409/>:

<sup>190</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

ընդգծվել է նաև ոլորտային ուսումնասիրություններում, տրամադրվող տեղեկատվության ցածր որակն է, քանի որ պատասխանները հաճախ թերի են կամ չափազանց ընդհանրական տեղեկատվություն են պարունակում՝ չանդրադառնալով հարցման մեջ նշված բոլոր կետերին: Բացի այդ, պետական մարմինները երբեմն չարաշահում են պատասխանը 30 օրով հետաձգելու հնարավորությունը՝ առանց պատշաճ հիմնավորման: Այս խնդիրները հատկապես բնորոշ են զգայուն թեմաների հետ կապված հարցումների դեպքում. այսպես, իրավապահ, ռազմական և անվտանգության ոլորտներում աշխատող պետական մարմինները կարող են մերժել հարցումները կամ ընդհանրապես պատասխան չտրամադրել<sup>191</sup>: Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի մոնիտորինգի զեկույցի համաձայն՝ 2024 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին լրատվամիջոցների և լրագրողների կողմից գրանցվել է տեղեկատվության ազատության իրավունքի խախտման 101 դեպք (2023 թվականի նույն ժամանակահատվածում արձանագրվել է 106 դեպք)<sup>192</sup>: Չեկույցում նշվում է նաև, որ «Դատալեքս» դատական տեղեկատվական հարթակի խափանումը լուրջ մարտահրավեր հանդիսացավ լրատվամիջոցների և իրավապաշտպան ՔՀԿ-ների համար՝ դատական գործերին հետևելու և հանրային վերահսկողության պատշաճ իրականացման առումով<sup>193</sup>:

Դատավարության տևական ընթացակարգի և վարչարարության պատճառով հարցումների պատասխանների բողոքարկումը դատարանում անարդյունավետ է համարվում, և անգամ դրական ելքի դեպքում տրամադրված տեղեկատվությունը հաճախ կարող է լինել հնացած կամ այլևս ոչ պիտանի<sup>194</sup>:

ՔՀԿ-ներն ակնկալում են, որ տեղեկատվության հրապարակման որակը կբարելավվի, քանի որ կառավարությունը քայլեր է ձեռնարկում պաշտոնական կայքերի բարելավման և տեղեկատվության հրապարակման չափորոշիչների սահմանման ուղղությամբ: Բացի այդ, կառավարությունը դիմել է տեղեկատվության ազատության ոլորտում մասնագիտացած կազմակերպությանը պետական ծառայողների համար տեղեկատվության մատչելիության վերաբերյալ դասընթացներ կազմակերպելու համար<sup>195</sup>: ԲԿԳ 2022-2024 թվականների գործողությունների ծրագրի հանձնառության հիման վրա երեք պետական գերատեսչություններ ինքնազնահատում են իրականացնում տեղեկատվության ազատության ոլորտում և հրապարակել են 2023 թվականին իրենց ուղղված հարցումների

---

<sup>191</sup> Հարցազրույցներ և ֆոկլոր խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ., «Լրագրողների տեղեկությունն ստանալու իրավունքը- 2024. հետազոտություն», Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 27.06.2024, <https://foi.am/researches/36079>, Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2024 թ. երկրորդ եռամսյակային զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 25.07.2024, <https://khosq.am//reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-38/>, Պետական կառույցների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների պահպանումը՝ ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 2023 թվականի տեղեկատվական հարցումների տվյալների, Հելսինկյան բաղաբացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 01.03.2024, <https://hcav.am/report-01-03-2024/>:

<sup>192</sup> Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2024 թ. երրորդ եռամսյակային զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 24.10.2024, <https://khosq.am//reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-39/>:

<sup>193</sup> Նույն տեղում:

<sup>194</sup> Տեղեկատվության ազատությանն առնչվող խնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, <https://ldpf.am/uploads/files/c6e6d078c1c6e6d948c317374cdade30.pdf>:

<sup>195</sup> Հարցազրույց, սեպտեմբեր 2024 թ.:

վիճակագրությունը՝ օգտագործելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի առաջարկած միասնական ձևանմուշը<sup>196</sup>:

#### Չափորոշիչ 4. Մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին տարբերվում է քաղաքական և լրբբիստական գործունեությունից:

Հանրային քաղաքականության գործընթացում ԶՀԿ-ների մասնակցության խոչընդոտներ չկան: Միևնույն ժամանակ, հասարակական կազմակերպությունները չեն կարող հետամուտ լինել այնպիսի նպատակների, որոնք վերապահված են հասարակական միավորումների այլ տեսակներին, օրինակ՝ քաղաքական կուսակցություններին<sup>197</sup>: Կուսակցությունների նպատակները սահմանված է որպես «հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելը»<sup>198</sup>: Հայաստանում լրբբիստական գործունեության վերաբերյալ օրենքներ չկան: Սակայն ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարությամբ և 2023-2026 թվականների գործողությունների ծրագրով նախատեսվում է լրբբիստական գործունեության թափանցիկության վերաբերյալ կարգավորումներ մշակել և մինչև 2025 թվականի ավարտը ներդնել իրավական ակտերում<sup>199</sup>:

Գործնականում ԶՀԿ-ները կարող են ներգրավվել քաղաքականության մշակման գործընթացում և ջատագովության գործողություններում՝ առանց հատուկ կարգավիճակ ունենալու կամ գրանցվելու անհրաժեշտության: ԶՀԿ-ներին չեն հալածում կամ հետապնդում քաղաքական կուսակցությունների շահերին սատարող կամ այլընտրանքային տեսակետների համար: Սակայն անհատները իրենց քաղաքական հայացքների համար կարող են ատելության խոսքի և վերբալ հարձակումների թիրախ դառնալ (տե՛ս նաև Ոլորտ 6՝ «Խոսքի ազատություն»):

#### Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Պետական մարմիններին՝ օգտագործել մասնակցության առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները և ապահովել բովանդակալից մասնակցություն, այդ թվում՝
  - ներգրավել ԶՀԿ-ներին քաղաքականության մշակման վաղ փուլերում,
  - հասցեագրել e-draft հարթակի խնդիրները,
  - բավարար ժամանակ տրամադրել քննարկումների համար,

<sup>196</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ., Ինֆորմացիայի Ազատության Կենտրոն, ֆեյսբուքյան հրապարակում, 06.08.2024, <https://www.facebook.com/FOICenterArmenia/posts/pfbid036CHtxEsmhhSCAJ9LgNXYNJfPUdyFonEo55cGqHPqv5GyDM3UJMxzH4QeDY9fh27L>, Վիճակագրություն հարցումների վերաբերյալ, ՀՀ կառավարություն, <https://www.gov.am/am/Statistics/>, Տեղեկատվություն ստանալու հարցումների վիճակագրություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, <https://www.mlsa.am/statistic-information-requestes>, ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից 2023 թվականի ընթացքում ստացված տեղեկություն ստանալու հարցումների վերաբերյալ, <https://mineconomy.am/media/27701/Ardir-harcum.pdf>:  
<sup>197</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 3:  
<sup>198</sup> ՀՀ Սահմանադրական օրենքը «Կուսակցությունների մասին», 16.12.2016, վերջին փոփ.14.07.2022, հոդված 2, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166242>:  
<sup>199</sup> Հակակոռուպցիոն ռազմավարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, <https://www.moj.am/page/583>:

- ավելի հաճախ դեմառդեմ քննարկումներ կազմակերպել, այդ թվում՝ մարզերում,
  - վիճակագրություն վարել պետական մարմինների կողմից իրականացվող մասնակցային գործընթացների և առաջարկների ներառման վերաբերյալ,
  - հնարավորինս հաշվի առնել և ներառել ՔՀԿ-ների փաստահեն և հիմնավորված առաջարկությունները:
- ՀՀ ազգային ժողովին՝ մեխանիզմներ նախատեսել ԱԺ պատգամավորների հեղինակած նախագծերի պարտադիր հանրային քննարկումներն իրականացնելու և իրավական նախագծերի նախնական գաղափարների քննարկման, ինչպես նաև կառավարության կողմից ներկայացված նախագծերի վերանայման ավարտական փուլերում ՔՀԿ-ներին ներգրավելու (այդ թվում՝ մշտական հանձնաժողովների մակարդակով մասնակցության) համար:
  - ՀՀ կառավարությանը և Ազգային ժողովին՝ իրավական հետևանքներ նախատեսել հանրային քննարկումների և խորհրդակցական մարմինների վերաբերյալ դրույթները չկատարելու համար (օրինակ՝ իրավական ակտն անվավեր ճանաչելու հնարավորություն):
  - Պետական մարմիններին՝ ժամանակին և լիարժեք արձագանքել ՔՀԿ-ների հարցումներին և ապահովել պաշտոնական կայքերում տեղեկությունների ժամանակին հրապարակումը և շարունակական թարմացումը:
  - ՀՀ կառավարությանը և Ազգային ժողովին՝ իրավական միջոցառումներ ապահովել տեղեկատվության մատչելիությունը բարելավելու համար, այդ թվում՝
    - տեղեկատվության ազատության հարցով արտադատական անկախ մարմին ստեղծել,
    - ավելի սեղմ ժամկետներ նախատեսել տեղեկատվության ազատության իրավունքին վերաբերող գործերի քննության համար այս իրավունքի արդյունավետ պաշտպանությունը հնարավոր դարձնելու համար,
    - «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքից հանել «սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն» հասկացությունը և չեղարկել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում 2023 թվականին ընդունված փոփոխությունները:
  - ՀՀ արդարադատության նախարարությանը՝ ապահովել պետոեզիստրի կայքում առկա գրանցամատյանի, ինչպես նաև պետության կողմից տնօրինվող այլ տեղեկատվական բազաների անվճար հանրային հասանելիությունը հանրության մասնակցությունն ու վերահսկողությունը խթանելու նպատակով:
  - ՀՀ կառավարությանը՝ ընդլայնել ՔՀԿ-ների մասնակցությունը քաղաքականության իրականացման և մշտադիտարկման փուլերում՝ սահմանելով համապատասխան ինստիտուցիոնալ մեխանիզմներ և ապահովելով մասնակցությունը նաև օրենքների, քաղաքականությունների և ռազմավարությունների ընդունումից հետո:

### 3.6 Խոսքի ազատություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.8/7

Իրավական դաշտ՝ 5.2/7	Գործնական դաշտ՝ 4.3/7
-------------------------	--------------------------

Խոսքի ազատության և կարծիք արտահայտելու իրավունքը երաշխավորված է օրենսդրությամբ և կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ որոշակի նպատակների ներքին շրջանակում: Ըստ օրենքի՝ լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա: Արգելվում է գրաքննությունը, լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը և խտրականությունը: Բացառությամբ հեռուստառադիոընկերությունների՝ լրատվամիջոցներն ազատ են իրենց գործունեությունն իրականացնել առանց գրանցման և լիցենզավորման պահանջի:

2024 թվականին բազմակարծության միջավայրի և ՉԼՄ-ների արգելափակման դեպքերի բացակայության շնորհիվ Հայաստանը բարելավել է իր միավորները Համացանցի ազատության և Մամուլի ազատության ինդեքսներում: Կառավարությունը և ՔՀԿ-ները շարունակել են մեդիա բարեփոխումների հայեցակարգի մշակման իրենց համատեղ աշխատանքը՝ 2022 թվականին մեդիա կազմակերպությունների, կառավարության և խորհրդարանի միջև ստորագրված հուշագրի հիման վրա: Ի տարբերություն նախորդ տարվա՝ 2024 թվականին կառավարությունը բաց և համագործակցային մոտեցում է ցուցաբերել շահագրգիռ քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների հետ մեդիա ոլորտի նոր օրենսդրական նախաձեռնությունների և համապատասխան ծրագրերի իրականացման վերաբերյալ խորհրդակցելու հարցում: Մասնավորապես, քննարկումներ են ծավալվել «Չանգվածային լրատվության մասին» օրենքում և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների նախագծերի շուրջ, որտեղ, ի թիվս այլ դրույթների, նախատեսվում է ՉԼՄ-ների ինքնակարգավորման մեխանիզմներ սահմանել: Կառավարությունը նաև մի շարք միջոցառումներ է իրականացրել մեդիա գրագիտության բարելավման և ապատեղեկատվության դեմ պայքարի ուղղությամբ ՔՀԿ-ների մասնակցությամբ և համագործակցությամբ՝ 2023 թվականի ավարտին ընդունված «Ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային հայեցակարգի» շրջանակներում:

Որպես բացասական զարգացումներ՝ 2024 թվականին արձանագրվել են ֆիզիկական բռնության և լրատվամիջոցների ներկայացուցիչների գործունեությունը խոչընդոտելու բազմաթիվ դեպքեր, որոնց մեծ մասը տեղ է գտել 2024 թվականի ապրիլ-հունիս ամիսների բողոքի ակցիաների ժամանակ: Ինչպես նախորդ տարիներին, լրագրողներին և ակտիվիստներին բազմաթիվ հայցեր են ներկայացվում գրպարտության և վիրավորանքի համար փոխհատուցում ստանալու պահանջով: Սակայն 2024 թվականին պաշտոնյաների կողմից արտադատական ճանապարհով խնդիրը հարթելու աճող միտում է արձանագրվել: Ատելության խոսքի և բռնության հրապարակային կոչերի նկատմամբ պատժամիջոցներ



սահմանող՝ Քրեական օրենսգրքի դրույթները գործնականում կիրառվում են, սակայն ընտրովի մոտեցմամբ: Ըստ ՔՀԿ-ների և լրատվամիջոցների հրապարակումների՝ իրավապահ մարմինները հակված են պաշտպանելու պաշտոնյաներին, այլ ոչ թե այն ՔՀԿ-ներին և սոցիալական խմբերին, որոնք ատելության խոսքի, ոտնձգությունների և վիրավորանքների թիրախ են դառնում:

Հաշվի առնելով համագործակցության, ապատեղեկատվության դեմ պայքարի և զրպարտության հայցերով արտադատական մեխանիզմների կիրառման դրական միտումները՝ խոսքի ազատության ոլորտում գործնական դաշտի և արդյունքում՝ ոլորտի ընդհանուր գնահատականը նախորդ տարվա համեմատ բարելավվել է (համապատասխանաբար՝ 2023 թվականի 4,2 միավորից 2024 թվականին դառնալով 4,3 և 4,7 միավորից դառնալով 4,8 միավոր): Առաջարկությունները ներառում են հետևյալը՝ կառավարությանը կոչ անել շարունակել համագործակցային մոտեցումը ՉԼՄ-ների հետ կապված օրենսդրության մշակման և ապատեղեկատվության դեմ միջոցառումների իրականացման գործում, ինչպես նաև հետևողական ու ոչ խտրական մոտեցում կիրառել ատելության խոսքի և բռնության կոչերի դեմ պայքարում:

[Չափորոշիչ 1. Յուրաքանչյուր ոք կարծիք արտահայտելու և խոսքի ազատության իրավունք ունի:](#)

ՀՀ օրենսդրությունը երաշխավորում է յուրաքանչյուրի՝ խոսքի ազատության և իր կարծիքն արտահայտելու իրավունքը: Ըստ ՀՀ Սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, որը ներառում է առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով: Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը ևս երաշխավորվում է Սահմանադրությամբ<sup>200</sup>:

Ըստ «Չանգվածային լրատվության մասին» օրենքի՝ լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա: Արգելվում է գրաքննությունը, լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը և խտրականությունը: Օրենքը սահմանափակում է գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը<sup>201</sup>: Չանգվածային լրատվության միջոցները չեն ազատվում

<sup>200</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 42:

<sup>201</sup> ՀՀ օրենքը «Չանգվածային լրատվության մասին», 13.12.2003, վերջին փոփ. 25.05.2022, հոդված 7, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164454>:

տեղեկատվության տարածման համար պատասխանատվությունից չնույնականացվող աղբյուրի տարածած տեղեկատվության վերարտադրության համար<sup>202</sup>:

Լրատվական միջոցները թողարկվում և տարածվում են առանց նախնական կամ ընթացիկ պետական գրանցման, լիցենզավորման, պետական կամ որևէ այլ մարմնում հայտարարագրման կամ որևէ մարմնի ծանուցման<sup>203</sup>: Լիցենզավորման պահանջը վերաբերում է բացառապես ռադիո և հեռուստաընկերություններին: «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքը կանոնակարգում է հեռարձակող լրատվամիջոցների գործունեությունը, այդ թվում՝ դրանց հեղինակագործման, լիցենզավորման կարգը, իրավունքներն ու պարտականությունները<sup>204</sup>:

Մեդիա կազմակերպությունների, ԱԺ ոլորտային մշտական հանձնաժողովի և ՀՀ արդարադատության նախարարության միջև 2022 թվականին ստորագրված հուշագրի հիման վրա ներկայումս մշակվում է մեդիա ոլորտի բարեփոխումների հայեցակարգը<sup>205</sup>: Այն մասնավորապես նախատեսում է ՉԼՄ-ների ինքնակարգավորման համակարգ, ինչը հիմք է հանդիսացել ՀՀ արդարադատության նախարարության կողմից Freedom House կազմակերպության հետ համատեղ մշակված և 2023 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հանրային քննարկմանը ներկայացված «Չանգվածային լրատվության մասին» օրենքում և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների նախագծերի համար<sup>206</sup>: Նախագիծը ԲՀԿ-ների հետ քննարկվել է ԱԺ համապատասխան մշտական հանձնաժողովի կողմից 2024 թվականի ապրիլին կազմակերպված բաց հանրային լսումների ընթացքում<sup>207</sup>: Նախագծի նպատակն է Հայաստանի մեդիա ոլորտի օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին և բարելավել լրատվամիջոցների հաշվետվողականությունն ու բարեվարքությունը ինքնակարգավորման մեխանիզմների սահմանման միջոցով: 2024 թվականի նոյեմբերի դրությամբ նախագիծը դեռ չի ընդունվել<sup>208</sup>:

2024 թվականին լրատվամիջոցների աշխատակիցների և լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության բազմաթիվ դեպքեր են արձանագրվել, այդ թվում՝ ապրիլ-հունիս ամիսների հավաքների ժամանակ: Մասնավորապես, տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից արձանագրվել է կանխամտածված ոստիկանական բռնություն, որը հանգեցրել է ֆիզիկական վնասվածքների, ինչպես նաև այնպիսի խախտումներ, ինչպիսիք են անօրինական ձերբակալությունները, սարքավորումների

<sup>202</sup> Ըստ օրենքի՝ «չնույնականացվող աղբյուրը» սահմանվում է որպես համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող կայք կամ համացանցային կայքի կամ հավելվածի օգտահաշիվ կամ ալիք կամ էջ, որի տնօրինողի նույնականացման տվյալները բացակայում են կամ ակնհայտ կեղծ են կամ թերի են, եթե այդ թերությունը թույլ չի տալիս նույնականացնել աղբյուրը տնօրինողին:

<sup>203</sup> ՀՀ օրենքը «Չանգվածային լրատվության մասին», 13.12.2003, հոդված 4:

<sup>204</sup> ՀՀ օրենքը «Տեսալսողական մեդիայի մասին», 16.07.2020, վերջին փոփ. 02.05.2024,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193040>:

<sup>205</sup> Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2024 թ. երրորդ եռամսյակային զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 24.10.2024:

<sup>206</sup> ՀՀ օրենքը «Չանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/6552/about>:

<sup>207</sup> «Առաջարկվում է բարեփոխել մեդիաոլորտը կարգավորող օրենսդրությունը», ՀՀ Ազգային ժողով, 29.04.2024, [http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=20501&year=2024&month=04&day=29&lang=arm&enc=utf8](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=20501&year=2024&month=04&day=29&lang=arm&enc=utf8):

<sup>208</sup> Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2024 թ. երրորդ եռամսյակային զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 24.10.2024:

ոչնչացումը և մասնագիտական գործունեության խոչընդոտումը<sup>209</sup>: Ըստ վկայությունների՝ հունիսի 12-ի բողոքի ակցիաների ժամանակ ոստիկանները նռնակներ են նետել լրագրողների և օպերատորների ուղղությամբ: Ընդհանուր առմամբ, նռնակների և բախումների արդյունքում այդ օրը տուժել է ՉԼՄ-ների առնվազն 10 ներկայացուցիչ<sup>210</sup>:

## Չափորոշիչ 2. Պետությունն աջակցում և պաշտպանում է խոսքի և կարծիքի արտահայտման ազատությունը:

Գործող օրենսդրությունն աջակցում է խոսքի և կարծիքի արտահայտման ազատությանը և պաշտպանում այն՝ հիմնականում միջազգային իրավունքին համապատասխան: Ըստ «Չանգվածային լրատվության մասին» օրենքի՝ լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները պարտավոր չեն բացահայտել իրենց տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա սահմանվել է դատարանի որոշմամբ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով<sup>211</sup>: Ազդարարների անձնական տվյալների գաղտնիությունը պաշտպանվում է «Ազդարարման համակարգի մասին» օրենքով<sup>212</sup>: «Չանգվածային լրատվության մասին» օրենքի խնդրահարույց դրույթն այն է, որ օրենքը թույլ է տալիս պետական մարմիններին դադարեցնել լրագրողի հավատարմագրումը, եթե նա մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ խախտել է տվյալ մարմնի աշխատակարգի կանոնները<sup>213</sup>:

Վիրավորանքը և զրպարտությունը Հայաստանում ապաքերականացվել են 2010 թվականին: Չրպարտությունն ու վիրավորանքը և դրանց համար փոխհատուցման առավելագույն չափերը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, որտեղ մինչև 3 միլիոն դրամի փոխհատուցում է նախատեսվում վիրավորանքի և 6 միլիոն դրամ՝ զրպարտության համար: Ըստ Քաղաքացիական օրենսգրքի՝ փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը պետք է հաշվի առնի վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունը<sup>214</sup>: Ըստ խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի մոնիտորինգային զեկույցի՝ 2024 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին լրագրողների և լրատվամիջոցների դեմ հարուցվել է 35 հայց՝ բոլորն էլ զրպարտության և վիրավորանքի հատկանիշներով (2023 թվականի նույն ժամանակահատվածում 30 հայց էր գրանցվել)<sup>215</sup>: Մինևույն ժամանակ, զեկույցում որպես դրական միտում է նշվում այն, որ քաղաքական գործիչները և մասնավորապես իշխող ուժի ներկայացուցիչները փորձում են տեղեկատվական վեճերը կարգավորել արտադատական

<sup>209</sup> 'Protests in Armenia: RSF denounces deliberate police violence against reporters' («Բողոքի ցույցեր Հայաստանում. RSF-ը դատապարտում է լրագրողների նկատմամբ ոստիկանության կանխամտածված բռնությունը»), Reporters Without Borders, 21.05.2024, <https://rsf.org/en/protests-armenia-rsf-denounces-deliberate-police-violence-against-reporters>, Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2024 թ. երրորդ եռամսյակային զեկույց, խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 24.10.2024:

<sup>210</sup> Հայտարարություն, խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 13.06.2024, <https://khosq.am/2024/06/13/հայտարարություն-127/>:

<sup>211</sup> ՀՀ օրենքը «Չանգվածային լրատվության մասին», 13.12.2003, հոդված 5:

<sup>212</sup> ՀՀ օրենքը «Ազդարարման համակարգի մասին», 09.06.2017, վերջին փոփ. 07.12.2022, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131>:

<sup>213</sup> ՀՀ օրենքը «Չանգվածային լրատվության մասին», 13.12.2003, հոդված 6:

<sup>214</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգրք, 05.05.1998, վերջին փոփ. 10.09.2024, հոդված 1087.1:

<sup>215</sup> Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2024 թ. երրորդ եռամսյակային զեկույց, խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 24.10.2024, Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2023 թ. տարեկան զեկույց, խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 23.01.2024, <https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-36/>:

ճանապարհով՝ լրատվամիջոցների էթիկայի մարմնի միջոցով: Այս գործընթացը ենթադրում է դիմումի ներկայացում ՉԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին (անկախ ինքնակարգավորման նախաձեռնություն, որին միացել է 85 լրատվամիջոց և լրագրողական 8 միություն)<sup>216</sup> վեճերի վերաբերյալ խորհրդատվական որոշումներ կայացնելու խնդրանքով: Եթե Դիտորդ մարմինը հայցը հիմնավորված է համարում, պատասխանատու լրատվամիջոցին առաջարկում է հերքել տեղեկատվությունը<sup>217</sup>:

ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում ատելության խոսքի համար: Ըստ օրենսգրքի 239-րդ հոդվածի՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութի կամ առարկայի տարածումը պատժվում է օրենքով: Պատժամիջոցները ներառում են 20000 դրամի չափով տուգանքից մինչև չորս տարվա ժամկետով ազատազրկում՝ ծանրացնող հանգամանքների դեպքում: Օրենսգրքի 330-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանվում բռնություն գործադրելու հրապարակային կոչերի և բռնությունը հրապարակային արդարացնելու կամ քարոզելու համար՝ որպես պատիժ սահմանելով տուգանքը կամ մինչև երեք տարի ժամկետով ազատազրկումը՝ ծանրացնող հանգամանքների դեպքում: Այս երկու հոդվածներում ծանրացնող հանգամանքները ներառում են այն դեպքերը, երբ արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների, զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ<sup>218</sup>:

Ինչպես և նախորդ տարիներին, ապատեղեկատվության և կեղծ լուրերի մեծ ծավալը մտահոգություն է առաջացնում, ինչը նշվում է նաև միջազգային կազմակերպությունների զեկույցներում<sup>219</sup>: ԲՀԿ-ները գտնում են, որ ատելության խոսքի և բռնության կոչերի դեմ պայքարի օրենսդրությունը ընտրովի է կիրառվում, և իրավապահ մարմինները հակված են պաշտպանելու պետական պաշտոնյաներին, այլ ոչ թե ատելության խոսքի, ոտնձգությունների և վիրավորանքների թիրախում գտնվող ԲՀԿ-ներին և սոցիալական խմբերին<sup>220</sup> (օրինակ՝ ԼԳՏԻԲ+ խմբեր, բնապահպան ակտիվիստներ, իրավապաշտպաններ կամ լրագրողներ): Ըստ լրատվամիջոցների՝ ենթադրյալ «բռնության կոչի» հիմքով հարուցված 38 գործերից 36-ը այն քաղաքական գործիչների և սոցիալական ցանցերի օգտատերերի դեմ են, որոնք

<sup>216</sup> Ինքնակարգավորման նախաձեռնություն. ՉԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմին, Երևանի մամուլի ակումբ, <https://ypc.am/hy/self-regulation/զվ-ների-ինքնակարգավորման-նախաձեռն/>:

<sup>217</sup> Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2024 թ. երկրորդ եռամսյակային զեկույց, խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 25.07.2024:

<sup>218</sup> ՀՀ քրեական օրենսգիրք, 05.05.2021, վերջին փոփ. 05.04.2024, հոդվածներ 329 և 330, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID= 194397>:

<sup>219</sup> Armenia 2023, Amnesty International, <https://www.amnesty.org/en/location/europe-and-central-asia/eastern-europe-and-central-asia/armenia/report-armenia/>, Armenia (2024), Reporters Without Borders, <https://rsf.org/en/country/armenia>.

<sup>220</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

մեկնաբանություններ են արել վարչապետի կամ նրա կողմակիցների մասին<sup>221</sup>: 2024 թվականի մարտին Antifake.am լրատվական կայքի երկու լրագրողներ վարչապետին և այլ պաշտոնյաներին հայհոյանքներ ուղղելուց հետո խուլիգանության հիմքով երկամսյա նախնական կալանքի տակ վերցվեցին<sup>222</sup>: Չվիճարկելով մեղադրանքի իրավական հիմքը՝ փորձագետները նշում են հայհոյանքների նկատմամբ քրեական հետապնդման ընտրովի մոտեցման մասին, քանի որ այն կիրառվում է միայն այն դեպքում, երբ թիրախավորում է պաշտոնյային<sup>223</sup>: Հարկ է նշել, որ երբ նույն կայքը ԲՀԿ-ների հասցեին զրպարտչական արշավներ էր տարածում, 2022-2023 թվականներին դատարանում քննվող ԲՀԿ-ների հայցը մերժվեց, ինչը Տեղեկատվական վեճերի անկախ մարմնի կողմից դիտարկվեց որպես արդյունավետ դատական քննության բացակայություն<sup>224</sup>:

2024 թվականին ոչ մի ավանդական կամ առցանց լրատվամիջոց արգելափակված չի եղել, իսկ համացանցի հրապարակումների համար հատուկ թույլտվություն կամ ավանդական լրատվամիջոցների համար կիրառելի հատուկ վարչական կանոնակարգերին համապատասխանություն չի պահանջվում: Լրագրողների դատապարտման կամ տեղեկատվության աղբյուրները բացահայտելու նպատակով ոստիկանության կողմից լրատվամիջոցների խուզարկության դեպքեր չեն եղել<sup>225</sup>: Դրա շնորհիվ Հայաստանը բարելավել է իր վարկանիշը «Ազատությունը համացանցում» 2024 թվականի զեկույցում<sup>226</sup>: Հայաստանի վարկանիշը վեց կետով բարձրացել է նաև Մամուլի ազատության ինդեքսում (180 երկրների մեջ 49-րդից՝ 43-րդը): Մինևույն ժամանակ, ըստ Մամուլի ազատության ինդեքսի զեկույցի, չնայած բազմակարծության միջավայրին՝ Հայաստանում լրատվամիջոցները շարունակում են բևեռացված մնալ, իսկ մամուլի ազատության ոչ բավարար իրավական պաշտպանությունը և ապատեղեկատվության ու ատելության խոսքի բարձր մակարդակը առանցքային խնդիրներ են մնում<sup>227</sup>:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի և կառավարության «Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի կենտրոն» ՊՈԱԿ-ի համատեղ ջանքերով մշակված՝ ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թվականների հայեցակարգն ընդունվել է 2023 թվականի դեկտեմբերին<sup>228</sup>: Հայեցակարգը և դրա գործողությունների ծրագիրը ներառում են երեք ռազմավարական ուղղություններ, այդ թվում՝ ապատեղեկատվությունը կանխելու, հայտնաբերելու և վերլուծելու նպատակով պետական կառույցների կարողությունների հզորացումը, ապատեղեկատվության դեմ պայքարի շուրջ համագործակցության

<sup>221</sup> «Դատարանում քննվող բռնության կոչերի 95%-ը ուղղված է Փաշինյանին և նրա աջակիցներին», Լուսինե Հակոբյան, Hetq.am, 26.01.2024, <https://hetq.am/hy/article/163786>:

<sup>222</sup> ‘Armenia detains two podcast hosts for insulting Pashinyan’ («Հայաստանում ձերբակալվել է փոդքասթի երկու հաղորդավար՝ Փաշինյանին վիրավորելու համար»), OC-Media, 25.03.2024, <https://oc-media.org/armenia-detains-two-podcast-hosts-for-insulting-pashinyan/>.

<sup>223</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>224</sup> Տե՛ս՝ «ԲՀԿ չափիչ 2023 Հայաստան», ԹԻՀԿ, ECNL, 2023, [https://csometer.info/sites/default/files/2024-01/Armenia%202023%20CSO%20Meter%20Country%20Report%20ARM\\_%20%282%29.pdf](https://csometer.info/sites/default/files/2024-01/Armenia%202023%20CSO%20Meter%20Country%20Report%20ARM_%20%282%29.pdf), «#95 «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ն ընդդեմ «Antifake.am» կայքի», Տեղեկատվական վեճերի խորհուրդ, <https://idcarmenia.am/conclusion/95/>:

<sup>225</sup> Հարցազրույց, հոկտեմբեր 2024 թ.:

<sup>226</sup> Freedom on the Net 2024: Armenia (Ազատությունը համացանցում 2024. Հայաստան), Freedom House, <https://freedomhouse.org/country/armenia/freedom-net/2024>:

<sup>227</sup> 2024 World Press Freedom Index (Մամուլի ազատության համաշխարհային ինդեքս 2024), Reporters Without Borders, <https://rsf.org/en/index>:

<sup>228</sup> «Ընդունվել է ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային հայեցակարգը», Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 28.12.2023, <https://foi.am/news-events/33125>:

բարելավումը և մասնավոր հատվածի մոբիլիզացիան, ինչպես նաև մեդիա ազատությունների վերաբերյալ գիտելիքի և մեդիակրթության մակարդակի բարձրացումը ապատեղեկատվության հանդեպ հանրային դիմակայություն ձևավորելու համար<sup>229</sup>: 2024 թվականին հայեցակարգի իրականացման ուղղությամբ մի շարք քայլեր են արվել, ներառյալ մեդիա գրագիտության բարելավմանն առնչվող աշխատանքները համակարգող խմբի ստեղծումը, պետական ծառայողների կարողությունների զարգացման միջոցառումները, պետական մարմինների հետ համակարգման հանդիպումները հաղորդակցման ռազմավարությունը պլանավորելու և իրականացնելու համար և իրազեկման արշավներ իրականացնելու նպատակով մասնավոր լրատվական ընկերությունների հետ համագործակցության զարգացումը<sup>230</sup>:

### Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Պետությանը՝ պահպանել իր հանձնառությունը ՉԼՄ-ների հետ կապված օրենսդրության մշակման վաղ փուլերում ՔՀԿ-ների և լրատվամիջոցների հետ խորհրդակցելու վերաբերյալ և մեդիա բարեփոխումների համակարգային մոտեցում կիրառել՝ հիմնվելով քաղաքացիական հասարակության հետ համատեղ մշակված հայեցակարգի վրա:
- Իրավապահ մարմիններին՝ արդար և ոչ խտրական մոտեցում կիրառել ատելության խոսքի և բռնության կոչերի հիմքով քրեական գործեր հարուցելիս:
- ՀՀ կառավարությանը՝ արդյունավետ և թափանցիկ կերպով իրականացնել «Ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգը»՝ ներգրավելով ՔՀԿ-ներին:

## 3.7 Մասնավոր կյանքի իրավունք

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.9/7

Իրավական դաշտ՝

5.8/7

Գործնական դաշտ՝

3.9/7

Մասնավոր կյանքի իրավունքը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ, սակայն օրենսդրության բարելավման կարիք կա՝ հաշվի առնելով նորագույն տեխնոլոգիաները և դրանց հետ կապված՝ անձնական տվյալների կառավարման և անվտանգության ռիսկերը: 2024 թվականին

<sup>229</sup> ՀՀ վարչապետի N 1319-Լ որոշումը «Ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թվականների հայեցակարգը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», 27.12.2023, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=187979>:

<sup>230</sup> Տեղեկատվությունը տրամադրվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի և կառավարության «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչների կողմից, հոկտեմբեր 2024 թ.:

Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը (ԱՏՊԳ) քաղաքացիական ծառայողների համար առցանց դասընթաց մեկնարկեց անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ՝ նպատակ ունենալով հասցեագրել այս ոլորտում քաղաքացիական ծառայողների իրազեկվածության և գիտելիքների պակասի խնդիրը:

2024 թվականին հրապարակված որոշ իրավական նախագծեր չեն համապատասխանել անձնական տվյալների պաշտպանության սկզբունքներին, ինչպես օրինակ՝ «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը, որը հնարավորություն է տալիս ոստիկանությանը իրական ժամանակի ռեժիմով հասանելիություն ունենալ մասնավոր հաստատությունների տեսախցիկներին (հավելյալ տեղեկատվությունը ներկայացված է հաջորդ պարբերության ներքո): Ոլորտին առնչվող օրենսդրական զարգացումներից է «Հանրային տեղեկատվության մասին» օրենքի նախագծի փաթեթը, որը ներառում է փոփոխություններ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում: Այս փոփոխությունները մասնավորապես նախատեսում են ԱՏՊԳ լիազորությունների վերանայում՝ անձնական տվյալների անվտանգության նկատմամբ հսկողություն իրականացնելու մասով, և պարտավորեցնում են հսկողություն իրականացնող պետական մարմիններին անձնական տվյալների պաշտպանությանն առնչվող նախագծերը նախապես համաձայնեցնել ԱՏՊԳ-ի հետ:

Հսկողության գործողությունների օրինականության նկատմամբ վերահսկողության պակասի պատճառով գործնականում պետության կողմից մասնավոր կյանքի իրավունքը պաշտպանելու կարողության վերաբերյալ որոշակի անվստահություն կա: Այս համատեքստում «Ոստիկանության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու նախագծերը, որոնք պարտավորեցնում են խանութներին և հանրային նշանակություն ունեցող այլ տարածքներին (օրինակ՝ սրճարաններ ու ռեստորաններ) իրենց մուտքի մոտ և շինության բոլոր կողմերում տեսահսկման համակարգեր տեղադրել՝ ոստիկանության համար ամենօրյա 24-ժամյա իրական ժամանակի ռեժիմով հասանելիություն ապահովելով, մի շարք մտահոգություններ են առաջացրել: ՔՀԿ-ները և միջազգային կազմակերպությունները բարձրաձայնեցին նման միջոցառումների անհամաչափության, տվյալների հավաքագրման նպատակների անորոշության, տեսահսկման համակարգի պատշաճ ու անվտանգ օգտագործման երաշխիքների բացակայության և այլ խնդիրների մասին: Խորհրդարանում նախագծի երկրորդ ընթերցումից առաջ կառավարությունը հետ կանչեց նախագիծը՝ նշելով հետագա քննարկումների և հսկողության միջոցների փուլ առ փուլ ներդրման անհրաժեշտության մասին:

Մասնավոր կյանքի իրավունքի ոլորտի գնահատականները 2023 թվականի համեմատ չեն փոխվել: Մասնավոր կյանքի իրավունքը պաշտպանելու նպատակով տվյալների առավել անվտանգ պահպանումը ապահովելու, հսկողության գործողությունների վերաբերյալ օրենսդրությունը մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցմամբ և թափանցիկության ու հաշվետվողականության սկզբունքների պահպանմամբ մշակելու և իրականացնելու վերաբերյալ առաջարկությունները արդիական են մնում:

[Չափորոշիչ 1. Յուրաքանչյուր ոք ունի մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության իրավունք:](#)

ՀՀ օրենսդրությունը երաշխավորում է մասնավոր կյանքի իրավունքը և պատշաճ պաշտպանությունը մասնավոր կյանքի նկատմամբ միջամտությունից կամ հարձակումներից:

ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուրի մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով<sup>231</sup>: Քրեական օրենսգրքով պատասխանատվություն է սահմանվում մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելու, իրացնելու կամ հայտնելու կամ այդ տեղեկությունն օրենքով սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու, իրացնելու կամ հայտնելու նպատակով ձեռք բերելու կամ պահելու համար<sup>232</sup>: Սակայն Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված չէ մասնավոր հարաբերություններում անձնական կյանքի գաղտնիության իրավունքի խախտման հետևանքով տուժած անձին ոչ նյութական վնասի հատուցում<sup>233</sup>:

ՀՀ Սահմանադրության առանձին հոդված վերաբերում է անձնական տվյալների պաշտպանությանը: Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ<sup>234</sup>: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը կարգավորում է անձնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները: Ըստ օրենքի՝ տվյալների մշակումը պետք է հետապնդի օրինական նպատակ, դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր<sup>235</sup>: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի դրույթները խախտելու համար սահմանված են մի շարք վարչական տույժեր, այդ թվում՝ 50000-ից մինչև 500000 դրամ տուգանք, եթե խախտումը ենթակա չէ քրեական պատասխանատվության<sup>236</sup>:

2015 թվականին ՀՀ արդարադատության նախարարությանը կից ստեղծված ԱՏՊԳ-ն լիազորված է վերահսկողություն իրականացնել անձնական տվյալների պաշտպանության իրավական պահանջների կատարման նկատմամբ, վարել անձնական տվյալներ մշակող կազմակերպությունների ռեեստրը և ապահովել համապատասխան իրավունքների պաշտպանությունը: Գործակալությունը տրամադրում է խորհրդատվություն, քաղաքացիների դիմումների հիման վրա հարուցում է վարչական վարույթ, կարծիքներ է տրամադրում օրենքների և իրավական նախագծերի՝ անձնական տվյալների մշակման սկզբունքներին համապատասխանության վերաբերյալ, ինչպես նաև կազմակերպում է ուսուցման և

<sup>231</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 31:

<sup>232</sup> ՀՀ Քրեական օրենսգրք, 05.05.2021, հոդված 204:

<sup>233</sup> Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների վերլուծություն. Մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք, Հայաստան, Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, Երևան, 2022, <https://ldpf.am/uploads/files/d70768ed98487c0018d16b3639493d04.pdf>:

<sup>234</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 34:

<sup>235</sup> ՀՀ օրենքը «Անձնական տվյալների պաշտպանության մասին», 18.05.2015, վերջին փոփ. 14.06.2023, հոդված 5, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=183134>:

<sup>236</sup> ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրք, 06.12.1985, հոդված 189.17:



իրազեկման միջոցառումներ և քաղաքացիների համար ուղեցույցներ և տեղեկատվական նյութեր է հրապարակում անձնական տվյալները պաշտպանելու վերաբերյալ<sup>237</sup>:

Չնայած «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը միջազգային իրավունքին համահունչ նպաստավոր դրույթներ է պարունակում, այդ օրենքի կիրարկման և վարչական պատասխանատվության գործիքակազմը թույլ է, ուստի գործնականում այս դրույթների կիրառումը պատշաճ կերպով չի ապահովվում, և տեղ են գտնում խախտումների դեպքեր: 2024 թվականի մայիսին ԱՏԳ-ն մեկնարկել է քաղաքացիական ծառայողների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ առցանց դասընթաց<sup>238</sup>՝ նպատակ ունենալով բարելավել իրազեկվածությունը և լրացնել համապատասխան գիտելիքի առկա բացերը:

Բոլոր նոր օրենքները և օրենսդրական փոփոխությունները շրջանառվում են պետական մարմինների, այդ թվում՝ ԱՏԳ-ի կարծիքները հավաքագրելու համար: Մինևույն ժամանակ, 2024 թվականին հրապարակված մի քանի իրավական նախագծեր չեն համապատասխանել անձնական տվյալների պաշտպանության սկզբունքներին, ինչպես օրինակ՝ «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը, որը թույլ է տալիս ոստիկանությանը մշտապես հասանելիություն ունենալ մասնավոր հաստատությունների տեսախցիկներին (ավելին տե՛ս ստորև՝ Չափորոշիչ 2-ի ներքո)<sup>239</sup>: Ոլորտին առնչվող օրենսդրական նախաձեռնություններից հարկ է նշել «Հանրային տեղեկատվության մասին» օրենքի նախագծի փաթեթով (որը 2024 թվականի սկզբին քննարկվել է ԲՀԿ-ների հետ) նախատեսված փոփոխությունները «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում, ըստ որոնց՝ ԱՏԳ որոշ լիազորություններ փոխանցվում են տվյալների անվտանգության նկատմամբ հսկողություն կատարող մարմնին, իսկ հսկողություն իրականացնող մարմինները անձնական տվյալների պաշտպանության ուղղությամբ մշակվող իրավական ակտերի նախագծերը կամ կատարվող գործողությունները պետք է նախօրոք համաձայնեցնեն ԱՏԳ-ի հետ<sup>240</sup>: Այս դրույթը կարող է օգնել, որ հսկողություն իրականացնող մարմինների կողմից նախաձեռնվող իրավական ակտերը ու գործողությունները ավելի լավ համապատասխանեն անձնական տվյալների պաշտպանության չափանիշներին:

## [Չափորոշիչ 2. Պետությունը պաշտպանում է ԲՀԿ-ների և առնչվող անձանց մասնավոր կյանքի իրավունքը:](#)

ԲՀԿ-ների մասնավոր կյանքի իրավունքը հիմնականում երաշխավորված է օրենսդրությամբ, սակայն մտահոգություններ կան՝ կապված գործնականում այդ իրավունքի իրացման հետ: ՀԿ-ների և հիմնադրամների հաշվետվություններում չի պահանջվում հրապարակել աշխատակիցների անունները՝ բացառությամբ ղեկավարի: Հիմնադրամի հաշվետվության ձևաչափում պահանջվում է ներառել հիմնադիրների, Հոգաբարձուների խորհրդի անդամների

<sup>237</sup> Տե՛ս Հրապարակային հաշվետվություն 2023 թ., Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, ՀՀ արդարադատության նախարարություն, <https://moj.am/storage/uploads/REPORT-2023%20PDPA.pdf>:

<sup>238</sup> «Արդեն հասանելի է հանրային ծառայողների համար Անձնական տվյալների պաշտպանության առցանց դասընթացը և Գործակալության պաշտոնական կայքը», Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, 17.05.2024, <https://pdpa.am/en/post/view/12>:

<sup>239</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>240</sup> «Հանրային տեղեկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/6936/about>:

անուններն ու ազգանունները, եթե հաշվետու տարվա ընթացքում նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից և ծառայություններից<sup>241</sup>:

Հսկողության տեխնիկական միջոցների կիրառման կանոնակարգերը սահմանվել են «Ոստիկանության մասին» օրենքում նման սարքերի օգտագործման վերաբերյալ պատշաճ ծանուցումը և անձնական տվյալների պաշտպանությունը ապահովելու նպատակով: Հանրային վայրերում տեղադրված անշարժ տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերի մասին պետք է նախագուշացնող ցուցանակներ տեղադրվեն տեսանելի վայրերում: Շարժական սարքավորումներ օգտագործելիս ոստիկանության ծառայողները դրանք պետք է կրեն տեսանելի ձևով՝ բացառությամբ գաղտնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման դեպքերի: Ստացված տեսանյութերը կամ լուսանկարները կարող են օգտագործվել հանցագործությունների կամ հասարակական կարգի խախտումների դեպքերի քննության, ոստիկանության ծառայողների գործողությունների վերաբերյալ բողոքները քննելու, անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցելու, ոստիկանության ծառայողի նկատմամբ իրականացված ծառայողական քննության ավարտից հետո վերջինիս վերագրվող կարգապահական խախտման դեպքի առկայությունը կամ բացակայությունը հրապարակայնացնելու նպատակով՝ առանց այլ անձանց նույնականացնող տվյալների հրապարակման կամ դրանց նվազագույն հրապարակմամբ: Տեսանյութերը կամ լուսանկարներն այլ նպատակներով օգտագործելը (այդ թվում՝ հրապարակելը) արգելվում է: Տեսանյութերի և լուսանկարների պահոց մուտք գործելու և տվյալներին ծանոթանալու իրավունք ունեցող ոստիկանության պաշտոնատար անձանց ցանկը, տվյալներից օգտվելու կարգը սահմանվում են ոստիկանության պետի հրամանով<sup>242</sup>: Թեև օրենքն արգելում է ոստիկանների կողմից անձնական տեխնիկական միջոցների օգտագործումը, սակայն, ըստ ԲՀԿ-ների զեկույցների, հունիսի 12-ի բողոքի ակցիայի ժամանակ որոշ ոստիկաններ նկարահանում էին ցուցարարներին իրենց բջջային հեռախոսներով, ինչը մտահոգություն է առաջացնում տվյալների հետագա հնարավոր անօրինական մշակման և համապատասխան պատասխանատվության միջոցների վերաբերյալ<sup>243</sup>:

Ոստիկանության աշխատակիցները կարող են օգտագործել դեմքի նույնականացման տեխնիկական միջոցներ՝ ենթադրյալ հանցանքի կատարման համար հետախուզման մեջ գտնվող անձի հետ նմանության առկայությունը իրական ժամանակում ստուգելու նպատակով: Միաժամանակ, ըստ օրենքի, տեխնիկական միջոցների տեսադաշտում հայտնված անձանց պատկերը չի կարող ամրագրվել, պահպանվել կամ մշակվել<sup>244</sup>:

ՀՀ ներքին գործերի նախարարությունը փողոցային հանցագործությունների դեմ պայքարի շրջանակներում ներկայացրել է «Ոստիկանության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» և հարակից օրենքներում փոփոխությունների փաթեթի նախագիծ: Ըստ նախագծի՝ խանութները, սրճարանները, ռեստորանները և այլ ձեռնարկություններ իրենց տարածքի մուտքի մոտ և ամբողջ երկայնքով պետք է տեղադրեն բարձր որակի տեսահսկման համակարգեր՝ ոստիկանության համար ապահովելով ամենօրյա

<sup>241</sup> ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 39:

<sup>242</sup> ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին», 16.04.2001, հոդված 22:

<sup>243</sup> ՀԱՏՈՒԿ ՉԵԿՈՒՅՑ Հունիսի 12-ին երևանում Ազգային ժողովի նստավայրի մոտ տեղի ունեցած հավաքի և ոստիկանության գործողությունների վերաբերյալ, Քաղաքական իրավունքների հայկական կենտրոն, Հայաստանի Հեղինակյան կոմիտե, 17.06.2024, Երևան, [https://armhels.com/wp-content/uploads/2024/08/Joint\\_Ad\\_Hoc\\_Report\\_HCA\\_ACPR\\_17.06.2024\\_arm.pdf](https://armhels.com/wp-content/uploads/2024/08/Joint_Ad_Hoc_Report_HCA_ACPR_17.06.2024_arm.pdf):

<sup>244</sup> ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին», 16.04.2001, հոդված 22:

24-ժամյա իրական ժամանակի ռեժիմով հասանելիություն այդ համակարգերին: Չնայած ԱՏԴԳ և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի բացասական գնահատականին՝ 2024 թվականի ապրիլին նախագիծը հաստատվեց կառավարության կողմից, իսկ հունիսին առաջին ընթացքում ընդունվեց Ազգային ժողովում<sup>245</sup>: ԲՀԿ-ները նախագծի մի շարք խնդրահարույց կողմեր են նշել, այդ թվում անհամաչափության, տվյալների հավաքագրման նպատակների անորոշության, տվյալների իրավաչափ մշակման և անվտանգության երաշխիքների բացակայության տեսանկյունից<sup>246</sup>: Ոստիկանությանը տեսախցիկների շարունակական հասանելիություն տրամադրելը կարող է ԲՀԿ ակտիվիստներին տեսահսկելու, նրանց առօրյա գործունեությանը և գործնական հանդիպումներին հետևելու, լրատվամիջոցների տեղեկատվության աղբյուրները բացահայտելու, ինչպես նաև երրորդ անձանց այս տվյալներ տրամադրելու (քանի որ այդ հնարավորությունը նախատեսված է նախագծով) հնարավորություն տալ: Human Rights Watch կազմակերպությունը քննադատել է նախագիծը՝ նշելով, որ այն անձնական կյանքի և այլ իրավունքների նկատմամբ չհիմնավորված միջամտություն է նախատեսում<sup>247</sup>: Ելնելով շահագրգիռ կողմերի մտահոգություններից՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը հետ է կանչել նախագիծը՝ նշելով, որ նախագիծը բխում է բացառապես հանրային շահից և անվտանգության նկատառումներից, սակայն հաշվի առնելով նախագծի շուրջ հանրային լայն կոնսենսուսի բացակայությունը՝ քննարկվում է խնդրի փուլային լուծման տարբերակը՝ շահագրգիռ կողմերին հետագա քննարկմանը հրավիրելու պատրաստակամությամբ<sup>248</sup>: Ի պատասխան դրան, ողջունելով այս քայլը, ԲՀԿ-ները նշել են, որ նման նախաձեռնությունները պետք է իրականացվեն ոլորտային հարակից օրենսդրության և պրակտիկայի պատշաճ ուսումնասիրությամբ և գործընթացում հանրության, հատկապես քաղաքացիական հասարակության և մասնագիտական հանրույթի ներգրավմամբ<sup>249</sup>:

ԲՀԿ գրասենյակային տարածքներում խուզարկություն կամ հաղորդակցության հսկողություն կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ այն անհետաձգելի դեպքերի, երբ հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման կամ պետական անվտանգությանը սպառնացող գործողությունների: Նման դեպքում Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) կարող է հսկողություն իրականացնել մինչև 48 ժամվա ընթացքում նախքան դատարանի որոշման տրամադրումը<sup>250</sup>:

Գործնականում փորձագետները և ԲՀԿ-ները կասկածներ ունեն ԱԱԾ-ի ու իրավապահ մարմինների կողմից հսկողության լիազորությունների օգտագործման օրինականության

<sup>245</sup> ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին, առաջին ընթացքում, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=74577>, ՀՀ օրենքը «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին, առաջին ընթացքում, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=74642>:

<sup>246</sup> «Դիրքորոշում «Ոստիկանության մասին» օրենքում եւ հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի վերաբերյալ. CyberHUB, dpHUB». CyberHUB, 22.08.2024, <https://cyberhub.am/hyRights/blog/2024/08/22/position-on-police-surveillance-law/>:

<sup>247</sup> 'Armenia: Surveillance Bill Threatens Rights' («Հայաստան. Վերահսկողության օրինագիծը վտանգավոր է իրավունքների տեսանկյունից»), Human Rights Watch, 31.10.2024, <https://www.hrw.org/news/2024/10/31/armenia-surveillance-bill-threatens-rights>:

<sup>248</sup> Հայտարարություն, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն, 11.11.2024, <https://mia.gov.am/2024/11/11/haytutaryarutyun-41/>:

<sup>249</sup> «ՀԿ-ների հայտարարությունը տեսահսկման համակարգերի տեղադրման ՆԳՆ-ի նախաձեռնության մասին», Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 12.11.2024, <https://transparency.am/hy/media/news/article/5195>:

<sup>250</sup> ՀՀ օրենքը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», 22.10.2007, վերջին փոփ. 07.02.2024, հոդվածներ 32 և 34, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=190391>:

վերաբերյալ, քանի որ հսկողության գործունեության օրինավորության վերահսկման և հաշվետվողականության մեխանիզմները բացակայում են, իսկ տվյալների արտահոսքի դեպքերի թափանցիկ քննություն չի իրականացվել: Իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից առանց դատարանի համապատասխան թույլտվության ՔՀԿ գրասենյակը խուզարկելու կամ ՔՀԿ փաստաթղթերին ծանոթանալու դեպքերի վերաբերյալ հաղորդումներ չեն եղել զեկույցի հաշվետու ժամանակահատվածի ընթացքում:

**Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.**

- ՀՀ կառավարությանը՝ անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել տվյալների անվտանգ պահպանման ուղղությամբ՝ մասնավոր կյանքի իրավունքը պաշտպանելու և տվյալների արտահոսքի որևէ հնարավորություն բացառելու նպատակով:
- ՀՀ կառավարությանը՝ ապահովել, որ հսկողության գործողությունների վերաբերյալ իրավական կարգավորումները մշակվեն միջազգային իրավունքին համապատասխան՝ ՔՀԿ-ների հետ քննարկմամբ, ինչպես նաև պահպանվեն գործնականում խախտումների դեպքում կիրառելիվ թափանցիկ և հաշվետու միջոցառումներ:

### 3.8 Պետության կողմից պաշտպանության պարտականություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.5/7

Իրավական դաշտ՝ 5.2/7	Գործնական դաշտ՝ 3.8/7
-------------------------	--------------------------

ՔՀԿ-ների և նրանց շահառուների պաշտպանության համար առկա են իրավական երաշխիքներ ու մեխանիզմներ, ներառյալ տեղական և միջազգային դատարաններ դիմելու իրավունքը: Սակայն գործնականում ՔՀԿ-ների և նրանց փոխկապակցված անձանց պաշտպանությունը իրավապահների կողմից բավարար չէ: Ինչպես նախորդ տարիներին, զգայուն ոլորտներում աշխատող ՔՀԿ-ները ենթարկվում են ճնշումների և սպառնալիքների: 2024 թվականին շարունակվել են բնապահպան ակտիվիստներին լռեցնելու միտումով ռազմավարական (SLAPP) դատավարությունները, ավելացել են նրանց նկատմամբ ճնշումները սոցիալական ցանցերում հարձակումների և լրատվամիջոցներում զրպարտչական խոսույթների միջոցով:

ՔՀԿ-ները դատարանում իրենց իրավունքները պաշտպանելու իրավական մեխանիզմներ ունեն, ինչպես նաև կարող են հանրային շահերը ներկայացնել շրջակա միջավայրի խնդիրների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտներում: Սակայն մի շարք բարդ նախապայմանների պատճառով գործնականում այս իրավունքի իրացումը զգալիորեն սահմանափակված է, հատկապես բնապահպանական հարցերի

դեպքում: Կառավարությունը նախատեսում է ընդլայնել ՅԿ-ների՝ հանրային շահերը ներկայացնելու իրավունքը, և 2024 թվականին ՔՅԿ-ները այս հարցի շուրջ քննարկումներ են նախաձեռնել՝ ապահովելու այս իրավունքի առավել արդյունավետ իրացումը:

ՔՅԿ-ներն այժմ ավելի լավ են տեղեկացված իրավաբանական անձանց իրական շահառուների հայտարարագրման պահանջի մասին, սակայն այս հայտարարագրի նպատակը և տվյալների թարմացման համար անհրաժեշտ վարչարարությունն ու ծախսերը հարցեր են առաջացնում և լրացուցիչ բեռ հանդիսանում:

Պետության կողմից պաշտպանության պարտականության ոլորտի միավորները 2023 թվականի համեմատ չեն փոխվել: «ՔՅԿ չափիչի» նախորդ տարվա գեկույցի առաջարկությունները մնում են արդիական, այդ թվում՝ ՅԿ-ների կողմից հանրային շահերը դատարանում ներկայացնելու իրավունքի ընդլայնումը, իրական շահառուների վերաբերյալ տվյալների թարմացման համար գանձվող վճարների չեղարկումը և ՔՅԿ-ների ավելի արդյունավետ պաշտպանության ապահովումը, այդ թվում՝ SLAPP հայցերի դեմ քայլեր ձեռնարկելու միջոցով:

Չափորոշիչ 1. Պետությունը պաշտպանում է ՔՅԿ-ներին և նրանց հետ կապված մարդկանց միջամտությունից և հարձակումներից:

Ըստ օրենքի՝ պետությունն ապահովում է ՅԿ-ների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը<sup>251</sup>: ՅԿ-ն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի ներկայացնելու և պաշտպանելու իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերը դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում<sup>252</sup>: Հիմնադրամը ևս իրավունք ունի դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող<sup>253</sup>: Վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ իր իրավունքները և ազատությունները խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից, ինչպես նաև այն դեպքում, երբ խոչընդոտներ են հարուցվել կամ անհրաժեշտ պայմաններ չեն ապահովվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար<sup>254</sup>: Սա վերաբերում է նաև կազմակերպությունների գրանցման մասին որոշումներին. գրանցման մերժում ստանալու դեպքում հիմնադիրները կարող են երկամսյա ժամկետում բողոքարկել այս որոշումը վարչական դատարան<sup>255</sup>: Վարչական դատարանի որոշումները կարող են բողոքարկվել Վերաքննիչ և այնուհետև՝ Վճռաբեկ դատարանում: ՔՅԿ-ների անդամների և հիմնադիրների համար հասանելի են նաև միավորման ազատության իրավունքի միջազգային իրավական պաշտպանության մեխանիզմները՝ ՄԱԿ-ի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի միջոցով:

ՅԿ-ները կարող են դատարանում հանրային շահերը ներկայացնել շրջակա միջավայրի պահպանության և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերող

<sup>251</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 9:  
<sup>252</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 16:  
<sup>253</sup> ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 3:  
<sup>254</sup> ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 05.12.2013, հոդված 3:.  
<sup>255</sup> ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 05.12.2013, հոդված 72:

հարցերով՝ պայմանով, որ դիմող կազմակերպությունը բավարարի մի շարք պայմանների: Մասնավորապես, բնապահպանական խնդիրների դեպքում հայցը պետք է բխի կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակներից, կազմակերպությունը պետք է մասնակցած լինի տվյալ հարցի հետ կապված հանրային քննարկումներին, կամ ապացուցի, որ նրան նման հնարավորություն չի տրվել, և վերջապես, հայցը ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում ակտիվ գործունեություն ծավալած լինի շրջակա միջավայրի պահպանության ոլորտում<sup>256</sup>: Այս պահանջները խորթին են (օրինակ՝ տվյալ հարցի հետ կապված հանրային քննարկումներին մասնակցելու կամ մասնակցության անհնարինության վերաբերյալ հիմքեր ներկայացնելը) և խոչընդոտում են այս իրավունքի գործնական իրացմանը: Այսպես, մի քանի տարվա պայթարի արդյունքում միայն Վերաքննիչ դատարանի որոշումից հետո բնապահպանական կազմակերպությունները կարողացան հասնել նրան, որ 2022 թվականին իրենց հայցը քննվի դատարանում<sup>257</sup>:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում հայց ներկայացնելու համար ևս անհրաժեշտ է, որ կազմակերպության կանոնադրությամբ համապատասխան նպատակ սահմանված լինի, և հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում կազմակերպությունը գործունեություն ծավալի տվյալ ոլորտում: Բացի այդ, կազմակերպության անդամների պարզ մեծամասնությունը հաշմանդամություն ունեցող անձինք պետք է լինեն<sup>258</sup>:

Ըստ 2023 թվականին հաստատված՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի՝ նախատեսվում է ընդլայնել հանրային նշանակության հարցերով դատարան դիմելու ՀԿ-ների իրավունքը՝ հաշվի առնելով *‘actio popularis’* սկզբունքը (երբ հասարակության ցանկացած անդամ կարող է դատական հայց ներկայացնել հանրային շահերը պաշտպանելու կամ համայնքին հասցված վնասի համար)<sup>259</sup>: 2024 թվականի ընթացքում «ԲՀԿ չափիչ» ծրագրի շրջանակներում իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը քննարկումներ է նախաձեռնել *‘actio popularis’* սկզբունքի իրականացման հետ կապված խնդիրների և կարիքների շուրջ:

Վերջին տարիներին ԲՀԿ-ները և նրանց հետ փոխկապակցված անձինք տարբեր կազմակերպությունների և խմբերի կողմից բազմաթիվ անգամ ենթարկվել են ճնշումների, ատելության խոսքի և հարձակումների: Մասնավորապես, ԼԳԲՏԻԲ+ իրավունքների պաշտպանության, բնապահպանության, վերահսկողական գործունեության (watch-dog) ոլորտներում գործող կազմակերպությունները հաճախ են հանդիպում երրորդ անձանց կողմից սպառնալիքների և ճնշումների, սակայն բավարար պաշտպանություն չեն ստանում իրավապահների կողմից<sup>260</sup>: Հանքարդյունաբերական ընկերությունների կողմից բնապահպան

<sup>256</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 16:

<sup>257</sup> «ԲՀԿ չափիչ 2022 Հայաստան», ԹԻՀԿ, ECNL, 2023, <https://csometer.info/sites/default/files/2023-04/2022%20Armenia%20CSO%20Meter%20Country%20Report%20ARM.pdf>:

<sup>258</sup> ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 05.12.2013, հոդված 216.6:

<sup>259</sup> ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1674-Լ որոշմամբ, 28.09.2023, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=183444>:

<sup>260</sup> Ֆոկուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2024 թ.:

ակտիվիստների դեմ (հիմնականում զրպարտության և վիրավորանքի հիմքով<sup>261</sup>) հարուցված դատական գործերը շարունակվել են, իսկ 2024 թվականին նոր հայցեր են ներկայացվել: Ըստ ԶԳ-ների և միջազգային կազմակերպությունների՝ այս հայցերը նպատակ ունեն լռեցնել և կանխել բնապահպանական բողոքները՝ ակտիվիստների վրա զգալի ֆինանսական ու հոգեբանական ճնշում գործադրելով և մյուսներին հետ պահելով իրավախախտումների դեմ բարձրաձայնելուց<sup>262</sup> (տե՛ս նաև Ոլորտ 5՝ «Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք»): Որպես ԵՄ անդամ՝ ՀՀ կառավարությունը պարտավոր է հետևել 2024 թվականի ապրիլին հրապարակված՝ SLAPP հայցերի կիրառմանը հակազդելու վերաբերյալ ԵՄ հանձնարարականներին<sup>263</sup>:

2024 թվականին ավելացել են բնապահպան ակտիվիստների նկատմամբ հարձակումներն ու ատելության խոսքը սոցիալական ցանցերում, ինչը հատկապես տեսանելի էր Ամուլսարի հանքարդյունաբերական վիճահարույց ծրագրի շուրջ մտահոգություն արտահայտող հայտարարությունից հետո, որը ստորագրել էին 118 ԶԳ-ներ և 57 քաղաքացիներ: Դատական հայցերից զատ, ակտիվիստները լրատվամիջոցներում զրպարտչական արշավների թիրախ դարձան՝ առերեսվելով Հայաստանի տնտեսական աճը խոչընդոտելու ու Ադրբեյջանի հետ կապեր ունենալու մեղադրանքների, ինչպես նաև նրանց նկատմամբ հետաքննություն իրականացնելու կոչերի: Նման հրապարակումներից մեկում մեջբերվել էր ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի խոսքը, ըստ որի «կան հասարակական կազմակերպություններ, որ մենք չենք հասկանում՝ իրենց գործունեությամբ ում ջրաղացին են ջուր ցնում»: Ըստ հրապարակման՝ փոխնախարարը նաև նշել է, որ այդ հարցը կառավարության ուշադրության կենտրոնում է<sup>264</sup>: ԶԳ-ները հայտարարություն են տարածել բնապահպան ակտիվիստների, բնապահպանական կազմակերպությունների, իրավապաշտպանների, ինչպես նաև տուժած համայնքների բնակիչների նկատմամբ ճնշումների վերաբերյալ, որոնք դրսևորվել են ատելության խոսքի, զրպարտչական բնույթի հրապարակումների, կեղծ օգտատերերի հարձակումների, ինչպես նաև պետական պաշտոնյաների ելույթների և հարցազրույցների միջոցով<sup>265</sup>: Ակտիվիստների պաշտպանության համար, սակայն, պետական պաշտոնյաների կամ իրավապահ մարմինների կողմից որևէ գործողություն կամ հայտարարություն չի արվել:

<sup>261</sup> Զրպարտությունն ու վիրավորանքը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, որտեղ սահմանված են դրանց համար փոխհատուցման առավելագույն չափերը՝ մինչև 3 միլիոն ՀՀ դրամի փոխհատուցում վիրավորանքի և 6 միլիոն ՀՀ դրամ՝ զրպարտության համար: Ըստ օրենսգրքի՝ փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը պետք է հաշվի առնի վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունը (տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրք, 05.05.1998, վերջին փոփ 10.09.2024, հոդված 1087.1):

<sup>262</sup> Policy Brief: Suppression of Environmental Activists in Armenia («Քաղաքականության համառոտագիր. Հայաստանում բնապահպան ակտիվիստների ճնշումը»), Araminta, Democracy Development Foundation, սեպտեմբեր 2024 թ., <https://demdev.org/wp-content/uploads/2024/10/Policy-Brief-Suppression-of-Environmental-Activists-in-Armenia.pdf>, ֆոկուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2024 թ.:

<sup>263</sup> Recommendation CM/Rec(2024)2 of the Committee of Ministers to member States on countering the use of strategic lawsuits against public participation (SLAPPs) (Նախարարների կոմիտեի CM/Rec(2024)2 հանձնարարականը անդամ պետություններին՝ հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերի կիրառմանը (SLAPPs) հակազդելու վերաբերյալ), հաստատվել է Նախարարների կոմիտեի կողմից 2024 թ. ապրիլի 5-ին, <https://rm.coe.int/0900001680af2805>

<sup>264</sup> «Միջազգային խմբերը իրենց աջակցությունն են հայտնում զրպարտության և քրեական հետապնդումների ենթարկվող հայ բնապահպաններին և մարդու իրավունքների պաշտպաններին. Coalition for Human Rights in Development», 21.02.2024, Քաղաքացու ծայնը, <https://cvmedia.am/page2-4189--88->:

<sup>265</sup> «ՀՀ-ում բնապահպանական կազմակերպություններին, անհատ ակտիվիստներին, իրավապաշտպաններին ճնշելու, հակաժողովրդավարական գործընթացների և ապաժողովրդավարացման փորձերի մասին», Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 07.02.2024, <https://hcav.am/statement-07-02-2024/>:

Քրեական օրենսգրքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագման, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների կամ այլ անձնական կամ սոցիալական հանգամանքների վրա հիմնված ատելությունը, անհանդուրժողականությունը կամ թշնամանքը սահմանում է որպես մի շարք հանցագործությունների ծանրացնող հանգամանք<sup>266</sup>: Սակայն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հատկանիշները որպես լրացուցիչ պաշտպանության հիմք սահմանված չեն օրենսդրությամբ: 2024 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունը շահագրգիռ ԹՀԿ-ների մասնակցությամբ քննարկումներ իրականացրեց «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագծի վերաբերյալ<sup>267</sup>, որը նպատակ ունի ապահովել խտրականության դեմ պայքարը և ստեղծել խտրականության հարցերով խորհուրդ ցանկացած տեսակի խտրականությունից պաշտպանությունն ապահովելու համար: Նախագիծը ներառում է խտրականության սահմանումը, տեսակները և իրավական ու դատական պաշտպանության կառուցակարգերը, սակայն պաշտպանված հատկանիշների ցանկում թվարկված չեն «սեռական կողմնորոշման», «գենդերային ինքնության», «առողջական վիճակի» և «ընտանեկան կարգավիճակի» հասկացությունները՝ ի հակառակ ԹՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների առաջարկությունների<sup>268</sup>: Այս օրենքի ընդունումը նշանակալից առաջընթաց կլինի խտրականության դեմ պայքարի և մարդկանց խտրականությունից պաշտպանելու ուղղությամբ աշխատող ԹՀԿ-ների իրավական միջավայրի բարելավման առումով: 2024 թվականի նոյեմբերի դրությամբ նախագիծը դեռևս չէր հաստատվել կառավարության կողմից:

ՀՀ սահմանադրությամբ համաչափության և որոշակիության սկզբունքներ են նախատեսված հիմնարար իրավունքների և ազատությունների սահմանափակման համար, ինչպես նաև հնարավորություն է տրվում արտակարգ կամ ռազմական դրության դեպքում ժամանակավորապես կասեցնել կամ սահմանափակել որոշ իրավունքներ ու ազատություններ<sup>269</sup>: 2024 թվականի ընթացքում արտակարգ կամ ռազմական դրություն չի հայտարարվել:

[Չափորոշիչ 2. Ծայրահեղականության, ահաբեկչության, փողերի լվացման և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցները նպատակաուղղված են, համաչափ, ռիսկի վրա հիմնված մոտեցմանը համապատասխան, և հարգում են միավորումների, հավաքների ու արտահայտման վերաբերյալ մարդու իրավունքների ստանդարտները:](#)

ՀՀ օրենսդրությունը հասցեական և համաչափ կարգավորումներ է նախատեսում ահաբեկչության, փողերի լվացման և կոռուպցիայի դեմ պայքարի համար՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցմանը համահունչ կերպով: «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքը<sup>270</sup> հաշվետվություն տրամադրող անձանցից

<sup>266</sup> ՀՀ Քրեական օրենսգրք, 05.05.2021:

<sup>267</sup> «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթ, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/7408/about>:

<sup>268</sup> Հարցազրույցներ և ֆոկլուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ., տե՛ս նաև՝ «Խտրականության դեմ օրենքի նոր նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման», Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 01.08.2024, <https://transparency.am/hy/media/news/article/5146>:

<sup>269</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 76-79:

<sup>270</sup> ՀՀ օրենքը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին», 26.05.2008, վերջին փոփ. 07.02.2024, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=190391>:



(օրինակ, բանկեր, վարկային կազմակերպություններ, նոտարներ, պետոռգիստր) պահանջում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնել՝ ներդնելով ռիսկերի կառավարման ընթացակարգեր, որոնց միջոցով այս կառույցները կբացահայտեն և կգնահատեն հնարավոր կամ առկա ռիսկերը, կապահովեն համարժեք միջոցների ձեռնարկումը և համապատասխան ռիսկերը հայտնաբերելու դեպքում կհաղորդեն լիազոր պետական մարմին: ԶԿ-ներ նշում են, որ բանկային հաշիվ բացելու կամ դոնորներից գումար ստանալու համար բանկերը երբեմն դրամաշնորհային պայմանագրի փաստաթղթերը կամ կազմակերպության դոնորների ցանկն են պահանջել, որը սակայն խոչընդոտ չի հանդիսացել իրենց գործունեության համար<sup>271</sup>:

Բոլոր իրավաբանական անձանց, այդ թվում՝ ոչ առևտրային կազմակերպությունների համար գործում է իրական շահառուների հայտարարագրման պահանջը<sup>272</sup>: Սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու կամ հայտարարագրման հետ կապված կարգի խախտման դեպքում պատժամիջոցները ներառում են նախագգուշացում և 30000-ից մինչև 100000 դրամի չափով տուգանքի նշանակում<sup>273</sup>, իսկ երեք տարի անընդմեջ հայտարարագիր չներկայացնելու դեպքում կազմակերպությունը կարող է հարկադիր լուծարման ենթարկվել<sup>274</sup>: Ինչպես և նախորդ տարիներին, որոշ ԶԿ-ներ նշում են, որ իրենց համար հստակ չէ, թե ինչ տեղեկատվություն է պետք տրամադրել հայտարարագրում, իսկ «իրական շահառու» հասկացությունը շփոթեցնող է: Հարցազրույցներին և ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցած ԶԿ-ների մեծամասնությունը որպես իրական շահառու էին հայտարարագրել գործադիր ղեկավարին (իրավախորհրդատու ընկերությունների հետ խորհրդակցելու հիման վրա), սակայն համարում են, որ սա ձևական պահանջ է, քանի որ գործադիր ղեկավարները, այսպես թե այնպես, ներկայացված են գրանցման փաստաթղթերում<sup>275</sup>: Թեև իրական շահառուների վերաբերյալ առաջին հայտարարագիրը, ինչպես նաև յուրաքանչյուր տարի իրական շահառուների տվյալների հաստատումը անվճար է, սակայն տվյալների (օրինակ՝ անվան, հասցեի կամ անձնագրային տվյալների) փոփոխության գրանցման համար յուրաքանչյուր անգամ անհրաժեշտ է վճարել 10000 դրամ: Սա ԶԿ-ների համար անհամաչափ ծախս է հանդիսանում՝ հատկապես հաշվի առնելով, որ գործադիր ղեկավարի տվյալների փոփոխության դեպքում այդ նույն փոփոխությունները նաև տեղ են գտնում գրանցման փաստաթղթերում՝ 5000 դրամ վճարի դիմաց, այսինքն ԶԿ-ները ստիպված են կրկնակի վճարներ կատարել<sup>276</sup>:

<sup>271</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>272</sup> ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», 03.04.2001, գլուխ 12.1:

<sup>273</sup> Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 06.12.1985, հոդված 169.29:

<sup>274</sup> ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», 03.04.2001, հոդված 60.5:

<sup>275</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>276</sup> ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, հոդված 16:

### Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- ՀՀ ազգային ժողովին՝ օրենսդրական փոփոխություններ իրականացնել՝ ՔՀԿ-ներին հնարավորություն տալով հանրային շահերը ներկայացնել դատարանում՝ իրենց նպատակների շրջանակում, և ապահովել, որ նրանք կարողանան գործնականում օգտվել այս իրավունքից՝ մեղմելով չափազանց բարդ պահանջները և առնչվող վարչարարական ընթացակարգերը:
- Պետությանը՝ համարժեք պաշտպանություն ապահովել ՔՀԿ-ների համար, այդ թվում՝
  - խտրականության դեմ պայքարի մասին օրենքի ընդունման և համապատասխան մարմնի ստեղծման,
  - Եվրոպայի խորհրդի կողմից 2024 թվականի ապրիլին ընդունված հանձնարարականների հիման վրա SLAPP հայցերի դեմ իրավական ու գործնական միջոցառումների իրականացման,
  - Երրորդ անձանց կողմից թիրախավորված ՔՀԿ-ներին աջակցող հրապարակային հայտարարությունների ներկայացման,
  - ողջամիտ ժամկետում ՔՀԿ-ների ու ակտիվիստների դեմ հարձակումների պատշաճ քննության միջոցով:
- ՀՀ արդարադատության նախարարությանը և պետազգիստին՝ ոչ առևտրային կազմակերպություններից իրական շահառուների մասին տեղեկությունների փոփոխության համար վճար չգանձել և տվյալների ինքնաշխատ թարմացման հնարավորություն ստեղծել:

## 3.9 Պետական աջակցություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.1/7

Իրավական դաշտ՝ 4.3/7	Գործնական դաշտ՝ 3.9/7
-------------------------	--------------------------

Պետական ֆինանսավորումը ՔՀԿ-ներին հատկացվում է առանձին նախարարությունների կողմից, հիմնականում մրցութային եղանակով՝ ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի հիման վրա: Որպես կանոն, պետական ֆինանսավորման մեծ մասը տրամադրվում է սոցիալական, կրթական, մշակութային և սպորտային ծրագրերին: Դրամաշնորհային հայտերի ներկայացման համար օգտագործվում է պետական գնումների էլեկտրոնային հարթակը, սակայն ՔՀԿ-ները նշում են, որ այս հարթակը խրթին է և տեխնիկական խնդիրներով լի: 2024 թվականին ՀՀ ֆինանսների նախարարությունը շարունակել է աշխատանքները ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի մշակման ուղղությամբ, որը կներառի նաև պետական գնումների արդիականացված հարթակ: Ի տարբերություն պետական մարմինների՝ ՏԻՄ-երը

ՔՀԿ-ներին սահմանափակ ֆինանսավորում են տրամադրում, հաճախ հայեցողական հիմունքներով և առանց ֆինանսավորված նախաձեռնությունների մոնիտորինգի ու հաշվետվողականության պահանջների:

ՔՀԿ-ներն ազատված են հարկերից՝ անհատույց և անվերադարձ հիմքով ապրանքների մատակարարման, աշխատանքի կատարման և ծառայությունների մատուցման, ինչպես նաև բարեգործական ծրագրերի դեպքում: Ծրագրի բարեգործական կարգավիճակը սահմանվում է կառավարության համապատասխան հանձնաժողովի հատուկ որոշմամբ՝ անցնելով երկարատև ու բարդ գործընթաց: ՔՀԿ-ների ձեռնարկատիրական գործունեության և անհատ նվիրատուների համար հարկային արտոնություններ չկան, իսկ նվիրատու կազմակերպությունների համար առկա արտոնությունները փոքրաթիվ են: 2024 թվականին ՔՀԿ-ները շարունակել են իշխանությունների հետ երկխոսությունը դրամաշնորհների հարկման խնդիրների և բարեգործական գործունեության ու նվիրատվությունների համար հարկային խթանների վերաբերյալ:

«Կամավոր աշխատանքի մասին» օրենքը, որն ուժի մեջ մտավ 2023 թվականի հոկտեմբերին, կարգավորում է կամավորության հասկացությունը և կամավորների իրավունքների պաշտպանության վերաբերյալ դրույթներ է նախատեսում: Սակայն գործնականում ՔՀԿ-ները մի շարք տեխնիկական դժվարությունների են հանդիպել օրենքի կիրարկման, մասնավորապես՝ կամավորների հետ պայմանագրերի կնքման հարցում:

Այս ոլորտի գնահատականը 2024 թվականին չի փոխվել՝ 2023 թվականի համեմատ: Պետական և տեղական բյուջեից ֆինանսավորման թափանցիկությունն ու մրցունակությունը բարելավելու և ՔՀԿ-ների ու նրանց նվիրատուների համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ստեղծելու վերաբերյալ նախորդ տարիների առաջարկությունները նույնն են մնացել: Բացի այդ, առաջարկվում է, որ կառավարությունը ՔՀԿ-ների հետ խորհրդակցելով լուծում տա կամավորության մասին օրենսդրության և դրա կիրարկման հետ կապված խնդիրներին:

[Չափորոշիչ 1. Պետության կողմից ՔՀԿ-ների ֆինանսական և նյութական աջակցության բազմազան ու արդյունավետ մեխանիզմներ կան:](#)

ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաներ և դրամաշնորհներ տրամադրելու վերաբերյալ կարգի համաձայն՝ դրամաշնորհ ստացող կազմակերպությունն ընտրվում է մրցույթի արդյունքում, իսկ սուբսիդիան հատկացվում է պետական մարմնի և կազմակերպության միջև կնքված սուբսիդիայի տրամադրման մասին պայմանագրի հիման վրա<sup>277</sup>: ՔՀԿ-ներին տրամադրվող ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է դրամաշնորհների ձևաչափով՝ մեկ տարվա ժամկետով, դրամաշնորհ տրամադրող մարմնի տարեկան բյուջեի հիման վրա: Որպես կանոն, պետական ֆինանսավորման մեծ մասը տրամադրվում է սոցիալական, կրթական, մշակութային և սպորտային ծրագրերին: Օրինակ, ՔՀԿ-ներին բազմաթիվ սոցիալական ծառայություններ են պատվիրակվում դրամաշնորհային մրցույթի ընթացակարգով: Պնումների պայմանագրերով ՔՀԿ-ներին ծառայություններ պատվիրակելու գործելակերպը հազվադեպ է կիրառվում:

<sup>277</sup> ՀՀ կառավարության թիվ 1937-Ն որոշումը «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին», 24.12.2003, վերջին փոփ. 06.08.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155096>:

ՏԻՄ-երը ևս կարող են ֆինանսավորում հատկացնել ԶՅԿ-ներին՝ բյուջեի համապատասխան տողով: Համայնքապետարանները ամենից հաճախ ֆինանսավորում են հատկացնում սոցիալական և երիտասարդական կազմակերպություններին, շատ դեպքերում կազմակերպությանը կամ ներկայացուցիչներին հատկացվող դրամական աջակցության տեսքով: Համայնքապետարանի կողմից ԶՅԿ-ներին ծառայություններ պատվիրակելու գործելակերպը դեռևս զարգացած չէ, սակայն առանձին դեպքերում ԶՅԿ-ներին հաջողվել է համայնքային բյուջեից համաֆինանսավորում ստանալ իրենց սոցիալական ծրագրերի համար: Օրինակ՝ Մանկական զարգացման հիմնադրամն առաջին անգամ աջակցություն է ստացել Ջերմուկի համայնքապետարանից այս համայնքում գտնվող իրենց մանկական կենտրոնի մանկական հոգեբանի աշխատավարձը հոգալու համար<sup>278</sup>: Տեղական մակարդակով ԶՅԿ-ներին հատկացվող բնաիրային աջակցությունը հիմնականում իրականացվում է համայնքային սեփականություն հանդիսացող շենքում տարածք տրամադրելով<sup>279</sup>:

[Չափորոշիչ 2. ԶՅԿ-ների պետական աջակցությունը կարգավորվում է հստակ և օբյեկտիվ չափանիշներով և հատկացվում է թափանցիկ և մրցակցային ընթացակարգով:](#)

Պետական կառավարման մարմինների կողմից պետական աջակցությունը տրամադրվում է մրցութային հիմքով և կարգավորվում մանրամասն ընթացակարգով և չափորոշիչներով: Տեղական բյուջեներից աջակցությունը հայեցողական հիմքով է հատկացվում՝ առանց համապատասխան հաշվետվողականության:

Իրավաբանական անձանց պետական դրամաշնորհների և սուբսիդիաների հատկացման կարգով կարգավորումներ են նախատեսված դրամաշնորհների հայտարարման գործընթացի և գնահատող հանձնաժողովի գործունեության, այդ թվում՝ շահերի բախման, ընտրության գործընթացի թափանցիկության և ընտրության չափանիշների սահմանման վերաբերյալ, որոնք հիմնված են ԶՅԿ-ների հետ քննարկումների արդյունքների վրա: Կարգով չի պարտադրվում ԶՅԿ ներկայացուցիչներին ներգրավել գնահատող հանձնաժողովում, սակայն դա կարող է արվել դրամաշնորհներ տրամադրող պետական մարմնի հայեցողությամբ: Վերոնշյալ կարգը նաև Էլեկտրոնային համակարգի միջոցով մրցույթներ իրականացնելու, պայմանագրեր կնքելու և հաշվետվություն ներկայացնելու մասին դրույթ է պարունակում<sup>280</sup>: Պետական գնումների Էլեկտրոնային armeps.am համակարգն օգտագործվում է դրամաշնորհային ծրագրերին դիմելու և դրամաշնորհների պայմանագրերի հրապարակման համար: ՀՀ ֆինանսների նախարարությունն իր կայքում ուղեցույցներ է հրապարակել գնումների մասնակիցների, ինչպես նաև դրամաշնորհային մրցույթներ կազմակերպող մարմինների համար<sup>281</sup>: Սակայն հարթակում պայմանագրերը հրապարակվում են մեքենայի համար ոչ ընթեռնելի PDF ձևաչափով, իսկ որոնման զտիչները թույլ չեն տալիս հեշտությամբ գտնել այն ԶՅԿ-ներին, որոնք պետական բյուջեից դրամաշնորհային ֆինանսավորում կամ ծառայությունների պայմանագիր են ունեցել, քանի որ գնումների յուրաքանչյուր ընթացակարգի ներքո ներկայացված են բոլոր ստացող կազմակերպությունները (իսկ դրամաշնորհային մրցույթները տեխնիկապես դիտվում են որպես գնման ընթացակարգի

<sup>278</sup> Ֆոկուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2024 թ.:  
<sup>279</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:  
<sup>280</sup> ՀՀ կառավարության թիվ 1937-Ն որոշումը «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին», 24.12.2003:  
<sup>281</sup> Ուղեցույցներ, ձեռնարկներ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, [https://www.minfin.am/hy/page/uxecuyv\\_dzernark/](https://www.minfin.am/hy/page/uxecuyv_dzernark/):

տեսակ): Սա թույլ չի տալիս դրամաշնորհային պայմանագրերի արդյունավետ մոնիտորինգ իրականացնել:

Ըստ սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի՝ մրցույթի արդյունքները, ընտրող հանձնաժողովի արձանագրությունը և մրցույթին առնչվող այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունները պետք է հրապարակվեն պետական մարմնի պաշտոնական կայքում: Սակայն գերատեսչությունները ոչ միշտ են ժամանակին և ամբողջական տեղեկատվություն տրամադրում: Օրինակ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հրապարակում է դրամաշնորհային ծրագրեր ստացած բոլոր ԶՀ-ների հաշվետվությունները, սակայն նախարարության կայքում դրամաշնորհային մրցույթների արդյունքների վերաբերյալ բաժին չկա, իսկ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հրապարակում է դրամաշնորհային մրցույթների հետ կապված փաստաթղթերը, սակայն ԶՀ-ների ծրագրային հաշվետվությունները բացակայում են<sup>282</sup>:

Պետական դրամաշնորհներով հետաքրքրված բազմաթիվ ԶՀ-ներ գնումների հարթակը համարում են բարդ ու խրթին՝ լի տեխնիկական տերմիններով և պահանջներով, որոնք գործնականում հասու են միայն գնումների մասնագետներին: Առանձին ԶՀ-ներ նշել են, որ տեխնիկական խնդիրների պատճառով իրենց հայտերը չեն դիտարկվել, իսկ այն կազմակերպությունները, որոնք նախորդ տարիների ընթացքում փորձ են ձեռք բերել, այլևս դժվարությունների չեն հանդիպել<sup>283</sup>: ՀՀ ֆինանսների նախարարությունը ներկայումս Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական նոր համակարգ է մշակում, որը ներառելու է պետական գնումների նոր էլեկտրոնային հարթակ<sup>284</sup>: Այս հարթակի ներդրմամբ ակնկալվում է լուծել ընթացիկ տեխնիկական խնդիրները և բարելավել դրամաշնորհների մասին տեղեկատվության թափանցիկությունն ու որոնման հնարավորությունները:

Տեղական մակարդակով ֆինանսավորման մրցակցային մեխանիզմ չկա, և համայնքապետարանների հատկացումները հիմնականում տրամադրվում են հայեցողական հիմունքներով՝ ստացած դիմումների հիման վրա: ԶՀ-ները նշում են գործընթացի թափանցիկության պակասի, ինչպես նաև ֆինանսավորված նախաձեռնությունների մոնիտորինգի և հաշվետվողականության մեխանիզմի բացակայության մասին: Համայնքապետարանի կողմից բնամթերային աջակցությունը, ինչպիսին է, օրինակ, գրասենյակային տարածքի հատկացումը, նույնպես իրականացվում է հայեցողական հիմքով:

### [Չափորոշիչ 3. ԶՀ-ներն օգտվում են բարենպաստ հարկային միջավայրից:](#)

Ընդհանուր առմամբ, հարկային օրենսդրությունը հիմնականում բարենպաստ չէ ԶՀ-ների համար, թեև առկա են որոշ արտոնություններ: Ըստ Հարկային օրենսգրքի՝ ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները, աշխատանքները և

<sup>282</sup> Ըստ առավել խոշոր դրամաշնորհներ տրամադրող նախարարությունների կայքերի ուսումնասիրության արդյունքների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ <https://escs.am/am/category/grantsprograms>, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ <https://www.misa.am/reports/1274>, ՀՀ առողջապահության նախարարություն՝ <https://www.moh.am/#1/990>:

<sup>283</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

<sup>284</sup> ԿՖԿՏՀ բիզնես գործընթացների նկարագրություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, [https://minfin.am/hy/page/kfkth\\_nerdman\\_hashvetvutyunner/](https://minfin.am/hy/page/kfkth_nerdman_hashvetvutyunner/):

ծառայությունները շահութահարկով հարկման ենթակա չեն<sup>285</sup>: Միևնույն ժամանակ, բնաիրային նվիրատվությունները հարկվում են ԱԱՀ-ով, ընդ որում հարկման բազան կազմում է նվիրաբերված ակտիվների արժեքի 80%-ը<sup>286</sup>: ԱԱՀ-ից ազատվում են հասարակական, բարեգործական և կրոնական կազմակերպությունների կողմից ապրանքների անհատույց մատակարարումը, աշխատանքների անհատույց կատարումը և (կամ) ծառայությունների անհատույց մատուցումը: Սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը ևս ազատվում են ԱԱՀ-ից, եթե դրանք իրականացվում են համապատասխան միջկառավարական համաձայնագրերի շրջանակներում, ինչպես նաև այն դեպքում, եթե այդ ծրագրերի վերաբերյալ կառավարության և/կամ համապատասխան հանձնաժողովի կողմից համապատասխան որոշում է կայացվել:

ԶՀԿ-ներն իրենց աշխատակիցների համար եկամտահարկը վճարում են նույն չափով, ինչ մասնավոր ընկերությունները: ԶՀԿ-ների տնտեսական գործունեության խրախուսման հարկային մեխանիզմներ չկան, իսկ ուղղակի ձեռնարկատիրական գործունեության դեպքում ԶՀԿ-ները, ի տարբերություն փոքր ընկերությունների, չեն կարող օգտվել հարկման հատուկ համակարգերից (տե՛ս նաև Ոլորտ 2՝ «Հավասար վերաբերմունք»): Ոչ առևտրային կազմակերպությունները իրենց ապրանքների և ծառայությունների համար պետք է ԱԱՀ գանձեն, եթե գործունեության բոլոր տեսակներից իրացման տարեկան շրջանառությունը գերազանցի 115 միլիոն դրամը<sup>287</sup>: 2023 թվականից սկսած ԶՀԿ-ները երկխոսություն սկսեցին կառավարության հետ՝ դրամաշնորհները ԱԱՀ-ով հարկման ենթակա եկամուտ համարելու հարցի շուրջ իրենց մտահոգությունը արտահայտելու և հնարավոր լուծումներ գտնելու համար, սակայն հանդիպումների ընթացքում կառավարության կողմից առաջարկված լուծումները դեռևս չեն հասցեագրել հնարավոր ռիսկերը<sup>288</sup>:

Ըստ «Բարեգործության մասին» օրենքի՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնությունները բարեգործական որակված ծրագրերին տրամադրվում են օրենքով սահմանված կարգով<sup>289</sup>: ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվում են նախագծերը բարեգործական որակելու կարգը, ինչպես նաև հայտ ներկայացնելու, որոշումներ կայացնելու, բարեգործական ծրագրերի նկատմամբ վերահսկողություն և բարեգործական որակավորումը վերանայելու կարգերը<sup>290</sup>: Բարեգործական կարգավիճակը տրամադրվում է կոնկրետ ծրագրի համար դրա ողջ տևողության ընթացքում, բայց կարող է վերանայվել, եթե ծրագրի իրականացման ընթացքում խնդիրներ լինեն, օրինակ, ներկայացված փաստաթղթերում հայտնաբերվեն կեղծ տեղեկություններ կամ օրենսդրության պահանջների խախտումներ<sup>291</sup>:

<sup>285</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 108:

<sup>286</sup> Նույն տեղում, հոդված 62:

<sup>287</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 59:

<sup>288</sup> «Դրամաշնորհային ծրագրերը որպես տնտեսական գործունեություն դիտարկելը վտանգում է ԶՀԿ-ների ֆինանսավորման մատչելիության իրավունքը», Թրանսպարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն, 13.12.2023, <https://transparency.am/hy/media/news/article/5031>:

<sup>289</sup> ՀՀ օրենքը «Բարեգործության մասին», 08.10.2002, վերջին փոփ. 07.02.2024, հոդված 16, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190380>:

<sup>290</sup> ՀՀ կառավարության թիվ 66-Ն որոշումը «Բարեգործական ծրագրերի մասին», 16.01.2003, վերջին փոփ. 31.01.2019, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128100>:

<sup>291</sup> Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգը, Հավելված N 1 ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի թիվ 66-Ն որոշման, հոդված 28:

Եթե ծրագրին տրվել է բարեգործական կարգավիճակ, ապա կազմակերպությունը պարտավոր է լիազոր մարմնին տարեկան հաշվետվություն տրամադրել իր գործունեության մասին<sup>292</sup>:

Գործնականում ԲՀԿ-ների ստացած նվիրատվությունները շահութահարկով չեն հարկվում, ինչպես և նախատեսված է օրենքով: Ձեռնարկատիրական գործունեության համար ԱԱՀ-ն հարկվում է այն դեպքում, եթե տարեկան եկամուտը գերազանցում է օրենքով սահմանված շեմը: Բարեգործական ծրագրի կարգավիճակ ստանալու և հարկերից ազատվելու ընթացակարգը բավականին բարդ է և ժամանակատար, ինչը հատկապես խնդրահարույց է արագ արձագանքման ծրագրերի դեպքում: Համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ՝ ԲՀԿ-ները երկխոսություն են ծավալել կառավարության և խորհրդարանի հետ՝ վերանայելու բարեգործության վերաբերյալ գործող օրենսդրությունը, որպեսզի այն ավելի նպաստավոր դառնա բարեգործական գործունեության համար և խթանի բարեգործությունը<sup>293</sup>: Մասնավորապես, «ՀԿ կենտրոն» ԲՀԶ ՀԿ-ի կողմից մշակված քաղաքականության փաստաթղթում առաջարկվում է հարկային արտոնություններ սահմանել անհատ նվիրատուների համար, վերանայել առևտրային կազմակերպությունների հարկման ենթակա համախառն եկամուտից նվազեցումների չափը, ներդնել հարկի 1%-ի նվիրատվության մեխանիզմներ և ԱԱՀ-ով հարկումից ազատել բնաիրային նվիրատվությունները, ինչպես նաև բարեգործական նպատակներով բջջային տեքստային հաղորդագրությունները և սոցիալական ցանցերում գովազդային ծառայությունները<sup>294</sup>:

ԲՀԿ-ների կողմից քառուղիանդինգի հարթակների օգտագործման աճող միտում կա: Սակայն հարկային օրենսդրությունը լրացուցիչ խնդիրներ է ստեղծում քառուղիանդինգի հարթակներ տրամադրող միջնորդ կազմակերպությունների համար: Մասնավորապես, այս կազմակերպությունները պետք է ԱԱՀ վճարեն մուտք արված յուրաքանչյուր նվիրատվության համար, ինչը նվազեցնում է շահառու ԲՀԿ-ների համար նախատեսված միջոցները: Որպես լուծում՝ նրանք կազմակերպում են նվիրատվությունների ուղիղ փոխանցում շահառու ԲՀԿ-ներին (տարանցիկ բանկային հաշիվների միջոցով), որպեսզի գումարն ամբողջությամբ հասնի շահառուին<sup>295</sup>:

#### [Չափորոշիչ 4. ԲՀԿ-ներին նվիրատվությունների հատկազման դեպքում ընկերությունները և անհատներն օգտվում են հարկային արտոնություններից:](#)

Նվիրատվությունների համար նախատեսված հարկային արտոնությունները բավարար չեն խոշոր և հաճախակի նվիրատվություններ խթանելու համար: Նվիրատու

<sup>292</sup> Բարեգործական ծրագրերի որակման և գրանցման կարգի համաձայն՝ որոշումներ ընդունող և համապատասխան այլ գործառնություններ իրականացնող լիազոր մարմինը փոխվարչապետի գրասենյակն է, որը որոշումները կայացնում է բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի առաջարկության հիման վրա: Տե՛ս ՀՀ վարչապետի օգոստոսի 2018 թվականի օգոստոսի 21-ի թիվ 1111-Ա որոշումը «Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կանոնադրությունն ու կազմը հաստատելու և ՀՀ վարչապետի 2001 թվականի մարտի 14-ի թիվ 205 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», 21.08.2018, վերջին փոփ. 20.01.2022, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159652>:

<sup>293</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ., «Dialogue4Progress» «Բարեգործական ոլորտի իրավական կարգավորման մեխանիզմներն ու կարիքները. Ինչու՞ կարգավորել բարեգործական ոլորտը» խորագրով պանելային քննարկում», ՀԿ Կենտրոն, 18.09.2024, <https://ngoc.am/dialogue4progress-2/>:

<sup>294</sup> «Հայաստանում բարեգործության ոլորտի բարեփոխումների քաղաքականության փաստաթուղթ. Եզրակացություններ և առաջարկներ», ՀԿ Կենտրոն, <https://ngoc.am/wp-content/uploads/2024/10/12.07-Բարեգործության-ոլորտի-քաղաքականության-փաստաթուղթ.pdf/>:

<sup>295</sup> Հարցազրույց, օգոստոս 2024 թ.:

կազմակերպությունների համար հարկային արտոնությունը հետևյալն է՝ շահութահարկ վճարողների հարկման բազայից նվազեցվում է ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված ակտիվների, դրանց համար կատարված աշխատանքների և (կամ) դրանց մատուցված ծառայությունների արժեքը, բայց ոչ ավելի, քան հարկային տարվա համախառն եկամտի 0,25%-ը<sup>296</sup>: Ինչպես արդեն նշվեց, ընկերությունների բնաիրային նվիրատվությունները հարկվում են ԱԱՀ-ով (եթե ԱԱՀ-ից ազատման մասին կառավարության հատուկ որոշում չկա), ընդ որում հարկի հաշվարկման բազան կազմում է նվիրաբերված ակտիվների արժեքի 80%-ը<sup>297</sup>: Գործնականում մի շարք ընկերություններ գումարներ են հատկացնում ԶՀԿ-ներին սոցիալական, կրթական, առողջապահական և բնապահպանական նախաձեռնությունների համար, սակայն տևական և բարդ գործընթացներից խուսափելու համար նախընտրում են չօգտվել հարկի նվազեցման հնարավորությունից<sup>298</sup>:

#### Չափորոշիչ 5. Օրենսդրությունն ու քաղաքականությունը խթանում են կամավորությունը և խթաններ տրամադրում դրա զարգացման համար:

«Կամավոր աշխատանքի մասին» օրենքը, որն ուժի մեջ մտավ 2023 թվականի հոկտեմբերին, սահմանում է կամավորության ու կամավորի կարգավիճակի իրավական հիմքերը, դատարանում համապատասխան իրավունքների պաշտպանությունը, կամավոր աշխատանքից բխող լրացուցիչ ծախսերի փոխհատուցման իրավունքը, կամավորների առողջության և անվտանգության երաշխիքները և կամավորի իրավունքների պաշտպանությանն առնչվող այլ դրույթներ: ԶՀԿ ձեռնարկատիրական գործունեության մեջ կամավորներին ներգրավելու արգելք չկա: Ըստ օրենքի՝ կամավոր է համարվում այն անձը, որը կազմակերպության հետ կամավոր աշխատանքի պայմանագիր է կնքել: Առանց պայմանագրի կամավոր աշխատանքում ներգրավվելու դեպքում տվյալ աշխատանքը համարվում է անօրինական, և կազմակերպությունը կարող է ենթարկվել տուգանքի: Միևնույն ժամանակ, օրենքում սահմանված է «ակցիայի»՝ մեկանգամյա կամ մշտական բնույթ չկրող միջոցառման հասկացությունը, և նշված է, որ կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելը պարտադիր չէ ակցիային մասնակցելու դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ կամավոր աշխատանքը կատարվում է ոչ կազմակերպության միջոցով<sup>299</sup>:

Գործնականում ԶՀԿ-ները հաճախ են կամավորների ներգրավում իրենց աշխատանքում, և կամավորության գաղափարը աստիճանաբար ավելի ճանաչելի է դառնում, հատկապես երիտասարդների շրջանում: Կամավորական փորձը հաճախ ճանաչվում է գործատուների և համալսարանների կողմից: Ըստ օրենքի՝ կամավորներն իրավունք ունեն կազմակերպությունից ստանալ կատարած կամավոր աշխատանքի վերաբերյալ տեղեկանք, որը կարող է հետագայում օգնել նրանց աշխատանքի կամ համալսարան ընդունվելիս: Ֆոկուս խմբային քննարկումների մասնակցից որոշ ԶՀԿ-ներ նշում են, որ օրենքի ընդունումը խթանել է կամավորների ներհոսքը և հնարավորություն է տվել փոխհատուցում տրամադրել նրանց առանց հավելյալ հարկման: Պայմանագրի առկայությունը նպաստում է կամավորների ավելի

<sup>296</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 123:

<sup>297</sup> Նույն տեղում, հոդված 62:

<sup>298</sup> Ֆոկուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2024 թ., Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնավոր ոլորտի կողմից ֆինանսավորման հնարավորությունների գնահատում, «ՍԻՎԻՏՏԱ ԷՅԷՄ» ՓԲԸ, 2023, [https://www.counterpart.org/wp-content/uploads/2024/02/REPORT\\_Private-sector-funding-CSO.pdf](https://www.counterpart.org/wp-content/uploads/2024/02/REPORT_Private-sector-funding-CSO.pdf):

<sup>299</sup> ՀՀ օրենքը «Կամավոր աշխատանքի մասին», 14.06.2023, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180260>:



պարտաճանաչ մոտեցմանը պայմանագրային դրույթներին հետևելու և աշխատանքային ժամերը պահպանելու հարցում: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ները մի շարք դժվարություններ են նշում, որոնց առնչվել են նոր օրենքի կիրարկման ժամանակ: Նախ, վարչարարության տեսանկյունից դժվարություն է ստեղծում պայմանագիր կնքելու պահանջը՝ անկախ կամավոր աշխատանքի տևողությունից: Բացի այն, որ յուրաքանչյուր կամավորի հետ պայմանագիր կնքելու անհրաժեշտություն է առաջանում, որը վարչարարական բեռ է դառնում հարյուրավոր կամավորներ կառավարող կազմակերպությունների համար, օրենքը պահանջում է նաև նշել պայմանագրի կոնկրետ տևողությունը, ինչը հաճախ անհնար է կամավորական աշխատանքի ճկուն բնույթի համատեքստում: Ավելին, օրենքը պահանջում է պայմանագրում նշել հանրային ծառայությունների համարանիշը, ինչը հնարավոր չէ դրսից եկած կամավորների դեպքում: Կամավորի՝ ծախսերի դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքը թյուրմբռնում է առաջացնում ՔՀԿ-ների և պոտենցիալ կամավորների միջև, որոնք երբեմն ակնկալում են փոխհատուցում ստանալ իրենց աշխատանքային ժամանակի դիմաց: Կան նաև ՔՀԿ-ներ (հատկապես փոքր համայնքային կազմակերպություններ, որոնք չունեն հաշվապահ կամ իրավաբան), որոնք դժվարանում են համապատասխան փաստաթղթերի պատրաստման հարցում<sup>300</sup>: Այսպիսով, անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ ուղեցույց տրամադրել և օրենսդրական կարգավորումները համապատասխանեցնել առկա կարիքներին, որպեսզի նոր օրենքը ոչ թե խոչընդոտի, այլ խթանի կամավորական գործունեությունը:

**Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.**

- ՀՀ կառավարությանը՝ ընդլայնել ՔՀԿ-ներին տրամադրվող ֆինանսավորման շրջանակը, մասնավորապես՝ ավելացնել պետական ֆինանսավորում տրամադրող պետական մարմինների քանակը, դրամաշնորհների ֆինանսավորման և ծառայությունների պատվիրակման ծավալներն ու գործելակերպը, ապահովել ֆինանսավորման թափանցիկ, մրցակցային և հաշվետու հատկացում ինչպես պետական, այնպես էլ տեղական մակարդակներում՝ այդ թվում արդիականացնելով պետական դրամաշնորհների տրամադրման էլեկտրոնային հարթակը այն առավել սահուն ու արդյունավետ օգտագործելու համար, ընդունելով տեղական բյուջեներից թափանցիկ և մրցակցային հատկացումներ պարտադրող կանոնակարգեր, ինչպես նաև բարելավել համապատասխան պետական ծառայողների՝ դրամաշնորհների կառավարման և մշտադիտարկման կարողությունները:
- ՀՀ կառավարությանը (մասնավորապես՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը) և Ազգային ժողովին՝ ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ստեղծել, որը կօգնի բարելավել տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ անհատների և տնտեսվարող սուբյեկտների նվիրատվություններից և ուղղակի ձեռնարկատիրական գործունեությունից ֆինանսավորում և բնաիրային աջակցություն հայթայթելու հնարավորությունները, մասնավորապես՝
  - ոլորտինացնել բարեգործական գործունեությունը հարկերից ազատելու ընթացակարգերը՝ հնարավորություն ընձեռնելով ժամանակին և արդյունավետ գործարքներ կատարել բարեգործական նպատակների համար,

<sup>300</sup> Հարցազրույցներ և ֆոկլուս խմբային քննարկումներ, տեղեկատվության ճշտում կամավորական կազմակերպությունների հետ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

- տնտեսական գործունեությամբ զբաղվող ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային ռեժիմ ապահովել՝ խրախուսելու ինքնաֆինանսավորման հասնելու նրանց ջանքերը,
  - հաշվի առնել միջազգային առաջատար փորձը, որը կօգնի խթանել ՔՀԿ-ների գործունեությունը ավելի բարենպաստ հարկային ընթացակարգերի միջոցով,
  - ավելի զգալի հարկային արտոնություններ տրամադրել անհատների և ընկերությունների նվիրատվությունների համար<sup>301</sup> և ԱԱՀ-ից ազատել ՔՀԿ-ներին տրամադրվող բնաիրային նվիրատվությունները:
- ՀՀ կառավարությանը և Ազգային ժողովին՝ ՔՀԿ-ների հետ խորհրդակցելով՝ հասցեագրել կամավորության մասին օրենսդրության խնդիրները և կամավորների հետ կապված փաստաթղթերի մատչելի ուղեցույցներ/նմուշներ տրամադրել:

### 3.10 Պետություն-ՔՀԿ համագործակցություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.0 / 7

Իրավական դաշտ՝ 4.3 / 7	Գործնական դաշտ՝ 3.6 / 7
---------------------------	----------------------------

Պետություն-ՔՀԿ համագործակցության կամ ՔՀԿ-ների զարգացման վերաբերյալ առանձին քաղաքականություն կամ ռազմավարություն չկա: Պետության և ՔՀԿ-ների միջև համագործակցությունը կարգավորվում է քաղաքականության մշակման գործընթացում մասնակցության վերաբերյալ օրենսդրությամբ և տարբեր խորհրդակցական մարմինների ու համատեղ խմբերի ստեղծման ու գործունեության մասին կառավարության որոշումներով: Բացի այդ, ՔՀԿ-ների հետ գործակցության և նրանց մասնակցության կարևորությունն արտացոլված է տարբեր ազգային ծրագրերում և ռազմավարություններում:

ՀՀ Սահմանադրությամբ որպես կառավարության խորհրդատվական մարմին նախատեսված Հանրային խորհուրդը վերջին տարիներին ակտիվ չէ: Տարբեր գերատեսչություններին կից հասարակական խորհուրդները և այլ խորհրդակցական մարմինները ակտիվության ու արդյունավետության տարբեր մակարդակ ունեն: 2024 թվականին նախարարներին կից հասարակական խորհուրդների գործունեության որոշակի ակտիվացում է նկատվել, սակայն նախարարությունների մեծ մասը խորհրդի նիստեր դեռևս չեն գումարել, իսկ բովանդակալից երկխոսության և որոշումների կայացման վրա իրական ազդեցության հետ կապված մարտահրավերները նույնն են մնացել: Համատեղ աշխատանքային խմբերն ու խորհուրդները,

<sup>301</sup> Օրինակ՝ Լեհաստանում, Բուլղարիայում և Չեխիայում ընկերությունների նվիրատվությունները նվազեցվում են հարկման բազայի մինչև 10%-ի չափով. տե՛ս՝ ‘Tax Benefits Stimulating Philanthropy: Comparative Research’ («Բարեգործությունը խթանող հարկային արտոնություններ. համեմատական հետազոտություն»), մայիս 2021 թ., ECNL, <https://ecnl.org/sites/default/files/2021-07/Final%20ECNL%20Tax%20benefits%20stimulating%20philanthropy%20July.pdf>:

ինչպես նաև փակ հաստատություններում հանրային վերահսկողությամբ զբաղվող մոնիտորինգային խմբերը թույլ են տալիս ԲՀԿ-ների ավելի շոշափելի ներգրավվածություն ունենալ քաղաքականության իրականացման և մոնիտորինգի գործում:

Պետություն-ԲՀԿ համագործակցության ոլորտի ընդհանուր գնահատականը մնացել է նույնը, ինչ 2023 թվականին էր: ԲՀԿ-ների համար բարենպաստ միջավայրի ապահովման հետ կապված խնդիրները հասցեագրելու և խորհրդատվական մարմինների ու աշխատանքային խմբերի ձևաչափի ներուժը լիարժեք օգտագործելու վերաբերյալ նախորդ զեկույցի առաջարկությունները վերահաստատվել են:

Չափորոշիչ 1. Պետական քաղաքականությունը նպաստում է ԲՀԿ-ների զարգացմանը և նրանց հետ համագործակցությանը:

Հայաստանում պետության և ԲՀԿ-ների միջև համագործակցությունը ամրագրված չէ որևէ քաղաքականությամբ կամ ռազմավարությամբ, չկա նաև ԲՀԿ-ների զարգացման վերաբերյալ որևէ պետական ռազմավարություն, որը կնպաստեր ԲՀԿ հատվածի զարգացմանն ուղղված առավել արդյունավետ գործընկերությանը և համատեղ ջանքերին: Պետության և ԲՀԿ-ների միջև համագործակցության շրջանակը ուրվագծված է ԲՀԿ-ների մասնակցության համար հնարավորություններ սահմանող տարբեր իրավական ակտերի և ռազմավարությունների միջոցով: 2023 թվականի օգոստոսին ընդունված՝ Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության 2023-2025 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը նախատեսում են հանրային մասնակցային կառավարման մշտադիտարկման ու ընթացակարգերի սպասարկման ինստիտուցիոնալ մեխանիզմի ձևավորում և մասնակցային կառավարման թվային ու անցանց գործիքների բարելավում, ինչպես նաև թիրախային ցուցանիշներ սահմանում բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկվածության և նախագծերի վերաբերյալ դիտարկումների ներառման վերաբերյալ<sup>302</sup>:

ԲՀԿ-ների հետ գործակցությանը վերաբերող դրույթներ կան Հակակոռուպցիոն ռազմավարության, Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարության, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության, ինչպես նաև բազմաշահառու հանձնաժողովների և համատեղ աշխատանքային խմբերի հիմնադրումը և գործունեությունը կարգավորող իրավական ակտերում: Այս փաստաթղթերը մշակվել են ԲՀԿ-ների մասնակցությամբ և իրականացման ու մշտադիտարկման արդյունավետության տարբեր մակարդակներ ունեն: 2024 թվականին կառավարությունը ԲՀԿ-ների հետ քննարկել է ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարության և գործողությունների ծրագրի<sup>303</sup> և Երիտասարդական քաղաքականության ու հարակից օրենքների<sup>304</sup> նախագծերը, որոնք ԲՀԿ-ների հետ համատեղ մի շարք գործողություններ են նախատեսում:

<sup>302</sup> ՀՀ կառավարության N 1367-Լ որոշումը «ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի N 691-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», 11.08.2023, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=181429>:

<sup>303</sup> «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/6821/about>:

<sup>304</sup> «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծեր, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/7351>:

Չափորոշիչ 2. Պետությունը ԲՀԿ-ների հետ համագործակցությանն աջակցող հատուկ մեխանիզմներ ունի:

ՀՀ Սահմանադրությամբ առանձին դրույթ է նախատեսված Հանրային խորհրդի վերաբերյալ՝ որպես կառավարության խորհրդակցական մարմին<sup>305</sup>: Այս մարմնի գործառույթներն են՝ քաղաքականության մշակման և իրականացման գործում հասարակության տարբեր շերտերի շահերը ներկայացնելը, պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությանը նպաստելը, հանրային նշանակություն ունեցող հարցերի, այդ թվում՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի, պետական ծրագրերի, ռազմավարությունների, հայեցակարգերի և դրանց նախագծերի վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելը<sup>306</sup>: «Հանրային խորհրդի մասին» օրենքը սահմանում է խորհրդի անդամակցության և գործունեության հիմնական սկզբունքները: Հանրային խորհրդի նախագահի թեկնածությունը առաջարկվում է վարչապետի կողմից և հաստատվում է կառավարության նիստում<sup>307</sup>: 2021 թվականի հունիսին Հանրային խորհրդի նախագահը հրաժարական տվեց՝ մասնակցելու արտահերթ խորհրդարանական ընտրություններին<sup>308</sup>: Հետագայում նոր նախագահ չի նշանակվել, և Հանրային խորհուրդը որևէ գործունեություն չի իրականացրել:

ԲԿԳ 2022-2024 թվականների գործողությունների ծրագրով կառավարությունը նախատեսել է վարչապետի աշխատակազմում ստեղծել հատուկ ինստիտուցիոնալ ստորաբաժանում՝ մասնակցային կառավարման գործընթացներին նպաստելու նպատակով<sup>309</sup>: Սակայն 2024 թվականի նոյեմբերի դրությամբ ստորաբաժանումը դեռ չէր գործում:

Նախարարությունների խնդիրների և գործառույթների իրականացմանը քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովելու նպատակով 2016 թվականին ստեղծվեցին նախարարներին կից հասարակական խորհուրդներ<sup>310</sup>: Կառավարության որոշման հիման վրա հասարակական խորհուրդներին վերաբերող դրույթը 2018 թվականին նորից ներառվեց պետական կառավարման համակարգի մարմինների կանոնադրության օրինակելի ձևի մեջ<sup>311</sup>: Ըստ նախարարությունների կողմից ընդունված աշխատակարգերի, որտեղ սահմանված են հասարակական խորհրդի անդամների ընտրության, հանդիպումների պարբերականության և գործունեության թափանցիկության սկզբունքները՝ խորհուրդները պետք է կազմավորվեն թափանցիկ ձևով և նիստեր գումարեն առնվազն եռամսյակը մեկ անգամ: Գործնականում, ըստ նախարարությունների պաշտոնական կայքերում հրապարակված տեղեկատվության, 2024 թվականին (նոյեմբեր ամսվա դրությամբ) տասներկու նախարարություններից միայն երեքում

<sup>305</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 161:

<sup>306</sup> ՀՀ օրենքը «Հանրային խորհրդի մասին», 07.03.2018, վերջին փոփ. 11.02.2021, հոդված 2, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=150514>:

<sup>307</sup> Նույն տեղում, հոդված 5:

<sup>308</sup> «Ստյոպա Սաֆարյանը Հանրային խորհրդի նախագահի պաշտոնից ազատման դիմում է ներկայացրել. նա կմասնակցի ընտրություններին», Armtimes.com, 25.05.2021, <https://www.armtimes.com/hy/article/214665>:

<sup>309</sup> ՀՀ կառավարության N 1568-Լ որոշումը ««Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», 06.10.2022, փոփ. 09.11.2023, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185253>:

<sup>310</sup> ՀՀ կառավարության թիվ 337-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 31.03.2016:

<sup>311</sup> ՀՀ կառավարության թիվ 1552-Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի թիվ 624-Լ որոշման մեջ լրացում կատարելու մասին», 27.12.2018, <https://www.e-gov.am/gov-decrees/item/31320/>:

են գումարվել հանրային խորհուրդների նիստեր՝ յուրաքանչյուրում երկու կամ երեք նիստ<sup>312</sup>։ Սա մի փոքր բարելավում է 2023 թվականի համեմատ, սակայն դեռևս հեռու է համապատասխան կանոնակարգերի լիարժեք կատարումից։ Ըստ ՔՀԿ-ների՝ անգամ եթե նախարարությունները նիստեր են հրավիրում և ուշադիր լսում նրանց կարծիքները, ՔՀԿ-ի ներդրման ազդեցությունը հարցական է, քանի որ չկան ՔՀԿ-ների առաջարկների ներառումը պարտադրող մեխանիզմներ<sup>313</sup>։ Մարզային ՔՀԿ-ների դեպքում հասարակական խորհուրդներին մասնակցության զգալի խոչընդոտ է այն, որ նիստերն անցկացվում են երևանում՝ առանց առցանց միանալու հնարավորության և ճանապարհածախսի փոխհատուցման։

Ի տարբերություն նախարարությունների հասարակական խորհուրդների՝ տեսչական մարմինների կառավարման խորհուրդներն ունեն որոշումներ կայացնելու ավելի շոշափելի գործառույթներ, ուստի համագործակցության և ազդեցության ավելի բարձր մակարդակ են ցուցաբերում<sup>314</sup>։ Վարչապետի որոշումների հիման վրա, ինչպես նաև նախարարությունների և այլ պետական գերատեսչությունների կողմից վերջին տարիներին ձևավորվել են նաև այլ ոլորտային խորհուրդներ և հանձնաժողովներ, այդ թվում՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը, Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը, Կանանց հարցերով խորհուրդը, Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհուրդը, Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովը և այլն։ Պետական եկամուտների կոմիտեի հասարակական խորհրդում ներգրավված են ՔՀԿ-ներ և տնտեսվարող սուբյեկտներ<sup>315</sup>։ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ևս մի քանի խորհրդատվական մարմին է հիմնել։ Բացի դրանից, կան նաև տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին կից խորհրդակցական մարմիններ։ Այս մարմինների գործառնությունն ու արդյունավետությունը տարբեր են՝ կախված համակարգող կառույցից և թիրախ ոլորտից։ Օրինակ՝ միասնական սոցիալական ծառայությունների տեղական բաժինների և ՔՀԿ-ների համատեղ հանձնաժողովների դեպքում հաջող համագործակցության և արդյունավետ հանդիպումների փորձ է արձանագրվել<sup>316</sup>։ Խորհրդատվական մարմիններից շատերը, սակայն, չունեն անդամների ընտրության և գործունեության վերաբերյալ թափանցիկ սկզբունքներ, իսկ համապատասխան վարչական մարմինները սովորաբար հանդիպումների և կայացած որոշումների մասին որևէ տեղեկատվություն չեն հրապարակում, ինչը դժվարացնում է իրենց գործունեության մշտադիտարկումը։

Մասնակցային գործելակերպի հանձնառությունն ապահովելու նպատակով բազմաշահառու աշխատանքային խմբեր են ստեղծվել միջազգային տարբեր նախաձեռնությունների, օրինակ՝ ԲԿԳ<sup>317</sup> և «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության»<sup>318</sup> շրջանակում։

<sup>312</sup> Աղբյուր՝ ՀՀ կառավարության կայքում թվարկված 12 նախարարությունների պաշտոնական կայքեր, <https://www.gov.am/am/structure/>։

<sup>313</sup> Հարցազրույցներ և ֆոկլուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ., Հայաստանի Հանրապետության կողմից Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) նախաձեռնության շրջանակներում ստանձնած «Պետության ռազմավարական հաղորդակցության ճարտարապետության ձևավորում» հանձնառության վերլուծություն, Հանրային ասամբլեա, Երևան 2024 թ. (չհրապարակված)։

<sup>314</sup> Նույն տեղում։

<sup>315</sup> Համագործակցություն գործարար միջավայրի հետ, Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհուրդ, ՀՀ Պետական եկամուտների կոմիտե, <https://www.src.am/am/getMenuContents/2018>։

<sup>316</sup> Ֆոկլուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2024 թ.։

<sup>317</sup> Խմբի անդամներ, Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, <https://ogp.gov.am/hy/խմբի-մասին>։

<sup>318</sup> ԲԾԽ-ի կազմ, Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն, <https://www.eiti.am/hy/ԲԾԽ-ի-կազմ/>։

Ըստ պահանջի՝ համատեղ աշխատանքային խմբեր են ձևավորվում առանձին իրավական նախագծերի, ռազմավարությունների մշակման և իրականացման շուրջ: Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանության 2023-2025 թվականների ռազմավարության համակարգող խորհուրդը երկար դադարից հետո մի քանի անգամ հանդիպել է 2024 թվականին<sup>319</sup>:

Պետական մարմինների կողմից ձևավորված դիտորդական խմբերը հանրային վերահսկողություն են իրականացնում փակ հաստատություններում: Այդ խմբերից են քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդական խումբը<sup>320</sup> և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժման և ինամբի ծառայություններ մատուցող հաստատությունների դիտորդական խումբը<sup>321</sup>: Այս խմբերը մարտահրավերների են բախվում կանոնավոր գործունեության համար միջոցներ ապահովելու հարցում: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հրամանով ստեղծված<sup>322</sup> երեխաների, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց ինամբի ծառայություններ մատուցող հաստատությունները վերահսկող դիտորդական խումբը 2024 թվականին դադարեցրել է իր գործունեությունը՝ նախարարության կողմից նշված հրամանը ուժը կորցրած համարելու հիմքով: Այս որոշումը հիմնավորվել է նշված որոշման հիմքում ընկած օրենսդրական կարգավորման բացակայությամբ<sup>323</sup>: 2024 թվականի հոկտեմբերին Ազգային ժողովի կողմից ընդունված «Սոցիալական աջակցության մասին» փոփոխված օրենքը լուծում է օրենսդրական այս բացը՝ դրույթ ներառելով ինամբ տրամադրող հաստատություններում ՔՀԿ-ների կողմից հանրային վերահսկողության վերաբերյալ<sup>324</sup>: Այնուամենայնիվ, մոնիտորինգի խմբում ներգրավված ՔՀԿ-ները համարում են, որ խմբի լիազորությունների դադարեցման պատճառը 2023 թվականին դիտորդական խմբի հրապարակած քննադատական գեկույցներն էին երեխաների աջակցության կենտրոնում մարդու իրավունքների կոպիտ խախտումների վերաբերյալ<sup>325</sup>:

<sup>319</sup> Մարդու իրավունքների ազգային ռազմավարության հարթակ, ՀՀ արդարադատության նախարարություն, <http://www.e-rights.am/?app=AppSiteDocument&companyDocumentCategoryId=9>:

<sup>320</sup> ՀՀ օրենքը «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին», 06.02.2002, վերջին փոփ. 01.03.2023, հոդված 47, <https://www.arlis.am/documentView.aspx?docid=175842>, ՀՀ արդարադատության նախարարի թիվ 126-Ն հրաման, 20.03.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140628>:

<sup>321</sup> ՀՀ առողջապահության նախարարի թիվ 3757-Ա հրաման, 28.12.2017, <https://www.moh.am/images/legal-106.pdf>:

<sup>322</sup> ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի թիվ 112-Ա/1 հրաման, 16.10.2018, <https://old.mlsa.am/wp-content/uploads/2017/05/112-A-1-hraman.pdf>:

<sup>323</sup> «Ինամբի հաստատություններում դիտորդական խմբի գործունեության դադարեցման վերաբերյալ համատեղ հայտարարություն», Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ, 31.05.2024, <https://dra.am/hy/articles/announcement/joint-announcement-on-the-termination-of-the-monitoring-group-in-care-institutions>:

<sup>324</sup> ՀՀ օրենքը «Սոցիալական աջակցության մասին», 24.10.2024, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=199657>:

<sup>325</sup> «Ինամբի հաստատություններում դիտորդական խմբի գործունեության դադարեցման վերաբերյալ համատեղ հայտարարություն», Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ, 31.05.2024:

### Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- ՀՀ կառավարությանը՝ ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ քայլեր ձեռնարկել քաղաքացիական հասարակության նպաստավոր միջավայրը բարելավելու ուղղությամբ:
- Պետական մարմիններին՝ լիարժեք և արդյունավետ կերպով օգտագործել խորհրդակցական մարմինների ներուժը, մասնավորապես՝ նիստեր կազմակերպել օրենքով նախատեսված պարբերականությամբ և հեռավար մասնակցության հնարավորություն ընձեռել, բարելավել նրանց թափանցիկությունը և ապահովել ավելի լայն լիազորություններ ու հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմներ:

## 3.11 Թվային իրավունքներ

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.5/7

Իրավական դաշտ՝ 4.9/7	Գործնական դաշտ՝ 4.0/7
-------------------------	--------------------------

Թվային իրավունքների պաշտպանությունը արտացոլված է խոսքի ազատության, մասնավոր կյանքի, տեղեկատվության ազատության և այլ իրավական կարգավորումներում: 2024 թվականին Ազգային ժողովը փոփոխություններ ընդունեց Զրեական օրենսգրքում և Զրեական դատավարության օրենսգրքում՝ հստակեցնելու կիբերհանցագործությունների շրջանակը: Բացի այդ, կառավարությունը ներկայացրեց և շահագրգիռ կողմերի հետ քննարկեց «Կիբերանվտանգության մասին» օրենքի նախագիծը, որն ուղղված է բարելավելու կիբեր միջադեպերի կանխարգելումը և դրանցից պաշտպանությունը:

Հսկողության նպատակներով տեխնոլոգիաների օգտագործումը պատշաճ կերպով կարգավորվում է գործող օրենսդրությամբ և սահմանափակված է նպատակների նեղ շրջանակի համար: Կառավարությունն առաջարկել է օրենսդրական փաթեթի նախագիծ, որը ներառում է փոփոխություններ «Ոստիկանության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» և այլ հարակից օրենքներում: Նախագծով նախատեսվում է ընդլայնել ոստիկանության կողմից տեսահսկման շրջանակը, ինչը ռիսկեր է պարունակում անհամաչափության և հսկողության նպատակների անորոշության առումով: Ի վերջո, կառավարությունը հետ կանչեց նախագիծը՝ պլանավորելով հետագա քննարկումներ և խնդրի փուլային լուծում: Ինչ վերաբերում է գործնական դաշտին, ՔՀԿ-ները հաղորդում են ինչպես պետական, այնպես էլ երկրից դուրս գործող դերակատարների կողմից լրտեսող ծրագրերի օգտագործման միջադեպերի մասին, քանի որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն ու լրագրողները թիրախավորվել են այնպիսի լրտեսող ծրագրերի կողմից, ինչպիսիք են Predator-ը և Pegasus-ը:

Սոցիալական ցանցերն ազատորեն գործում են Հայաստանում: Առկա են մի շարք թվային հարթակներ, որոնք նպաստում են պետական մարմինների կողմից տնօրինվող տեղեկատվության հասանելիությանը, ինչպես նաև մասնակցության և էլեկտրոնային եղանակով հարցումներ ու բողոքներ ներկայացնելու հնարավորություն ընձեռում:

Կառավարությունը շարունակում է իրականացնել 2021-2025 թվականների թվայնացման ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրը՝ քայլեր ձեռնարկելով մեդիա գրագիտության բարելավման, համացանցի հասանելիության ընդլայնման և թվայնացման ուղղությամբ: Բազմաթիվ ԹՀ-ներ ներգրավված են մեդիա կրթության և փաստերի ստուգման աշխատանքներում: Կայքերի ու սոցիալական ցանցերի արգելափակման դեպքերի բացակայության, մատչելի ինտերնետ կապի և ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թվականների հայեցակարգի ու գործողությունների ծրագրի իրականացման շնորհիվ Հայաստանը բարելավել է իր գնահատականը «Ազատությունը համացանցում» 2024 թվականի զեկույցում:

Թվային իրավունքների ոլորտի ընդհանուր գնահատականը 2023 թվականի համեմատ չի փոխվել: Կիբերանվտանգության մասին օրենսդրության ընդունումը և իրականացումը կօգնի հասցեագրել կիբերանվտանգության խնդիրները լուծելու և ապօրինի լրտեսող ծրագրերից պաշտպանություն ապահովելու վերաբերյալ առաջարկությունը, սակայն ներկայում այս առաջարկը դեռևս արդիական է մնում: Հսկման տեխնոլոգիաների իրավաչափ օգտագործման վերաբերյալ առաջարկությունը մնում է ուժի մեջ, իսկ տեսահսկման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությունը պետք է վերանայվի այնպես, որպեսզի բացառվեն անհամաչափ վերաբերմունքի և մարդու իրավունքների խախտումների ռիսկերը:

**Չափորոշիչ 1. Թվային իրավունքները պաշտպանված են, իսկ թվային տեխնոլոգիաները համապատասխանում են մարդու իրավունքների ստանդարտներին:**

Հայաստանի օրենսդրության մեջ թվային իրավունքների սահմանում չկա, սակայն մի շարք առնչվող պարտավորություններ են սահմանված՝ հիմնված միջազգային կոնվենցիաների և մարդու իրավունքներին առնչվող համապատասխան օրենքների վրա: Հայաստանը վավերացրել է «Կիբերհանցագործությունների մասին» կոնվենցիան, որը պետության հանդեպ որոշակի պարտականություններ է սահմանում՝ կապված կիբերտարածքում իրավունքների պաշտպանության հետ<sup>326</sup>: Ազգային օրենսդրությունը թվային իրավունքների պաշտպանության մեխանիզմներ է նախատեսում խոսքի ազատության, տեղեկատվության ազատության, մասնավոր կյանքի իրավունքի, անձնական տվյալների պաշտպանության, կիբերհանցագործությունների և այլ առնչվող հարցերի վերաբերյալ ՀՀ Սահմանադրության դրույթներում, տարբեր օրենքներում և այլ իրավական ակտերում: ՀՀ Սահմանադրությունը համաչափության և որոշակիության սկզբունքներ է նախատեսում իրավունքների և ազատությունների սահմանափակումների նկատմամբ, ինչպես նաև թույլ է տալիս որոշակի իրավունքներ և ազատություններ սահմանափակել արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում<sup>327</sup>:

Արհեստական բանականության վերաբերյալ հատուկ կարգավորում չկա: Քրեական օրենսգիրքը կիբերհանցագործությունների համար պատասխանատվություն է սահմանում

<sup>326</sup> Կոնվենցիա կիբեռհանցագործությունների մասին, Եվրոպայի խորհուրդ, 23.11.2001, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48028>:

<sup>327</sup> ՀՀ Սահմանադրություն, փոփ. 06.12.2015, հոդվածներ 76-79:



«Կիբերհանցագործությունների մասին» կոնվենցիայում հռչակված սկզբունքներին համապատասխան<sup>328</sup>: Ինչպես նշված է վերը՝ Ոլորտ 6-ում («խոսքի ազատություն»), ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելը, բռնություն գործադրելու հրապարակային կոչերը և բռնության հրապարակային արդարացումը կամ քարոզը, ներառյալ առցանց հարթակներում, ենթակա են քրեական պատասխանատվության: 2024 թվականի հոկտեմբերին Ազգային ժողովը փոփոխություններ ընդունեց Քրեական օրենսգրքում և Քրեական դատավարության օրենսգրքում, որոնք ուղղված են կիբերհանցագործությունների աճի դեմ պայքարին: Մասնավորապես, այս փոփոխություններով սահմանվեց կիբերհանցագործությունների ցանկը, որը ներառել է ժամանակի հետ ի հայտ եկած նոր խնդիրներ (օրինակ՝ ՏՀՏ-ի կիրառմամբ հեղինակային ու հարակից իրավունքները խախտելը, մանկական պոռնոգրաֆիա ստեղծելը և տարածելը և ատելության խոսք քարոզելը, համակարգչային ցանցի ներթափանցելը և տվյալները փոփոխելը, տվյալները ապօրինի որսալը կամ դրանց տիրանալը, համակարգչային կեղծիքը և այլն), ինչը հնարավորություն է տալիս ավելի հստակ բացահայտել դրանք միջպետական և ներպետական մակարդակով<sup>329</sup>:

Տվյալների քաղաքականության մշակման վերաբերյալ ԲԿԳ հանձնառության հիման վրա կառավարությունը «Կիբերանվտանգության մասին» օրենքի և հարակից օրենքների փոփոխությունների նախագիծ մշակեց՝ նպատակ ունենալով կիբերանվտանգ միջավայր ապահովել կենսական նշանակության ծառայությունների մատուցման համար կիրառվող տեղեկատվական համակարգերում և կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքներում: Նախագծով կարգավորվում է կենսական նշանակության ծառայությունների մատուցման համար կիրառվող տեղեկատվական համակարգերում և ենթակառուցվածքներում կիբերմիջադեպերի հայտնաբերման, դրանց մասին ծանուցման, կանխարգելման և լուծման, կիբեռանվտանգության ոլորտի պետական կառավարման մարմինների և դրանց լիազորությունների շրջանակի, այդ թվում՝ տվյալ օրենքի պահանջների պահպանման նկատմամբ հսկողության, վերահսկողության, կիբեռանվտանգության աուդիտի հետ կապված հարաբերությունները<sup>330</sup>: Ըստ ոլորտի փորձագետի՝ այս օրենքի ներդրումը կարևոր է երկրի համար կիբերանվտանգության ոլորտում առկա բացերը հասցեագրելու տեսանկյունից, սակայն անհրաժեշտ է ավելի հստակ սահմանել «հիմնական տեղեկատվական ենթակառուցվածքները» խոսքի ազատությանը անհարկի միջամտությունից ապահովագրելու համար (օրինակ՝ լրատվամիջոցների կազմակերպությունների դեպքում), ինչպես նաև լիազոր մարմինն ավելի հավասարակշռված լիազորություններ տրամադրել, քանի որ ընթացիկ նախագծում այն օժտված է «գեր լիազորություններով»<sup>331</sup>: 2024 թվականի նոյեմբերի դրությամբ նախագիծը դեռևս չէր հաստատվել:

<sup>328</sup> ՀՀ քրեական օրենսգրքի, 05.05.2021, գլուխ 38, հոդվածներ 359-365:

<sup>329</sup> ՀՀ օրենքը «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», 24.10.2024, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=199586>:

<sup>330</sup> «Կիբեռանվտանգության մասին», «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/6970/about>:

<sup>331</sup> Հարցազրույց, սեպտեմբեր 2024 թ.:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը համապատասխան կարգավորումներ է նախատեսում անձնական տվյալների օգտագործման և մշակման վերաբերյալ: Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունքը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ: Այս իրավունքի սահմանափակումները կարող են նախատեսվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ, երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով<sup>332</sup>:

Ըստ «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» օրենքի՝ Էլեկտրոնային հաղորդակցության հսկողությունը կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ այն անհետաձգելի դեպքերի, երբ հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչական գործողությունների կամ սպառնալ պետական անվտանգությանը: Նման դեպքում ԱԱԾ-ն կարող է հսկողություն իրականացնել մինչև 48 ժամվա ընթացքում՝ նախքան դատարանի որոշման տրամադրումը<sup>333</sup>: Քրեական դատավարության օրենսգրքում ևս սահմանված է, որ վարույթի ընթացքում անձի նամակագրությանը, հեռախոսային խոսակցություններին և հաղորդակցության այլ ձևերին միջամտելը կարող է իրականացվել բացառապես դատարանի որոշմամբ<sup>334</sup>: Սակայն եթե հիմքեր կան կասկածելու, որ անձը հանցագործություն է կատարել, ապա քննիչները կարող են տեղեկատվություն պահանջել տվյալ անձի հաղորդակցության վերաբերյալ՝ հսկող դատախազի հաստատմամբ<sup>335</sup>: Միևնույն ժամանակ, հսկողության արդյունքում ստացված նյութերի պահպանման և ոչնչացման հստակ և մանրամասն ընթացակարգերը բացակայում են, իսկ հսկողության համակարգի գործունեության նկատմամբ անկախ և արդյունավետ արտաքին հսկողության (ներառյալ հանրային վերահսկողության) մեխանիզմներ չկան<sup>336</sup>:

Իրավապահ մարմինների կողմից թվային տեխնոլոգիաների օգտագործումը կանոնակարգվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների համար տեխնիկական միջոցների օգտագործման վերաբերյալ դրույթներով, որոնք երաշխիքներ են պարունակում մասնավոր կյանքի իրավունքի խախտման դեմ: Կառավարության որոշման համաձայն՝ թույլատրվում է մշակել տեխնիկական, այդ թվում՝ ծրագրային միջոցներ, որոնք հատուկ նախատեսված են համակարգչային ցանցերում և համակարգերում պահվող տեղեկատվությունը կորզելու և ինտերնետային հաղորդակցության բոլոր ձևերի, ներառյալ տեքստի, ձայնային և մուլտիմեդիա բովանդակության գաղտնի վերահսկման, գաղտնալսման

<sup>332</sup> ՀՀ Սահմանադրություն, փոփ. 06.12.2015, հոդված 33:

<sup>333</sup> ՀՀ օրենքը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», 22.10.2007, հոդվածներ 32 և 34:

<sup>334</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, 30.06.2021, վերջին փոփ.՝ 11.07.2024, հոդված 26,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=195774>:

<sup>335</sup> Նույն տեղում, հոդված 232:

<sup>336</sup> Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների վերլուծություն. Մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք, Հայաստան, Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, Երևան, 2022 թ.:

և ձայնագրառման համար<sup>337</sup>: Ըստ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի՝ Նախատեսված դեպքերում և կարգով բոլոր օպերատորները և ծառայություն մատուցողները պարտավոր են ապահովել իրավապահ և ազգային անվտանգության աշխատակիցների մուտքը հաղորդակցության սարքավորումներին և նմանատիպ այլ սարքերին օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացմանն աջակցելու նպատակով<sup>338</sup>: Սակայն օրենքը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների համար պարտավորություն չի սահմանում հեռահաղորդակցության օպերատորներին նախապես (կամ անհետաձգելի դեպքերում՝ հետագայում) ներկայացնել միջոցառումը թույլատրող դատարանի որոշումը, ինչը մեծ ռիսկ է ստեղծում լիազորությունները չարաշահելու և անձանց հաղորդակցությանը չարտոնված կերպով միջամտելու առումով<sup>339</sup>:

2024 թվականին կառավարության կողմից հաստատվեց և Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունվեց օրենսդրական փաթեթի նախագիծ, ըստ որի՝ խանութները, սրճարանները, ռեստորանները և այլ ձեռնարկություններ իրենց տարածքի մուտքի մոտ և ամբողջ երկայնքով պետք է տեղադրեն բարձր որակի տեսահսկման համակարգեր՝ ոստիկանության համար ապահովելով ամենօրյա 24-ժամյա իրական ժամանակի ռեժիմով հասանելիություն այդ համակարգերին<sup>340</sup>: Տեղական և միջազգային ՔՅԿ-ները քննադատեցին նախագիծը անհամաչափության և մարդու իրավունքներին անհարկի միջամտության համար՝ նշելով տվյալների հավաքագրման նպատակների անորոշության, տվյալների իրավաչափ մշակման և անվտանգության երաշխիքների բացակայության, առանց համապատասխան կարգավորումներ ունենալով՝ արհեստական բանականության գործիքների օգտագործման ռիսկերի տեսանկյունից, ինչպես նաև մի շարք այլ խնդիրներ, որոնք ընդգծում են տեխնոլոգիաների կիրառմանը մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման բացակայությունը<sup>341</sup>: Հաշվի առնելով այս մտահոգությունները՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը հետ է կանչել նախագիծը՝ նախատեսելով խնդրի փուլային լուծման տարբերակ և շահագրգիռ կողմերի հետ հարցի շուրջ հետագա քննարկման պատրաստակամություն արտահայտելով<sup>342</sup>:

Գործնականում որոշ ՔՅԿ-ներ և փորձագետներ նշել են, որ չեն բացառում իրավապահների և ԱԱԾ-ի կողմից ապօրինի հսկողության հնարավորությունը<sup>343</sup>: Նախորդ տարիներին

<sup>337</sup> ՀՀ կառավարության թիվ 810-Ն որոշումը «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ (մշակված, ծրագրված, հարմարեցված) տեխնիկական միջոցների ցանկը հաստատելու մասին», 31.07.2008, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=45845>:

<sup>338</sup> ՀՀ օրենքը «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», 08.07.2005, վերջին փոփ. 07.12.2022, հոդված 50, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172158>:

<sup>339</sup> Մարդու իրավունքների վերոպական դատարանի վճիռների վերլուծություն. Մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք, Հայաստան, Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, Երևան, 2022 թ.:

<sup>340</sup> ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին, առաջին ընթերցում, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=74577>, ՀՀ օրենքը «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին, առաջին ընթերցում, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=74642>:

<sup>341</sup> «Դիրքորոշում «Ոստիկանության մասին» օրենքում եւ հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի վերաբերյալ. CyberHUB, dpHUB», CyberHUB, 22.08.2024, <https://cyberhub.am/hyRights/blog/2024/08/22/position-on-police-surveillance-law/>, 'Armenia: Surveillance Bill Threatens Rights' («Հայաստան. Վերահսկողության օրինագիծը վտանգավոր է իրավունքների տեսանկյունից»), Human Rights Watch, 31.10.2024, <https://www.hrw.org/news/2024/10/31/armenia-surveillance-bill-threatens-rights>

<sup>342</sup> Հայտարարություն, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն, 11.11.2024, <https://mia.gov.am/2024/11/11/հայտարարություն-41/>

<sup>343</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

արձանագրվել է ինչպես պետական, այնպես էլ երկրից դուրս գործող դերակատարների կողմից լրտեսող ծրագրերի օգտագործման մի քանի դեպք, և քաղաքացիական հասարակության մի քանի ներկայացուցիչներ և լրագրողներ հայտնվել են երկու տեսակի՝ Predator և Pegasus առաջադեմ լրտեսող ծրագրերի թիրախում<sup>344</sup>: Արձանագրվել են նաև ռուս հաքերների կողմից կայքերի, այդ թվում՝ կառավարության կայքերի կոտրման կամ ծառայության բաշխված մերժման (DDoS) հարձակումների մի շարք դեպքեր<sup>345</sup>:

Ըստ Freedom House կազմակերպության «Ազատությունը համացանցում» 2024 թվականի զեկույցի՝ Հայաստանը բարելավել է իր գնահատականը՝ 2023 թվականի 72 միավորից՝ 2024 թվականին 74 միավոր, իսկ համացանցի ազատության տեսանկյունից գնահատվել է որպես ազատ երկիր: Ի թիվս այլ դրական զարգացումների, զեկույցում նշվում են կայքերի կամ սոցիալական մեդիա հարթակների արգելափակման դեպքերի բացակայությունը, մատչելի ինտերնետ կապը և ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թվականների հայեցակարգի և գործողությունների ծրագրի իրականացումը: Չեկույցում նշվում են առցանց միջավայրի հետ կապված մի քանի խնդրահարույց հարցեր, այդ թվում՝ ինչպես իշխանամետ, այնպես էլ երրորդ կողմի դերակատարների կողմից տարածվող մեծածավալ ապատեղեկատվությունը, առցանց գործունեության համար ֆիզիկական անձանց բերման ենթարկելու կամ կալանավորման դեպքերը, ինչպիսին էր, օրինակ, խուլիգանության հիմքով Antfake.am-ի լրագրողների կալանավորումը (տե՛ս Ոլորտ 6՝ «Խոսքի ազատություն») և պետական մարմինների կողմից Էլեկտրոնային հաղորդակցության հսկողությունը ԱԱԾ-ի օրինական լիազորությունների և ազգային անվտանգությանը անմիջական վտանգ սպառնալու դեպքում առանց դատարանի որոշման մինչև 48 ժամ հսկողության հնարավորության համատեքստում<sup>346</sup>:

Հայաստանում սոցիալական ցանցերն ազատորեն գործում են: Այս ոլորտում հատուկ իրավակարգավորումներ չկան, որոնք քաղաքացիներին թույլ կտային սոցիալական ցանցերում իրենց իրավունքների խախտման դեպքում դիմել պետության պաշտպանությանը:

## Չափորոշիչ 2. Պետությունը պայմաններ է ստեղծում թվային իրավունքների իրազման համար:

Ինչպես նշվեց վերևում, թվային իրավունքներին վերաբերող իրավական դաշտը կարգավորվում է տարբեր առնչվող օրենքներով: 2021-2025 թթ. Հայաստանի թվայնացման ռազմավարությունը և ռազմավարության միջոցառումների ծրագիրը մի շարք միջոցառումներ է նախատեսում ՀՀ կառավարության, տնտեսության և հասարակության թվային փոխակերպման ուղղությամբ: Այդ միջոցառումները ներառում են նորարարական տեխնոլոգիաների, կիրառական տեխնոլոգիաների, տվյալների քաղաքականության, Էլեկտրոնային ծառայությունների և Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում և զարգացում, թվայնացման գործընթացների համակարգում, միասնական ստանդարտների և թվայնացված

<sup>344</sup> «Թվային սպառնալիքների համայնապատկերը. Հայաստան», Internews, CyberHUB, հոկտեմբեր 2023 թ., [https://mdi.am/wp-content/uploads/2024/01/Armenia-Digital-Threat-Landscape-Report\\_Designed-ARM.pdf](https://mdi.am/wp-content/uploads/2024/01/Armenia-Digital-Threat-Landscape-Report_Designed-ARM.pdf):

<sup>345</sup> «Ռուսաստանյան հաքերային խմբավորումը թիրախավորել է Հայաստանը», CyberHUB, 20.06.2024, <https://cyberhub.am/hy/blog/2024/06/20/russian-hacking-group-targets-armenia-hy/>, «Cyber Volk-ը Հայաստանի կառավարությունից պահանջել է 2.5 միլիոն դոլար», CyberHUB, 22.09.2024, <https://cyberhub.am/hy/blog/2024/09/22/russian-hacking-team-cyber-volk-threatens-armenian-government/>:

<sup>346</sup> Freedom on the Net 2024: Armenia (Ազատությունը համացանցում 2024. Հայաստան), Freedom House, <https://freedomhouse.org/country/armenia/freedom-net/2024>:

միջավայրի ստեղծում, տնտեսության մասնավոր հատվածում թվային տեխնոլոգիաների կիրառմանը նպաստող նախաձեռնությունների և հասարակության կողմից էլեկտրոնային գործիքների օգտագործումը խթանող ծրագրերի մշակում և իրականացում, ինչպես նաև անձնական տվյալների և հեղինակային իրավունքների պաշտպանության բարելավում<sup>347</sup>: 2024 թվականին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը հրապարակեց ռազմավարության՝ 2023 թվականին իրականացված գործողությունների կատարողական հաշվետվությունը<sup>348</sup>: Այս գործողությունների շարքում էին կիրառված անվտանգության և հանրային տեղեկությունների մասին օրենքների մշակումը, որոնց շուրջ քննարկումներ իրականացվեցին ՔՀԿ-ների հետ:

Ներկայումս համացանցը լայնորեն հասանելի և մատչելի է Հայաստանում, հատկապես բջջային կապի օգտատերերի համար, քանի որ բնակավայրերի մեծ մասը (99,5%) ունի ինտերնետ հասանելիություն բջջային օպերատորների միջոցով, իսկ լայնաշերտ (ֆիքսված) ինտերնետ առկա է բնակավայրերի 72,4%-ում (2023 թվականի ավարտի դրությամբ)՝ ի տարբերություն նախորդ տարվա 69,7%-ի<sup>349</sup>:

Հայաստանում գործում են մի շարք թվային հարթակներ, որոնք նպաստում են պետական մարմինների կողմից տնօրինվող տեղեկատվության հասանելիությանը, մասնակցության և էլեկտրոնային եղանակով բողոքներ ներկայացնելու հնարավորություններ ընձեռում: Այս հարթակները ներառում են e-register.am-ը, որը տեղեկատվություն է տրամադրում գրանցման գործընթացի և գրանցված իրավաբանական անձանց մասին, ինչպես նաև առցանց գրանցման հնարավորություն տալիս (առևտրային ընկերությունների դեպքում), e-gov.am-ը, որը մասնավորապես տեղեկատվություն է տրամադրում կառավարության որոշումների, հաշվետվությունների, գրանցամատյանների վերաբերյալ, իրավական տեղեկատվական համակարգը՝ arlis.am-ը, և հանրագրերի միասնական հարթակ e-petition.am-ը (հայտարարագիր.հայ): 2024 թվականին գործարկվել է նաև «Ես եմ» նույնականացման ազգային նոր հարթակը, որն ապահովում է առցանց մուտք դեպի պետական ծառայություններ նույնականացման գործընթացը հաջողությամբ անցնելուց հետո<sup>350</sup>: Այս հարթակների օգտագործման հետ կապված հիմնական խնդիրներից է դրանց վերաբերյալ հանրային իրազեկվածության պակասը: Բացի այդ, որոշ հարթակներից օգտվելու համար (օրինակ՝ հայտարարագիր.հայ) անհրաժեշտ է ունենալ նույնականացման քարտ և էլեկտրոնային ստորագրություն, ինչը բնակչության փոքրամասնությանն է հասանելի: Փորձագետները գտնում են, որ բազմաբնույթ ցրված հարթակների փոխարեն անհրաժեշտ է համապարփակ էլեկտրոնային կառավարման համակարգ ստեղծել<sup>351</sup>:

<sup>347</sup> ՀՀ կառավարության թիվ 183-Լ որոշումը «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին», 11.02.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149957>:

<sup>348</sup> Թվայնացման ռազմավարության առաջընթացի հաշվետվություն, 01.04.2024, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, <https://hightech.gov.am/hy/tegekatvakan-kentron/financial/reports/report411758>:

<sup>349</sup> Վերլուծական տեղեկանք Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային ամրակցված (ֆիքսված) կապի հասանելիության (ներթափանցելիության) ապահովման աշխատանքների վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, 2024 թ., <https://www.psrc.am/uploads/files/Էլեկտրոնային%20հաղորդակցություն/Տանցերի%20հասանելիություն/Ardir.pdf>:

<sup>350</sup> «Հայաստանում տեղի է ունեցել աշխատանք գտնելու եւ առաջարկելու «e-work.am» պետական հարթակի, ինչպես նաև «Ես եմ» ազգային նույնականացման հարթակի պաշտոնական շնորհանդեսը», 08.05.2024, EU4Digital, <https://eufordigital.eu/hy/armenia-launches-state-job-and-id-platforms-e-work-am-and-yes-em/>:

<sup>351</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2024 թ.:

Հայաստանի օրենսդրությամբ ցանցի չեզոքության սկզբունքը չի կարգավորվում, թեև ազգային լիազոր մարմինը՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, մի քանի հայտարարություն է արել՝ նշելով, որ տեխնոլոգիաների չեզոքությունը կարգավորման կարևոր սկզբունք է<sup>352</sup>: Հանձնաժողովի որոշման համաձայն՝ եթե հեռահաղորդակցության օպերատորները և ծառայություններ մատուցողները համացանցում չեն սատարում որոշակի արձանագրություններ կամ առավելություն են տալիս որևէ արձանագրությանը, ապա պետք է այդ մասին հրապարակեն և տեղեկացնեն բաժանորդներին: Որոշմամբ ամրագրվում է նաև, որ ծառայությունների մատուցման սակագները և պայմանները պետք է ամբողջապես հասանելի լինեն հանրությանը՝ բացառելով դրանց ներկայացման նկատմամբ որևէ խտրական կամ հայեցողական մոտեցում<sup>353</sup>:

ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս պաշտպանել խախտված իրավունքները ինչպես անցանց, այնպես էլ առցանց միջավայրում, որի համար անհրաժեշտ է հայց, բողոք կամ դիմում ներկայացնել դատարան, իրավապահ մարմիններին, պատասխանողի վերադասին կամ մասնագիտացված հաստատություններ, օրինակ՝ ԱՏՊԳ կամ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ: Ըստ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի՝ եթե որևէ մեկը համարում է, որ իր անձնական տվյալները մշակվել են օրենքի պահանջների կամ իր իրավունքների և ազատությունների խախտմամբ, կարող է դիմել անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին կամ դատարան և վնասի հատուցում պահանջել<sup>354</sup>:

ԶԻԿ-ների կողմից իրականացվում են փաստերի ստուգման մի շարք նախաձեռնություններ, որոնք նպատակ ունեն նվազեցնել կեղծ լուրերի տարածումը և հանրությանը իրազեկել ապատեղեկատվության բացահայտման միջոցների մասին<sup>355</sup>: 2024 թվականի դրական զարգացումն այն էր, որ ՍիվիլՆեթը՝ հայկական լրատվական կազմակերպությունը, միացել է Meta-ի երրորդ կողմի փաստերի ստուգման ծրագրին և ներկայումս իրականացնում է Facebook-ի և Instagram-ի հայալեզու բովանդակության փաստերի ստուգումը<sup>356</sup>: 2021 թվականից սկսած ՍիվիլՆեթը ամենօրյա ռեժիմով հրապարակում է փաստերի ստուգման նորություններ, իսկ Meta-ի հետ համագործակցությունը հնարավորություն է ընձեռել ամսական մոտ 15-20 գրառում առանձնացնել և Meta հարթակներում պիտակավորել որպես ապատեղեկատվություն և/կամ կեղծ լուր<sup>357</sup>: ԶԻԿ-ները շարունակում են նաև թվային իրավունքների վերաբերյալ կրթության և մեդիա գրագիտության նախաձեռնությունները՝ նպատակ ունենալով լրացնել այս ոլորտում առկա բացը, ինչը հատկապես կարևոր է

<sup>352</sup> «Թվային իրավունքները և դրանց կարևորությունը ինֆորմացիոն հասարակության համար», Դավիթ Սանդուխչյան, «Թվային իրավունքների հետ կապված մարտահրավերները Հայաստանում», Սամվել Մարտիրոսյան, Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ, Երևան 2021, [https://mdi.am/wp-content/uploads/2021/10/digital\\_human\\_rights\\_research\\_and\\_articles.pdf](https://mdi.am/wp-content/uploads/2021/10/digital_human_rights_research_and_articles.pdf):

<sup>353</sup> ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի թիվ 471-Ն որոշումը տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագների և պայմանների հրապարակման կարգը հաստատելու մասին», 03.09.2008, վերջին փոփ. 25.07.2012, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77489>:

<sup>354</sup> ՀՀ օրենքը «Անձնական տվյալների պաշտպանության մասին», 18.05.2015, հոդված 17:

<sup>355</sup> Տե՛ս, օրինակ՝ Փաստերի ստուգման հարթակ, Իրազեկ քաղաքացիների միավորում, <https://fip.am/>, Փաստերի ռադար, Հանրային լրագրության ակումբ, <https://pic.am/landing/>, Ստուգված է, media.am, <https://media.am/hy/category/verified/>, InFact/Փաստացի «Հետք» ՀԿ նախաձեռնած ֆեյսբուքյան խումբ, <https://www.facebook.com/groups/pastatsi/>:

<sup>356</sup> «ՍիվիլՆեթը և Meta-ն համագործակցություն են սկսում փաստերի ստուգման ասպարեզում», 02.07.2024, CivilNet, <https://www.civilnet.am/news/784123/սիվիլնեթը-և-meta-ն-համագործակցություն-են-սկսում-փաստերի-ստուգման-ասպարեզում/>:

<sup>357</sup> ՍիվիլՆեթի ներկայացուցչի հետ տեղեկատվության ճշտում, հոկտեմբեր 2024 թ., CivilNetCheck, CivilNet, <https://www.civilnet.am/civilnetcheck/>:

լայնածավալ ապատեղեկատվության համատեքստում: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը համագործակցում է ՔՀԿ-ների հետ՝ մեդիագրագիտության խթանման և դպրոցներում «Թվային գրագիտության ու համակարգչային գիտության» նոր առարկան ներդնելու հարցում<sup>358</sup>: Սակայն կառավարության կողմից այս ոլորտում գործունեության ավելի կազմակերպված համակարգման անհրաժեշտություն կա<sup>359</sup>:

### Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- ՀՀ կառավարությանը՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել կիրքերանվտանգությունը բարելավելու և անօրինական լրտեսական ծրագրերից պաշտպանություն ապահովելու ուղղությամբ:
- ՀՀ կառավարությանը և Ազգային ժողովին՝ ապահովել, որ նոր իրավական կարգավորումները համապատասխանեն հսկողության նեղ և համաչափ շրջանակներին:
- Իրավապահ մարմիններին՝ ապահովել հսկողության տեխնոլոգիաների իրավաչափ օգտագործումը՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Ոստիկանության մասին» օրենքներով սահմանված պահանջներին համապատասխան, իսկ ոչ իրավաչափ հսկողության դեպքերում իրականացնել թափանցիկ և արդյունավետ հետաքննություն:

<sup>358</sup> Հարցազրույց, սեպտեմբեր 2024 թ., Հայաստանի մեդիայի զարգացման ծրագիր, Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, <https://mediainitiatives.am/projects/հայաստանի-մեդիայի-զարգացման-ծրագիր/>:

<sup>359</sup> Մեդիագրագիտությունը Հայաստանի դպրոցներում, Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, մարտ 2024 թ., <https://mediainitiatives.am/wp-content/uploads/2024/03/Մեդիագրագիտությունը-դպրոցում.-հետազոտություն-1.docx>:

# IV. ԱՌԱՋՆԱԶՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր առմամբ, 2024 թվականին Հայաստանի ՔՀԿ միջավայրում 2023 թվականի համեմատ էական փոփոխություն չի եղել, և երկրի ընդհանուր գնահատականը մնացել է 4,8 միավոր: Այդուհանդերձ, առանձին ոլորտներում որոշակի զարգացումներ են արձանագրվել, որոնք մասնավորապես ազդել են հավաքների ազատության և խոսքի ազատության ոլորտների գնահատականների վրա (հավաքների ազատության ոլորտի գնահատականը 2023 թվականի 5,3 միավորից նվազեց` 2024 թվականին դառնալով 5,2 միավոր, իսկ խոսքի ազատության ոլորտի գնահատականը 4,7-ից դարձավ 4,8 միավոր):

Իրավական դաշտում 2024 թվականին արձանագրված հիմնական դրական միտումները կապված են ապատեղեկատվության դեմ պայքարի, խտրականության դեմ միջոցառումների, բաց տվյալների քաղաքականության, կիբերանվտանգության միջոցառումների և օրենսդրության ընդունման վաղ փուլերում մասնակցության հնարավորությունների բարելավմանն ուղղված օրենսդրության մշակման քայլերի հետ: Սակայն այս նախաձեռնությունների մեծ մասը դեռևս նախագծի կարգավիճակ ունեն, և համապատասխան իրավական ակտերի ընդունումը սպասվում է 2024 թվականի ավարտին կամ 2025 թվականին: «Ոստիկանության գվարդիայի մասին» նոր օրենքը և հարակից օրենսդրական փոփոխությունները պոտենցիալ հիմք են ստեղծում հավաքների ազատության հետ կապված գործնական խնդիրների լուծման համար: Խթանող հարկային օրենսդրության բացակայությունը, Ազգային ժողովի կողմից հանրային քննարկումների պարտադիր իրականացման համար իրավական նախադրյալների պակասը և ՔՀԿ ոլորտի վերաբերյալ կառավարության ռազմավարության կամ հայեցակարգի բացակայությունը շարունակում են մնալ «ՔՀԿ չափիչ» իրավական դաշտի հիմնական խնդիրները:

Ինչ վերաբերում է գործնական դաշտին, ապա այստեղ հիմնական ձեռքբերումներն են քաղաքականության որոշ ոլորտներում և առանձին ՏԻՄ-երի կողմից համագործակցության և մասնակցային մոտեցումների բարելավումը, ինչպես նաև մասնակցության, հարկային խթանների, մեդիա ոլորտի բարեփոխումների, դատարաններում հանրային շահերի պաշտպանության և մի շարք այլ հարցերի շուրջ պետություն-ՔՀԿ երկխոսության մեկնարկը կամ շարունակությունը: Հավաքների ժամանակ ոստիկանության կողմից խաղաղ ցուցարարների նկատմամբ դրսևորած բռնությունը և ոչ իրավաչափ վերաբերմունքը, մասնակցային մեխանիզմների գործնական կիրառման և տեղեկատվության մատչելիության ապահովման բացերը, հսկողության գործունեության վերահսկման կամ հաշվետվողականության մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև ընտրովի և անբավարար պետական պաշտպանությունը դեռևս այն հիմնական խնդիրներն են, որոնց լուծման համար ավելի գործուն քայլեր են անհրաժեշտ:

Որոշ առաջընթաց է արձանագրվել «ՔՀԿ չափիչ» 2023 թվականի զեկույցի` խոսքի ազատության և թվային իրավունքների ոլորտների առաջարկությունների առումով: Այսպես, խոսքի ազատության ոլորտում, ի տարբերություն նախորդ տարվա, կառավարությունը պահպանել է մեդիա բարեփոխումները մասնակցային մոտեցմամբ մշակելու վերաբերյալ իր հանձնառությունը, իսկ ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգի ընդունումը



նպաստել է մեղիա գրագիտության և ապատեղեկատվության դեմ պայքարի ուղղությամբ կառավարության և ՔՀԿ-ների համատեղ ջանքերի իրականացմանը:

Թվային իրավունքների ոլորտում կիբերանվտանգության ապահովմանն ուղղված օրենսդրական նախաձեռնությունը կօգնի բարելավել կիբերանվտանգությունը և պաշտպանվել ապօրինի լրտեսող ծրագրերից, ինչն առաջարկվում էր «ՔՀԿ չափիչ» 2023 թվականի զեկույցում: Սակայն այս օրենսդրական փաթեթի ընդունումը և դրա իրականացումը դեռևս ապագայի հարց է:

## Հաշվի առնելով վերոնշյալը՝ 11 ոլորտներում ներկայացված 36 առաջարկությունների համագումարից որպես առաջնային են առանձնացվել հետևյալ յոթը առաջարկությունները.

1. ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ սահմանել «դրամաշնորհ» հասկացությունը՝ հաշվի առնելով միջազգային առաջատար փորձը և խորհրդակցելով ՔՀԿ-ների հետ, և դրամաշնորհային ծրագրերը և ոչ առևտրային գործունեության այլ տեսակները չհամարել ձեռնարկատիրական գործունեություն:
2. Իրավապահ մարմիններին՝ պատշաճ ու թափանցիկ հետաքննությունն ապահովել և համապատասխան պատժամիջոցներ կիրառել այն ոստիկանների նկատմամբ, որոնք չարաշահել են իրենց լիազորությունները հավաքների ժամանակ ոստիկանության գործունեությունն իրականացնելիս, իսկ քաղաքական ղեկավարությանը՝ մինչև հետաքննության պաշտոնական արդյունքները գնահատականներ չտալ ոստիկանության գործողությունների վերաբերյալ:
3. ՀՀ ազգային ժողովին՝ մեխանիզմներ նախատեսել ԱԺ պատգամավորների հեղինակած նախագծերի պարտադիր հանրային քննարկումներն իրականացնելու և իրավական նախագծերի նախնական գաղափարների քննարկման, ինչպես նաև կառավարության կողմից ներկայացված նախագծերի վերանայման ավարտական փուլերում ՔՀԿ-ներին ներգրավելու (այդ թվում՝ մշտական հանձնաժողովների մակարդակով մասնակցության) համար:
4. ՀՀ ազգային ժողովին՝ օրենսդրական փոփոխություններ իրականացնել՝ ՔՀԿ-ներին հնարավորություն տալով հանրային շահերը ներկայացնել դատարանում՝ իրենց նպատակների շրջանակում, և ապահովել, որ նրանք կարողանան գործնականում օգտվել այս իրավունքից՝ մեղմելով չափազանց բարդ պահանջները և առնչվող վարչարարական ընթացակարգերը:
5. ՀՀ կառավարությանը՝ ապահովել, որ հսկողության գործողությունների վերաբերյալ օրենսդրական կարգավորումները մշակվեն միջազգային իրավունքին համապատասխան և ՔՀԿ-ների հետ քննարկմամբ, ինչպես նաև պահպանվեն գործնականում խախտումների դեպքում կիրառելով թափանցիկ և հաշվետու միջոցառումներ:
6. Պետությանը՝ համարժեք պաշտպանությունն ապահովել ՔՀԿ-ների համար, այդ թվում՝ խտրականության դեմ պայքարի մասին օրենքի ընդունման և համապատասխան

մարմնի ստեղծման, Եվրոպայի խորհրդի կողմից 2024 թվականի ապրիլին ընդունված հանձնարարականների հիման վրա SLAPP հայցերի դեմ օրենսդրական ու գործնական միջոցառումների իրականացման, երրորդ անձանց կողմից թիրախավորված ՔՀԿ-ներին աջակցող հրապարակային հայտարարությունների ներկայացման և ողջամիտ ժամկետում ՔՀԿ-ների ու ակտիվիստների դեմ հարձակումների պատշաճ քննության միջոցով:

7. ՀՀ կառավարությանը (մասնավորապես՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը), ինչպես նաև Ազգային ժողովին՝ ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ստեղծել, որը կօգնի բարելավել տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ անհատների և տնտեսվարող սուբյեկտների նվիրատվություններից և ուղղակի ձեռնարկատիրական գործունեությունից ֆինանսավորում և բնաիրային աջակցություն հայթայթելու հնարավորությունները:

# V. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«ԲՀԿ չափիչը» աջակցում է Արևելյան գործընկերության (ԱԷԳ) երկրներում գործող ԲՀԿ-ների միջավայրի կանոնավոր ու հետևողական մոնիտորինգի իրականացմանը: Այն բաղկացած է 11 տարբեր ոլորտների չափորոշիչներից և ցուցանիշներից, որոնք օգտագործվում են իրավական և գործնական միջավայրի գնահատման նպատակով: Գործիքի մշակման հիմքում են միջազգային չափորոշիչները և ոլորտի առաջատար փորձը: «ԲՀԿ չափիչը» մշակվել է ECNL-ի և ԱԷԳ վեց երկրների գործընկեր կազմակերպությունների փորձագետների հիմնական խմբի կողմից:

Երկրի գործընկեր կազմակերպությունները փորձագիտական խմբի անդամ մյուս ԲՀԿ-ների հետ միասին իրականացրել են մոնիտորինգի գործընթացը և մշակել նկարագրական զեկույցը: Յուրաքանչյուր երկրում ստեղծվել է նաև խորհրդատվական խորհուրդ, որը կազմված է հիմնական շահագրգիռ կողմերը ներկայացնող տեղացի փորձագետներից: Խորհրդի անդամներն ունեն երկու հիմնական խնդիր՝ վերանայել նկարագրական զեկույցը և զեկույցի տեքստի հիման վրա յուրաքանչյուր չափորոշիչի համար գնահատական սահմանել:

Չեկույցը ներառում է 2024 թվականի հունվարից նոյեմբեր ընկած ժամանակահատվածը:

## Մոնիտորինգի գործընթացը

Մոնիտորինգն իրականացվել է որակական մեթոդներով, այն է՝ փաստաթղթերի վերլուծություն, հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ: Փաստաթղթերի վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են համապատասխան իրավական ակտերը, ոլորտային զեկույցները, լրատվամիջոցների և ԲՀԿ-ների հրապարակումները, պետական մարմիններին ուղարկված հարցումների պատասխանները: Չեկույցի մշակման ընթացքում քննարկումներ են կազմակերպվել «ԲՀԿ չափիչ» ծրագրի փորձագիտական խմբի անդամների հետ: Տասնչորս հարցազրույցներ են իրականացվել փորձագետների, պետական մարմինների և ԲՀԿ ներկայացուցիչների հետ, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն է հավաքագրվել ԲՀԿ և պետական մարմինների 12 ներկայացուցիչից:

